

ԼԵՎՈՆ ԽԱԶԻԿՅԱՆ

ԱՐՏԱԶԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾՈՐԾՈՐԻ ԴՊՐՈՑԸ

Պատմական Հայաստանի վասպուրական նահանգի Արտազ գավառը, որ հնում կոչվել է Շափարշավան գավառ, իսկ միջնադարում՝ Մակու կամ Առաքելոց երկիր, կարևոր դեր է կատարել հայոց տնտեսական, քաղաքական և եկեղեցական պատմության մեջ: Հնագույն ժամանակներից ի վեր այդ շրջանով է անցել Փոքր Ասիան Հայաստանի, Ատրպատականի և Իրանի հետ շաղկապող մայրուղին. Արշակ Բ արքան այստեղ է կառուցել Արշակավան քաղաքը, փորձելով այն դարձնել թագավորական իշխանության հենարանը՝ կենտրոնախույս ուժերի դեմ մղած իր պայքարում. այստեղ է գտնվում Ավարայրի դաշտն ու Տղմուտ դեղը, տեղանուններ, որ հավետ կենդանի են հայ ժողովրդի հիշողության մեջ՝ շաղկապված լինելով 451 թվականին Պարսից զերազանց ուժերի դեմ հայրենիքի ազատության համար մաքառած հերոսների փառքին: Նույն այս բնաշխարհի հետ են աղերսվում նաև հայ եկեղեցու առաքելական սկզբնավորության մասին հյուսված հնարույր ավանդությունները և այլն:

Չնայած վերոհիշյալ հանդամանքներին, Արտազի պատմությունը հատուկ ուսումնասիրության նյութ չի դարձել, առաջին հերթին պատմական սկզբնաղբյուրների աղքատիկ լինելու հետևանքով:

XIII դարի կեսերին ճոխացված ու գունազարգված վկայաբանական երկերի մեջ Արտազի մասին առկա տվյալներից կարելի է հետևցնել, որ այդ գավառը մեր թվարկության առաջին դարերին պատկանել է Արշակունիներին, մաս կազմելով արքունի տան՝ Ոստանի: Մի այլ վարկածով այն եղել է Ամատունյաց նախարարների բնօրրանը¹: Թերևս ի նպաստ այս կարծիքի Թովմա Արծրունի պատմիչը վկայում է, որ IX դարի վերջերին Ամատունյաց տան եպիսկոպոս Գրիգորը իր աթոռը փոխադրել է Արտազ գավառի այն վայրը, ուր Թադևոս առաքյալի գերեզմանն է նշվել. «նստէր ի հանգստի սրբոյն Թադէոսի առաքելոյ յԱրդդական գաւառի»²:

Այլ տեղեկություններ չկան, ուստի սկզբնաղբյուրները հնարավորություն չեն բնձնում հետևելու Հայոց հնամենի այս բնաշխարհի կապակցված պատմությանը. ի՞նչ անցուղարձեր են տեղի ունեցել այստեղ, ո՞վ է իշխել, ո՞ւմ ենթարկվել և այլն:

¹ Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, СПб. 1908, էջ 304, 321.

² Թովմայի վարդապետի Արժունոյ Պատմութիւն տանն Արծրունեաց, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 259:

Այսպես՝ մինչև 1247 թվականը, հոր Կոստանդին Բարձրերդցի կաթողիկոսի (1221—1267) հատուկ կոնդակով Քաղեսոս առաքյալի անվամբ սրբազործված այս վայրը դառնում է Հայոց եկեղեցու նորաստեղծ մի թեմի կենտրոն, Առաքելոց աթոռի առաջնորդությունը ժառանգած գերդաստանի հոգևոր և աշխարհիկ գործիչներին հաջողվում է Արտազի շրջանը դարձնել իրենց տիրույթը. այսպիսով, դարավոր ընդմիջումից հետո, այստեղ վերահաստատվում է հայկական իշխանությունը, որ գոյատևում է շուրջ մեկուկես հարյուրամյակ (մինչև 1426 թվականը), զգալի դեր կատարելով օտար լծի տակ եկեղեցվող ժողովրդի քաղաքական ու մշակութային կյանքում:

Մեր այս հոգվածով փորձելու ենք համախմբել մեզ մատչելի ցաքուցրիվ աղյուսները, որոնք նպաստում են մոնղոլական տիրապետության ժանր տարիներին ստեղծված հայկական այս իշխանության պատմությունն ուսումնասիրելու գործին: Մեր նպատակի իրազորման ճանապարհին հաղթաճարվելու են դժվարություններ, կապված ինչպես անհրաժեշտ նյութի պակասի, այնպես էլ ժամանակաշրջանի քաղաքական պայմաններին առնչվող մի շարք հարցերի ոչ բավարար մշակված լինելու հետ: Ըստ այդմ հարկադրված ենք էղել երբեմն բուն նյութից զգալի շեղումներ կատարել՝ քննարկվող ժամանակաշրջանի պատմության կնճռոտ հարցերը լուսարանելու նպատակով:

Շարադրանքը բաժանել ենք երկու մասի՝ առաջինը նվիրելով Արտազի հայկական իշխանության պատմությանը, երկրորդը՝ նրա մշակութային կենտրոն Ծործորի վանքին:

I

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՏԱՋԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

(XIII—XV դարեր)

1. Հայ-մոնղոլական հաւաքերու քյուններ XIII դարի կեսերին.—Երբ մոնղոլներն սկսեցին իրենց աշխարհավեր արշավանքները և քայլ առ քայլ առաջ շարժվելով նվաճեցին Միջին Ասիայի, Ռուսաստանի ու Մերձավոր Արևելքի բարերեր երկրամասերը, նրանց գավանանքի և առաջխաղացման քաղաքական դրդապատճառների մասին ծայր առան ու սփռվեցին անըստույգ, մտացածին լուրեր: Ասում էին, որ իբր այս նոր աշխարհակալները «մոզք են և քրիստոնեայր հաւատով, և նշանադործք, և եկեալ են ի վրէժ-խընդրութիւն քրիստոնէից, որ ի բռնութենէն տաճկաց: Եւ ասէին, թէ ունին եկեղեցի վրանեայ և խաշ սքանչելագործ» և այլն³:

Մահմեդական իշխողների բռնություններին ենթակա քրիստոնյա ժողովուրդների լայն շրջաններում, ինչպես նաև արևմտաեվրոպական մի շարք երկրներում, ուր խաչակրաց նոր արշավանքների ծրագրեր էին մշակվում, մոնղոլների մասին այս «սուտ համբավը» (Վ. Գանձակեցի) պարարտ հող գտնելով՝ տարածվում էր անարգել: Մոնղոլներին համարում էին այն ժողովուրդը, որոնց թագավոր-մոզքերը երկնառաք պատգամով Արևելքից Բեթղե-

3 Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Վ. Ա. Մելիք-Յանջանյանի, Երևան, 1961, էջ 202:

հեմ էին եկել նորածին աստվածսրդուն՝ Հիսուս Քրիստոսին երկրպագելու⁴։ Կրկին շրջանառության մեջ էր գրվել մեկդարյա հնություն ունեցող լեգենդը Հեռավոր արևելքում Հովհաննես երեցի կողմից հիմնադրված քրիստոնյա հզոր պետության մասին։ Ինչպես իրավացիորեն նշել են ուսումնասիրողները, այս լեգենդի հիմքում ընկած էր այն իրողությունը, որ ասորի նեստորականների ծավալուն միսիոներական գործունեությունը շոշափելի արդյունք էր տվել կենտրոնական Ասիայում ստեղծված Կարակիտայների պետության (Բալասագուն մայրաքաղաքով) սահմաններում։ Այս նորելուկ պետության հիմնադիր Ելույ Դաշին (մ.հ. 1143 թ.) հենվում էր նեստորականների վրա, իսկ նրա որդին, որ քրիստոնեական Իլյա անունն էր ստացել, թագավորելով 1151—1161 թթ., կարողացավ պահպանել իր հոր ստեղծած ընդարձակածավալ պետության քաղաքական կշիռն ու հեղինակությունը. հայր և որդի այս դուրխանների գործունեության շուրջ արևմտյան երկրներում տարածված լուրերի հիման վրա հյուսվեցին հեռավոր արևելքում գոյություն ունեցող քրիստոնեական մեծ մի պետության մասին շրջանառության մեջ գրված առասպելները⁵։

Անհրաժեշտ է այստեղ ավելացնել, որ հեռավոր արևելյան այդ երկրամասերում սիրիացի նեստորականների հետ միասին, մանավանդ XIII դարի կեսերին, եռանդուն գործունեություն էին ծավալել նաև հայոց եկեղեցու պաշտոնյաները, որոնց դերը սովերի տակ է մնացել։ Մոնղոլ տիրակալների արքունիքներում հայ միսիոներների և քաղաքական գործիչների կատարած դերը բացահայտելու համար հատուկ ու մանրակրկիտ ուսումնասիրություն պետք է կատարել, որ դուրս է մեր նպատակներից։ Հարկ է նշել, սակայն, որ XIII դարի 40—50-ական թվականներին, երբ մոնղոլական հորդանների հետագա արշավանքների ուղիներն էին կանխորոշվում, հատկապես աշխույժ գործունեություն ծավալեցին հայ դիվանագետներն ու քարոզիչները, անպարտելի համարվող նոր աշխարհակալների գործությունը հայ ժողովրդի, մասնավորապես Կիլիկյան հայկական թագավորության առջև ծառացած քաղաքական խնդիրներին ի նպաստ օգտագործելու հույսով։

Գույուկ խանի (1240—1248) մահվանից հետո բովանդակ կայսրության փաստական տիրակալ դարձած Բաթու խանի մերձավոր խորհրդականների շարքում կային փորձառու հայ գործիչներ. Թարգմանի պաշտոն վարող և այլ ծառայություններ կատարող այդ հայերը առիթ չէին կորցնում սրելու մոն-

⁴ Մեծահամբավ հայ մանրանկարիչ Թորոս Ռոսլինը, Կոստանդին կաթողիկոսի պատվերով 1260 թ. Հոռմկլայում նկարազարդած իր ավետարանի «Մուսնոյ տեառն» տերունական նկարում, Քրիստոսին երկրպագող և նվերներ մատուցող երեք մոզերի կողքին նկարել է հինգ այլ կարմրազգեստ ու մոնղոլատիպ դեմքեր, օժտելով նրանց «Թաթարն երեկ այստուր» (այսօր եկավ թաթարը) բացատրականով (Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի մատենադարան, ձեռ. № 251, էջ 14ր)։ Սրանով մեր մանրանկարիչը, խախտելով սուրբ գրքի պատկերազրույցյան ավանդական ձևերը, քաղաքական երանգ է տվել կաթողիկոսի պատվերով նկարազարդվող փառաշուրայդ ավետարանին։ Մոնղոլներին դասելով Քրիստոսի ավետարանով սրբազորված ժողովուրդների շարքը, նա ընդառաջել է նոր այդ աշխարհակալների հետ համագործակցության և բարեկամության դաշինք կնքած Կիլիկյան հայկական թագավորության իշխող շերտերի նկրտումներին։

⁵ Л. Н. Гумилев, Поиски вымышленного царства (легенда о „государстве пресвитера Иоанна“), М., 1970, էջ 128 և հետ.։

դոլներին և մահմեդական աշխարհի հակամարտությունները⁶։ Բաթուի ժառանգ Սարթախին նույնպես շրջապատում էին «հայ հոգևորականներ, որոնք զիտեին թյուրքերեն և արաբերեն»⁷։ Սրանց մասին տեղեկություններ կան նաև հայկական աղբյուրներում. Կ. Գանձակեցին, օրինակ, հայտնում է, որ Բաթու խանի մոտ գտնվում էին բազմաթիվ հայ «վարդապետք և եպիսկոպոսուք և երիցունք», որոնցից Մարկոս վարդապետը, Գրիգոր եպիսկոպոսը, Մխիթարը և Բարսեղ քահանան (հատկապես վերջինս)՝ բաղաբական կարևոր դեր էին կատարում⁸։

Հեթում թագավորի՝ Մանգու խանի մոտ այցելելուց մի քանի ամիս առաջ Ղարադորում էր եկել և մեծ խանի հորդայում բարձր դիրք զբաղել Երուսաղեմի սուրբ Հակոբյանց վանքի կամ Պաղեստինի մի այլ վանական հաստատության միաբան Սարգիս ճգնավորը։ Այս խորագետ ու ճարպիկ գործիչը աստվածաբանական գիտելիքներ չունեցող ու հազիվ գրագետ մեկը լինելով, խոսում էր արևելյան ու եվրոպական մի շարք լեզուներով։ Մեծ խանի վրանից ոչ հեռու նա կանգնեցրել էր խաշակիր դադաթով մի վրան-մատուռ, զարդարել այն զեղեցիկ սպասներով և խանի ու նրա մերձավորների շրջանում անարգել քարոզում էր քրիստոնեությունը։ Եթե մեծ խանը քրիստոնեություն ընդունի, համոզում էր նա, ողջ աշխարհը, նաև ֆրանկները՝ պապի ղեխավորությամբ, կենթարկվեն նրան, ընդունելով մոնղոլների գերիշխանությունը⁹։

Սարգիս ճգնավորը պարարտ հող նախապատրաստեց Կիլիկյան Հայաստանի գահակալ Հեթում թագավորի համար, որը հրավիրված էր Ղարադորում, բանակեցելու մեծ խանի հետ։

Հեթումը բարեկամական կապերի մեջ էր Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս Թ-ի հետ, որն այդ ժամանակ գտնվում էր Սիրիայում, պատերազմելով էյուբյանների դեմ։ Քրիստոնյա այս գահակալները, անտարակույս, միասնական ծրագիր էին մշակել մոնղոլների հետ բանակցություններ վարելու նախօրեին։ 1254 թ. զարնանը դուրս գալով Սիս մայրաքաղաքից ու ծալյալ անցնելով Իկոնիայի սուլթանությանը պատկանող շրջաններով, Հեթումը հասավ Հայաստան և կանգ առավ Արագածոտնի տեր Քուրդ Վաչուտյանի իշխանանիստ Վարդենիս գյուղում։ Այստեղ նա տեսակցություն ունեցավ մի շարք հայ իշխանների ու եկեղեցական բարձրաստիճան գործիչների հետ։ Վարդենիս եկավ նաև Հակոբ վարդապետը, որ ուղարկվել էր Տրապիզոնի կայսեր մոտ,

⁶ „Путешествия в восточные страны Плано Карпини и Рубрука“, редакция, вступительная статья и примечания Н. П. Шастиной, М., 1957, էջ 136։

⁷ Նույն տեղում, էջ 113։

⁸ Կ. Գանձակեցի, էջ 366։

⁹ „Путешествия в восточные страны“, էջ 138։ Այս գործչի մասին մանրամասն տեղեկություններ գրանցած Ռուբրուկը ամենուրեք նրան կոչում է «հայ կրոնավոր», մի քանի անգամ հայտնում, որ նա եկել է Երուսաղեմի սուրբ երկրից և վերադառնալու է իր եկած վայրը՝ «Սուրբ Հակոբ», այսինքն Երուսաղեմի Հայոց ղեխավոր վանքը (և ո՛չ Իսպանիայի Հյուսիս-արևմտյան ծայրամասում գտնվող Ս. Հակոբ Կոմպոստելլա վանքի շրջանը, ինչպես ենթադրել է անգլիստությամբ Ռուբրուկի ուսանող թարգմանչուհի-ժանոթագրողը)։ Չնայած այս բոլորին, որոշ ուսումնասիրողներ, հավատ ընծայելով Ռուբրուկի «Ուղեգրություն» հրապարակողներից մեկի մացրած ղեխակարգությանը և ինքնահնար խորագրերին (32-րդ դրվան, օրինակ, խորագրված է այսպես. «Քրիստոնեական մատուռի և Սարգիս անուկով նեոտորական կեղծ վանականի հետ հանդիպելու մասին»), այս նշանավոր հայ գործչին նեոտորական ասորի են համարել, արհամարհելով Ռուբրուկի տասնյակ պարզ ու մեկին ոլնդումները Սարգիս հայ լինելու մասին։

դավանաբանական և քաղաքական հարցերի շուրջ բանակցելու հանձնարարություններ: Անհրաժեշտ նախապատրաստություններն ավարտելով, թագավորն անցավ Բաթուի և Սարթախի մոտ, որտեղ հաստատվել էին Կասպից ծովից հյուսիս՝ Վոլգա գետի ափերին: Այստեղից մեկնեց Ղարադորում՝ Մանգու մեծ խանի արքունիքը, ուր մնաց 50 օր և, հաջողությամբ ավարտելով իր առաքելությունը, վերադարձի ուղին բռնեց: Հեթումին առաջնորդեցին այնպիսի հանապարհով, որ նա տեսակցություն ունենա Մանգու խանի եղբայր Հուլադուի հետ: Իլխանության ապագա հիմնադիրը իր հորդայով շարժվում էր արևմուտք՝ ստանձնելու նվաճված Իրանի և Անդրկովկասի կառավարչությունը, նոր նվաճումներ կատարելու Մերձավոր արևելքում և Փոքր Ասիայում:

Հեթումի բանակցությունները պսակվեցին հաջողությամբ. այդ մասին մանրամասն տեղեկություններ է գրանցել նրա եղբորորդի Հեթում պատմիչը՝ 1307 թ. ֆրանսերեն լեզվով թելադրած իր «Պատմության» էջերում (պահպանվել է ֆրանսերեն ու լատիներեն խմբագրություններով ու բազմիցս հրատարակվել է Եվրոպայում): Ուսումնասիրողները իրավամբ նշել են, որ Հեթում պատմիչը իր երկը ստեղծելով 1254 թ. բանակցություններից կես դար հետո, ժամանակի պահանջներից ելնելով, կարող է չափազանցած լինել հայ-մոնղոլական բանակցությունների արդյունքը, իր թագավոր հորեղբորը քրիստոնյա աշխարհին ներկայացնելով որպես մոնղոլների ահուկի ուղեմական ուժը ի նպաստ խաչակիր պետությունների օգտագործելու վաղեմի ծրագրերի իրականացման գծով մեծ հաջողություններ արձանագրած քաղաքական գործիչ: Նկատի ունենալով այդ հանգամանքը, քննաբար ու զգուշորեն պետք է օգտագործել Հեթումի «Պատմության» մեջ ամբարված արժեքավոր տվյալները: Սակայն բավարար հիմքեր չկան մեր պատմիչին անարժանահավատ սրակելու, ինչպես հակված են որոշ ուսումնասիրողներ¹⁰: Պետք չէ մոռանալ մանավանդ այն հանգամանքը, որ արքայազարմ պատմիչն իր տեղեկությունները քաղել է իրադարձությունների զլխավոր դերակատար Հեթում թագավորից¹¹:

Արդ, ի մի բերելով Հեթում պատմիչի և այլ սկզբնաղբյուրների տվյալները, կիլիկյան հայ գահակալի և Մանգու մեծ խանի բանակցությունների կարևոր արդյունքները կարելի է ամփոփել հետևյալ վեց կետերով.

1. Մոնղոլները համաձայն են քրիստոնյա դառնալ, սակայն այդ պետք է կատարվի յուրաքանչյուրի բարի կամքով, «քանի որ հավատքը բռնադատություն չի հանդուրժում»:

¹⁰ Տե՛ս Աշոտ Հովհաննիսյան, Դավադներ հայ ազատագրական մարտի պատմության, գիրք առաջին, Երևան, 1957, էջ 174—175:

¹¹ Ա. Գալստյանը «Հեթումի «Պատմություն թագավորաց» գրքի բնութագրման հարցի շուրջ» հոդվածում (Տեղեկագիր, 1958, № 9, էջ 63—72) փորձում է համոզել, որ Հեթում պատմիչի գրանցած տեղեկությունների սկզբնաղբյուրը Սմբատ սպարապետն է, որն, իբր, բնկերակեցել է իր թագավոր եղբորը՝ նրա Ղարադորում կատարած հանապարհորդության ընթացքում և այլն: Այս հայտարարությունները անհիմն են ու անընդունելի: Տեղին է, սակայն, նշել, որ Ա. Գալստյանը հայ-մոնղոլական քաղաքական կապերի ուսումնասիրության գծով զղալի աշխատանք է կատարել, պարզել է շատ թյուրիմացություններ ու ճիշտ գնահատել 1254 թ. բանակցությունների արդյունքը: Տե՛ս նրա «Մոնղոլական շրջանի հայ դիվանագիտության պատմությունից» աշխատությունը (Լեհինական, 1945) և «Հայ-մոնղոլական առաջին բանակցությունները» հոդվածը («Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 1, էջ 91—106):

2. Քրիստոնյաների և մոնղոլների միջև կայուն խաղաղություն և հարատև բարեկամություն կլինի, եթե քրիստոնյաները չխախտեն այն:

3. Քրիստոնեական բոլոր եկեղեցիներն ու եկեղեցու պաշտոնյաները ազատ են լինելու ամեն տեսակ հարկերից:

4. Մեծ խանի կամ նրա եղբայր Հուլաղուի գլխավորությամբ մոնղոլներն ազատագրելու են քրիստոնյաների սուրբ երկիրը՝ Պաղեստինը:

5. Բաղդատը պետք է գրավվի և խալիֆայությունը վերացվի:

6. Բոլոր այն շրջանները, որ բռնադրավել են Կիլիկյան թագավորությունից սելջուկները կամ այլ թշնամիներ՝ պետք է վերադարձվեն: Կիլիկիային են կցվելու նաև այն տարածությունները, որոնք կնվաճի հայոց թագավորը մահմեդականների դեմ մղվելիք պատերազմների ընթացքում¹²:

Այս կետերի մեջ անհավատալի ոչինչ չկա: Մոնղոլ ավագանու ուժեղ մի խմբակցություն իրոք հակված էր քրիստոնեությունը պետական կրոն ընդունելու. մի շարք նշանավոր պետական գործիչներ, եթե չէին էլ դարձել քրիստոնյա, ոչ միայն չէին հերքում այդ մասին տարածվող լուրերը, այլ իրենք էին նպաստում դրանց շրջապատույթին¹³: Այդ հանգամանքը նպաստավոր դիրք էր ապահովում նրանց համար ինչպես Մերձավոր արևելքում, այնպես էլ հվրոպական մայր-ցամաքում նոր նվաճումներ ձեռնարկելու նախօրեին:

Քրիստոնեական վանքերի ու եկեղեցիների և, ընդհանրապես, բոլոր դավանանքների սրբատեղիների ու պաշտոնեության նկատմամբ մոնղոլները հովանավորող քաղաքականություն էին որդեգրել մինչև Մանգու խանի և Հեթումի բանակցությունները¹⁴: Ուստի ճշմարտացի ու ստույգ պետք է համարել Հեթում պատմիչի և ժամանակակից մյուս հեղինակների հավաստիացումն այն մասին, որ եկեղեցին ու կղերականությունը ապահարկ է ճանաչվել Մանգու խանի կողմից. «Նա և գիր ազատութեան եկեղեցեաց ընդ ամենայն տեղիս»,—գրել է Հեթում թագավորի վերադարձին Վարդենիս գյուղում նրա հետ տեսակցած ու նրա զրույցներին ունկնդիր դարձած Կիրակոս պատմագիրը¹⁵:

¹² „Recueil des historiens des Croisades. Documents arméniens“, t. II, էջ 164—165: Հայ-մոնղոլական բանակցությունների արդյունքի մասին հատվածների ուսուերեն թարգմանությունը տե՛ս Գ. Գ. Микаелян, История киликийского армянского государства, Ереван, 1952, էջ 310—312:

¹³ 1240-ական թվականների վերջերին, օրինակ, Կիպրոսում գտնվող Լյուդովիկոս IX թագավորի մոտ եկան մոնղոլ դեսպաններ՝ հայտնելով, թե մեծ խանը քրիստոնեություն է ընդունել ու մեծապես համակրում է քրիստոնյաներին (Գ. Микаелян, նշվ. աշխ., էջ 314): Բաթու խանի Սարթախ որդու քրիստոնյա լինելու մասին լուրեր էին շրջում ամենուրեք. «Սնալ քրիստոնեայ դայեկօք, և ի շափ հասեալ հաւատաց ի Քրիստոս և մկրտեցաւ յասորոցն»—հայտնում է Կ. Գանձակեցին (էջ 358):

¹⁴ Ասորի մեծանուն վաճառական Ռարան-Աթան, օրինակ, բազմաթիվ եկեղեցիներ էր կառուցել մոնղոլական տիրապետության տակ գտնվող այնպիսի վայրերում, ուր մինչ այդ «ոչ իշխէին անուանել զՔրիստոս»: Խիստ ուշագրավ են Կ. Գանձակեցու հաղորդած տեղեկությունները Ոսկե Հորդայի հիմնադիր Բաթու խանի և Սարթախի կրոնական հաստատությունների նկատմամբ որդեգրած քաղաքականության մասին. «Սա (Սարթախը),—գրում է Գանձակեցին,— բազում դիւրութիւն արար եկեղեցւոյ և քրիստոնէից, և կամաւ հօր իւրոյ գրեաց դիր ազատութեան քրիստոնէից և եկեղեցեաց, և առաքեաց կողմանս սպառնալիս և մահ, եթէ որ հարկ առնու յեկեղեցւոյ, կամ ի նորին պաշտօնէից, զինչ ազդ և իցեն, այլ և ի տաճկաց մզրիթացն և ի նորին սպասատրաց» (Կ. Գանձակեցի, էջ 358):

¹⁵ Կ. Գանձակեցի, էջ 367:

Հայ-մոնղոլական համաձայնության մյուս նախատեսումները (նախկինում Կիլիկյան թագավորության պատկանող շրջանների վերադարձման, Բաղդատի գրավման, Պաղեստինի ազատագրման մասին) քայլ առ քայլ սկսեցին իրագործվել այն բանից հետո, երբ Հուլաղու խանը հաստատվեց Իրանում և Անդրկովկասում ու ծնկի բերեց հաշիշյաններին: 1257 թ. Հեթում թագավորի զինական օժանդակությամբ մոնղոլները պարտության մատնեցին Իկոնիայի սուլթանությանը և հասան մինչև Միջերկրական ու Սև ծովերը: Նույն թվականին սկսվեց նաև մեծ արշավանք դեպի Միջագետք՝ Բաղդատի խալիֆի դեմ. մոնղոլական բանակի կազմում կռվում էին նաև հայ ֆեոդալների՝ Զաքարիայի, Պոռշ Խաղբակյանի, Սևադա Խաչենցու, Թադիադին Կյուրիկյանի և այլոց զորախմբերը: 1258 թ. փետրվարի 4-ին Բաղդատն ընկավ: 1259 թ. Հուլաղուի հրամանատարությամբ գործող մոնղոլական բանակն արշավեց Ասորիք, ուր իշխում էր էյուբյան մելիք Սալահեդդին Յուսուֆը: Հեթում թագավորը միացավ մոնղոլներին: Հալեպը գրավվեց այդ թվականի վերջերին, ապա հնազանդվեցին Դամասկոսն ու Սիրիական մյուս քաղաքները:

Հուլաղուն և Հեթումը պետք է այնուհետև արշավեին Պաղեստին և գրավեին Երուսաղեմը, բայց իր եղբայր Մանգու խանի մահվան լուրն ստանալով խանը հտ դարձավ, Ասորիքում թողնելով իր զորքի մի մասը Քիթբուղայի հրամանատարության ներքո: Մոնղոլական ջլատված ուժերն սկսեցին ծրագրված արշավանքը դեպի Պաղեստին, բայց այլևս անկարող եղան հաջող մարտեր մղել: Եգիպտոսի սուլթան Կուտուզը (ազ-Մուզաֆֆար Սայֆ ադ-դին Կուտուզ, 1259—1260) պարտության մատնեց Քիթբուղային, վերստին նվաճելով Սիրիան: Մեծ կորուստներ տվեցին նաև մոնղոլների դաշնակից հայ զորախմբերը¹⁶:

Ինչպես տեսնում ենք քաղաքական դեպքերի թուցիկ այս թվարկումից, մոնղոլների և Կիլիկյան հայկական թագավորության միջև Հեթումի և Մանգու խանի բանակցություններից հետո, իրոք, մշակվել էր քաղաքական սերտ համագործակցություն: Փոքր Ասիայում և Մերձավոր Արևելքում նոր նվաճումներ կատարելու իրենց ծրագրերի իրականացման համար մոնղոլները դաշնակիցների պետք ունեին, և մոնղոլական տիրապետության տակ ընկած կամ գերիշխանությունը ճանաչած հայ իշխանների մի մասը, ինչպես բուն Հայաստանում, այնպես էլ Կիլիկիայում, քաղաքական ու տնտեսական իրենց ակնկալություններն ունենալով, դաշնակցում էին մոնղոլներին:

XIII դարի կեսերի քաղաքական կացության համառոտ այս նկարագիրը, ինչպես կտեսնենք ստորև, նպաստելու է Արտադի հայկական իշխանության սկզբնավորման պայմանների ուսումնասիրությանը: Բուն նյութին անցնելուց առաջ անհրաժեշտ է, սակայն, համառոտ մի ականարկով անդրադառնալ նաև նույն այս տարիներին Հայոց եկեղեցու առջև ծառացած քաղաքական ու գաղափարական խնդիրներին:

2. Հայոց եկեղեցին XIII դարի կեսերին.— Կիլիկյան հայկական թագավորությունը ամենասերտ տնտեսական ու քաղաքական կապերի մեջ էր եվրոպական երկրների և Մերձավոր արևելքում ստեղծված խաչակիր իշխանու-

¹⁶ Այս դեպքերին, սկզբնաղբյուրների վկայակոչմամբ, մանրամասն անդրադարձել է ալադ. Հ. Մանանդյանը (Տե՛ս Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատոր III, Երևան, 1952, էջ 232—236):

թյունների հետ: Այդ երկրի տնտեսական բարգավաճ վիճակն իսկ առաջին հերթին պայմանավորված էր միջազգային տարանցիկ առևտրով, որի կարելիոր հանգուցակետերը մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում Կիլիկյան նավահանգիստներն էին: Կիլիկիայի հայ ավատատերերն ու մեծահարուստ վաճառականները, տնտեսական սերտ համագործակցության մեջ լինելով «ֆեոդալների» հետ, իրենց նիստուկացով և կենցաղով զգալապես հեռացել էին հայրենական ավանդներից, հագնվում ու պնդվում էին եվրոպացիների նման, խնամիական կապեր հաստատում խաչակիրների հետ՝ իրենց կյանքն ու կենցաղը հարմարեցնելով միջնադարյան Եվրոպայի շափանիշներին:

Կիլիկյան հայկական պետության շահերը եվրոպական երկրների հետ շաղկապած հասարակական շերտերը՝ ազգային դիմահեղման ընթացքի մեջ մտած խոշոր ավատատերերն ու մեծատուն վաճառականները, ընդառաջ գնալով կաթոլիկ եկեղեցու արևելք առաքվող պաշտոնյաների օրավուր՝ ծավալվող բարոզչությանը, պատրաստ էին նաև դավանաբանական գիշումներ կատարելու գնով սերտ միություն ստեղծել հայ և կաթոլիկ եկեղեցիների միջև: Հռոմկլլայում հաստատված Ամենայն հայոց կաթողիկոսությունը XIII դարի կեսերին դեռևս ի զորու էր հակահարված տալու Վատիկանի գործակալներին և պաշտպանելու իր դիրքերը որպես ինքնագլուխ (ավտոկեֆալ) եկեղեցի:

1246 թվականին Հռոմի պապը, հատուկ պատվիրակի միջոցով, մի դրույթուն էր հղել Հեթում Ա թագավորին, որով Հայոց եկեղեցու դավանանքը հերձվածոդական համարելով, կաթոլիկ եկեղեցու գիրկն էր հրավիրում «մուրյալ» հայերին: Հռոմի եկեղեցին հիմնադրել է Պետրոս առաքյալը՝ Քրիստոսի սիրեցյալ աշակերտը («վեմն հաւատոյ»), ուստի բոլոր եկեղեցիները պարտավորված են ճանաչելու նրա հաջորդը համարվող պապի գերիշխանությունը. «Հռոմի աթոռն միայն ունի իշխանություն ի վերայ երկրի կապելոյ և արձակելոյ, և ծառայութիւն պարտին նմա ամենայն եկեղեցիք» — գրված էր այնտեղ:

Հեթում թագավորը, ինչպես և սպասելի էր, այդ մասին իրազեկ է դարձնում Կոստանդին կաթողիկոս Բարձրբերդցուն և ստանում նրանից մի ուշադրավ պատասխան, որը շարադրվել էր այդ ժամանակ Հռոմկլլայում գրտնրվող Վարդան Արևելցու գործակցությամբ¹⁷:

17 Այդ պատասխան գրության ընդարձակ խորագիրն է. «Թուղթ Կոստանդնայ կաթողիկոսի Հայոց, զոր գրեաց առ Հեթում թագաւորն ի յաստուածապահ զղեկէս՝ ի հայրապետական աթոռոյս Հռոմկլլաէս, ի մայրաքաղաքն Սիս. պատասխանի թղթին, որ ի պապէն Հռոմայ բերաւ առ թագաւորն Հայոց Հեթում, ի ձեռն լիկաթին որ կոչէր Տիմանչ, ի թուիս Հայոց ի ՈՂԷ (1246), ի ձեռն արդինական վարդապետին Վարդանայ, յարմար իրիս» (Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 503—509):

Մ. Օրմանյանը (Ազգապատում, § 1129) այս գրության թվականը առաջարկում է սրբագրել ՈՂԷ (1248): Այդ թերեւս հաստատվում է պապի վերահիշյալ գրությամբ, որ շարադրված է 1246-ին ու թարգմանված հայերեն 1247-ին: Ուշադրով այդ գրությունը «Գիր դաւանութեան հռոմայեցոց ի Հայս՝ վասն բխման հոգւոյն սրբոյն» խորագրով, պահպանվել է Մաշտոցի անվան մատենադարանի № 248 ձեռագրում: Բանասիրական հետաքրքրություն է ներկայացնում հատկապես գրության հիշատակարանը, որ տալիս ենք ստորև.

«...Արդ ես ֆրա Տիմանչ սպանօլ, որ եմ ըստ կարգի ֆրա մնուրաց կաթոլիկէ առաքելական աթոռոյն ի Հայք, վկայեմ առաջի ամենակալին աստուծոյ և տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ դատելօց է զկենդանիս և զմեռեալս, որ կարողութեամբ սուրբ հօրն և պապուն արդեւեալ եմ ի ներքս ի բանադրանաց զամենեանս զայնոսիկ զգրօղսն, զկարդացողսն, զունողսն և որք օրի-

«Հնգետաասան սխալ և անընդունակ բան» գտնելով պապի գրության մեջ, կաթողիկոսն իր պատասխանով վճռականորեն մերժում է Պետրոս առաքյալի հաջորդի հիմնադրել պահանջները, հայտարարելով, որ Քրիստոսի բոլոր 12 աշակերտները համահավասար պատիվ և իշխանություն են ունեցել: Այս գրությունը պաշտոնական մի վավերագիր չէ, անշուշտ, այլ հայ եկեղեցու ղահակալի մտերմական մի նամակը երիտասարդ թագավորին, սակայն, ինչպես իրավացիորեն նկատել է Մ. Օրմանյանը, «մտերմական գրվածներ ավելի զորավոր են յուրաքանչյուրին ներքին համոզումը իմանալու համար, քան պաշտոնական գրություններ»¹⁸:

Առաքյալների համապատվության թեզը պաշտպանելով, Հայոց եկեղեցու վարիչները կաթոլիկ եկեղեցու հիմնադիր հռչակված Պետրոս և Պողոս առաքյալների դիմաց պարզում էին երկու այլ առաքյալների՝ Բարթուղիմեոսին և Թադեոսին, որոնք, իբր, քարոզչական իրենց շրջագայություններն ավարտել ու իրենց վախճանը գտել էին Հայաստանի Արտագ գավառում, հիմնադրել ղենելով Հայաստանյայց եկեղեցու: Այս մասին տակավին V դարում հորինվել էին որոշ զրույցներ, բայց «Հայոց առաքյալների» նահատակության պատմությունները ճոխացվեցին հենց Կոստանդին կաթողիկոսի աթոռակալության այս տարիներին, որոշակի տեղ մատնանշելով նրանց շիրիմների համար: Ուշագրավ է, որ պաշտոնական գրությունների մեջ, կաթողիկոսական իր տիտղոսից անմիջապես հետո («Մառայ Քրիստոսի և շնորհօք նորին կաթողիկոս Հայոց»), Բարձրբերդցին շեշտում էր Հայոց եկեղեցու «ընդ իշխանութեամբ գաւազանի սրբոց առաքելոցն Թաթէոսի և Բարթուղիմէոսի» լինելու պարագան:

Եվ ահա, պապի վերահիշյալ գրության ստացման և պատասխանը պատրաստելու օրերին, Կոստանդին կաթողիկոսը հատուկ մտահոգության առարկա է դարձնում Թադեոս առաքյալի վանքի վերաշինության հարցը, այն դարձնելով Հայաստանյայց եկեղեցու նորաստեղծ մի թեմի կենտրոն, որի հոգևոր իշխանության սահմանները տարածվելու էին շրջակա գավառների վրա, իրենց մեջ առնելով նաև Իրանում և Անդրկովկասում հաստատված մոնղոլ տիրակալների վարչա-քաղաքական կենտրոն Ատրպատականը՝ Մարաղա և Թավրիզ քաղաքներով¹⁹:

Կոստանդին կաթողիկոսն ու Հեթում թագավորը, վերահիշյալ նկատառումներից բացի, հաշվի էին առնելու անշուշտ և այն հանգամանքը, որ Կիլիկյան հայկական թագավորության ղաշնակից մոնղոլների վարչա-քաղաքական կենտրոնում ստեղծելով եկեղեցական նոր թեմ, իրենց մշտական ներ-

նակեն դալս թուխտս դաւանութեան հաւատոյ, որ յառաջմէն մինչև ի վերջն ոչ յաւելցուցանեն և ոչ պակասեցուցանեն, և ոչ փոխեն բնաւ ի բանիցս աշտոցիկ. և եթէ որ յանդգնի յիրացս և յառաջէ անել՝ եզիցի ձևոն տեսան ի նաւ Գրեցաւ թուխթս այս ի թուականութեան լատինացոց յամս որ է ի մարմնանալ տեսան մերոյ ՈՄԽԶ, յամս նոյեմբերի և ի չորրորդ ամի եպիսկոպոսութեան տեսան պապոն, որ է չորրորդ Ըննիցունց (իմա՝ Ինովկենտիոս—Լ. Խ.): Եւ թարգմանեցաւ ի թուխ Հայոց ՈւԶ (1247), յամս կաթողիկոսութեան Հայոց տեսան Կոստանդինայ և Թադեոսին Հեթում և հօր նորին աւագ պարոն Կոստանդին» (ձեռ. № 248, էջ 196բ):

18 «Ազգապատում», Բ հատ., Ա գիրք, Պեյրուս, 1960, էջ 1643 (§ 1120):

19 Հուլիզու խանի (1256—1265) ժամանակ մայրաքաղաքը Մարաղան էր, իսկ Արաղա խանը (1265—1282) իշխանության կենտրոնը փոխադրեց Թավրիզ (A. A. Али-заде, Социально-экономическая и политическая история Азербайджана XIII—XIV вв., Баку, 1956, էջ 265):

կայացուցիչն էին ունենալու այնտեղ՝ հանձինս թեմական առաջնորդ եպիսկոպոսի:

Արտազի կամ Առաքելոց երկրի նորաստեղծ թեմի առաջնորդը, ստանձնելով իր պաշտոնը, կամա թե ակամա շփումներ ու բախումներ էր ունենալու հարևան շրջանների, մասնավորապես Սյունիքի ու Վասպուրականի հոգեվոր առաջնորդների հետ: Սրանք, բոլոր մեծի մասին լինելով կրոնավորի սրեմ հագած ավատատերեր, գործում էին ի շահ իրենց գերզաստանների, եկեղեցական կալվածատիրության ցուցանակների տակ ապահովելով բռնագրավման վտանգից իրենց կալվածքների մի մասը: Ի տարբերություն հին ու պատմական անցյալ ունեցող թեմերի իշխանաշուք առաջնորդների, Արտազի եպիսկոպոսը նորաստեղծ իր թեմի դիրքը, հեղինակությունն ու տնտեսական կշիռը բարձրացնելու համար հենվելու էր, հիմնականում, Ամենայն հայոց կաթողիկոսության և նրան զորավիգ կանգնած Կիլիկյան հայկական թագավորության վրա, հանդիսանալով նրանց մշակած քաղաքականության ջատագովը Մեծ Հայքում:

3. Արտազի թեմի հիմնադրումը և Թաղեոս առաքյալի վանքի վերաշինումը. — Թաղեոս առաքյալի անվան եպիսկոպոսանիստ վանքի վերաշինման մասին տեղեկություններ պահպանած կարևոր սկզբնաղբյուրը Կ. Գանձակեցու «Պատմություն» է: Նրա վկայությամբ վանքն ավերված է եղել «ի թուրքաց և ի հինիցն վրաց»²⁰ շատ ժամանակ առաջ («քանզի յոլով ժամանակս անբնակ էր ի մարդոյ և ամայի»²¹): Վանքի վերաշինության աշխատանքները ղեկավարել է նշանավոր գիտնական և եկեղեցական գործիչ Հովհաննես Վանականի աշակերտներից Հովսեփ վարդապետը, որն այդ ժամանակ, իր Կիրակոս ու Վարդան դասընկերների հետ միասին, մեծ հեղինակություն վայելող եկեղեցական էր:

Կոստանդին կաթողիկոսը 1247 թվականին, հատուկ կոնդակով, որոշեց Թաղեոս առաքյալի նորաստեղծ թեմի սահմանները և հորդորեց վանքի վերաշինման նպատակին հատկացնել «ոսկի հողով»: Հովսեփ վարդապետը, նյութական ու բարոյական օժանդակություն ստանալով, դիմում է Անապուրականուին կոչվող մոնղոլ ցեղապետին, որի գերզաստանի ամառային կայանքը գտնվում էր վանքի շրջակայքում, և նրանից թույլտվություն ստանալով վերաշինում է եկեղեցին, կառուցում զավիթ և այլ շինություններ, մեծ միաբանություն ստեղծում («շինեաց զվանսն և ժողովեաց ի նա կրօնաւորս բազումս»): Ուշագրավ է Կ. Գանձակեցու և այն խոսքը, որ «զօրքն թաթար ոչ էին թշնամի խաչի և եկեղեցւոյ, այլ և յոյժ պատուէին և բնծայս մատուցանէին, քանզի նախանձ հակառակութեան առ նոսա ոչ գտանիր»²²:

Երբ ավարտվեցին շինարարական այս աշխատանքները, ստույգ շգիտենք, կարելի է ենթադրել, որ 50-ական թթ. վերջերին: Չգիտենք նաև որքան է ապրել Արտազեցի կոչված Հովսեփ վարդապետը և երբ կնքել իր մահկանացուն: Նրան հաջորդել է Տիրացու եպիսկոպոսը, որ աշակերտել է Վարդան

²⁰ Վրաց գործերի այս կողմերը կատարած արշավանքի մասին խոսք կա նաև XIV դ. վրաց անանուն ժամանակագրի մոտ. նրա տվյալներով Շահնշահ և Ավագ Զաքարյանները շուրջ 30 հազար զորքով անցել են Արաքսը և հաջող մարտեր մղել թուրքերի դեմ Վաղարշակերտի և Խլաթի կողմերում: Հավանաբար մի զորախումբ էլ մտել է Արտազի շրջան, հալածելով թուրքերին (տե՛ս Վրաց ժամանակագրություն (1207—1318), Երևան, 1971, էջ 91):

²¹ Կ. Գանձակեցի, էջ 311:

²² Նույն տեղում, էջ 312:

Արևելացուն²³։ Սա պաշտոնի վրա էր արդեն 1285 թվականին, երբ նրա մոտ իջևանեց և հյուրընկալվեց Կիլիկիայի Լևոն Գ թագավորը (1270—1289) Արդուն խանի արքունիքն այցելելու ճանապարհին։ Այս եպիսկոպոսի Տիրացու անունը ենթադրել է տալիս, որ նա մանուկ հասակից ընտրված է եղել ու դաստիարակվել որպես Թագևոս առաքյալի թեմի եպիսկոպոսացու։ Միջին դարերում Հայաստանի եկեղեցական թեմերի ու նշանավոր վանական հաստատությունների առաջնորդական պաշտոնը, գրեթե ամենուրեք, ժառանգական բնույթ էր ստացել և փոխանցվում էր առաջնորդի մերձավոր ազգականներից մեկին (մեծ մասամբ՝ եղբոր որդուն), որը պաշտոնի էր կոչվում իր տարեց հորեղբոր կենդանության օրոք, և փոխարինում նրան՝ մահվանից հետո։ Ամենայն հավանականությամբ այդպես է եղել նաև տվյալ դեպքում, և Հովսեփ Արտագեցուն հաջորդել է Տիրացու եպիսկոպոսը՝ մերձավոր ազգականի հանգամանքով։

Տիրացու եպիսկոպոսը շարունակել է իր նախորդի գործունեությունը Արտագի նորաստեղծ թեմի տնտեսական ու դադափարական հիմքերն ամրապնդելու, նրա հոգևոր իշխանության տակ գտնվող վանական հաստատությունների շինության և կալվածքներով օժտելու գծով։ 1289 թ. ընդօրինակված մի ավետարանի հիշատակարանում հետաքրքրական տվյալներ են գրանցված այն մասին, որ «ի ձեռն... մեծ գիտապետիս տէր Տիրացուի», «սբանչելի հրաշխիք» հայտնաբերվել են Սուբիասյանց սրբերի նշխարները, շենացվել է Կողբա վանքը՝ վերստանալով նախկինում իրեն պատկանած կալվածքները. «Գանձագին արարեալ ազատեաց զբազմամեայ ծառայեալքս յայլազգեաց, եւ զհնացեալ եւ զամայացեալ հայրենիք եւ զվիճակ, որ յառաջ լեալ էր»²⁴։

«Գանձագին արարեալ» — այսինքն հնչյուն դրամ վճարելով էին ընդարձակում իրենց կալվածքները Թագևոս առաքյալի նորաստեղծ թեմի առաջնորդները, քստ երևույթին նյութական օժանդակություն ստանալով նաև Կիլիկիայի հոգևոր և աշխարհիկ ավատատերերից։

Տիրացու եպիսկոպոսը 1293 թ. շարադրված մի հիշատակարանի մեջ մեծարված է «գերահռչակ և արժանապատիւ եպիսկոպոս» խոսքերով, ասված է, որ նա փայլում է «իբրեւ զհաճ վառեալ ի մէջ զիշերի», լինելով «նաւահանգիստ վտանգելոց և ծարաւելոց, շնորհաւ սուրբ առաքելոյն [Թադէոսի]»²⁵։

Այս հիշատակարանն ուշադրավ է իր հարուստ բովանդակությամբ։ Հեղինակը՝ Թորոս Դրազարեցին, ընկերակցությամբ Թովմաս եպիսկոպոսի, եկել

23 Տիրացուն 1266 թվականին Խոր-Վիրապում ընդօրինակել է իր ուսուցչի «Սաղմոսաց մեկնություն»-ը, իրեն կոչելով «անարժան աշակերտ... նորուն (վարդանայ)»։ (Ս. Տեր-Ավետիսյան, Յուզակ հայերեն ձեռագրաց նոր Ջուղայի, Վիեննա, 1970, էջ 551)։

24 Ս. Տեր-Ավետիսյան, էջ 256։

25 Այս հիշատակարանը, որ ձեռագրից անշատ պահվում է Մաշտոցյան մատենադարանի պատասխիկների ֆոնդում (պատասխիկ № 919), պահվել է անցյալում Գողթան գավառի Ս. Թովմաս առաքյալի վանքի մի ձեռագրից, որ այժմ պահվում է Լենինգրադի էրմիտաժում (V 3—835 համարի տակ)։ Հիշատակարանը տպագրվել է բազմիցս. տե՛ս «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», выпуск XXIX. Тифлис, 1901, [А. И. Туманов], Арм. древние рукописи монастыря св. Фомы էջ 11, «Ազգագրական հանդես», XII, 1905, Ե. Լալայան, Գողթն գավառ, Ձեռագիրներ, էջ 155—156, Մ. Վ. Մախուդյան, Նկարագրություն և իշխատակարանը ձեռագրաց Ս. Թովմայ առաքելոյ վանոց, «Արարատ», 1911, էջ 223—224, Հ. Ոսկյան, Վասպուրականի—Վանի վանքերը, Բ, էջ 470—471 և այլն։

է Մեծ Հայք, 1292 թ. գրավված ու ավերված Հռոմկլայի փոխարեն մի նոր վայրում կաթողիկոսական աթոռ հաստատելու և նոր գահակալ ընտրելու նպատակով Արևելյան Հայաստանի նշանավոր հոգևոր ու աշխարհիկ տերերին Կիլիկիա հրավիրելու հանձնարարությամբ: Նա հայտնում է, որ Հեթում թագավորը, «բոլոր ուխտին եկեղեցույ և իշխանաւր հանդերձ» որոշել է «շնորհել բերդամուր և երկիր առատ սուրբ աթոռոյ ևուսաւորչին՝ առ ի հաստատել վերստին»: Այսպիսով պարզվում է, որ Կաթողիկոսի կողմից գերակարգված Ստեփանոս Հռոմկլայեցի կաթողիկոսի մահվանից անմիջապես հետո Կիլիկիայում ժողով է գումարվել կաթողիկոսական աթոռի վերահաստատման օրակարգով:

XIII դարի վերջերին ծանր վիճակ էր ստեղծվել Կիլիկյան հայկական թագավորության համար: Հյուսիսից և հարավ-արևմուտքից արշավող թշնամիներն ասպատակում էին երկիրը, գերում ու թալանում. մոնղոլները, արդեն հակված մահմեդականության կողմը, այլևս շահ չունեին շարունակելու իրենց վաղեմի բարեկամությունը Կիլիկյան հայ իշխանության հետ. թուլացած ու միայնակ մնացած երկիրն այլևս անկարող էր տակալ գորեղ թշնամիների հարձակումներին: Հեթում Բ թագավորը, եվրոպական երկրներից ռազմական օգնություն ստանալու սին հույսեր փայփայելով, կաթոլիկ եկեղեցու գերիշխանությունը պաշտոնապես ընդունելու քաղաքականություն էր վարում: Հենց 1293 թ. նա հոգևոր կոչում էր ընդունել, դառնալով Ֆրանցիսկյան միաբանության անդամ՝ Հովհաննես կրոնավոր անունով²⁶: Նույն քաղաքականության ջատագով էր նաև կաթողիկոսական գահի թեկնածու Գրիգոր Անավարդեցին, որը հակված էր հրաժարվելու հայ եկեղեցու դարավոր տվանդություններից, ծառայագրվելու կաթոլիկ եկեղեցու հովիտպետին, հավատ ընծայելով խաչակրաց նոր արշավանքներ կազմակերպելու ձրի խոստումներին:

Հեթում թագավորն ու իր կուսակիցները պետք ունեին Մեծ Հայքի ամենախոշոր ու հեղինակավոր թեմական առաջնորդների, մասնավորապես Արտազի, Տաթևի, Հաղբատի ու Բջնիի եպիսկոպոսների աջակցությանը՝ իրենց ծրագրերն իրականացնելու հանաւարհին²⁷: Նրանց հետ բանակցելու նպա-

²⁶ Այս անունն ընտրվել էր ի պատիվ Ֆրանցիսկյան միաբանության նշանավոր գործիչ Հովանի (Հովհաննես) Մանտեկորվինոյի, որը Կիլիկիայում եղած տարիներին դարձել էր հայոց թագավորի մտերիմ խորհրդատուն («После Марко Поло, путешествия западных чужеземцев в страны трех Индий», перевод с латинского и старонтальянского языков, введение и примечания Я. М. Света, М., 1968, էջ 70—71):

²⁷ Մ. Չամչյանի (Գ, 37), Ղ. Ալիշանի (Շնորհալի..., 57), Մ. Թրմանյանի (Ազգապատում, § 930) և այլոց կարծիքով 1114 թ. Գրիգոր Վկայասեր կաթողիկոսի կողմից Քեսոնի Կարմիր վանքում գումարված ժողովը հաստատել է կարգ, որի համաձայն կաթողիկոսական ընտրությունը վավերական է հանաւելու Մեծ Հայքի չորս գլխավոր աթոռների՝ Բջնիի, Հաղբատի, Տաթևի և Արտազի հովանության ղեկավար: Այդ տարածված կարծիքը հիմնադրել է ու սխալ: 1114 թ. Արտազի աթոռ գոյություն չի ունեցել, իսկ Բջնին, XII դարում հայոց եկեղեցու նվիրապետության առումով, աննշան մի վայր է եղել: Կաթողիկոսական ընտրության վերահիշյալ կարգը, մեծ հովանականությամբ, հաստատվել է հենց 1293 թ. խնդրո առաքյալ ժողովում, որը գումարվել էր Հռոմկլայի անկումից հետո՝ կաթողիկոսական աթոռի համար նոր նստավայր որոշելու և նոր կաթողիկոսի ընտրությունը նախապատրաստելու նպատակով: Այս թյուրիմացությունը, ըստ երևույթին, ծագել է Գրիգոր Անավարդեցի կաթողիկոսին Գրիգոր Գ. Պահլավունի (Փոքր Վկայասեր) կաթողիկոսի (1113—1166) հետ շփոթելու հետեանքով: (Անավարդեցին ևս,

տակով էր Հայաստան ուղարկվել Թովմաս եպիսկոպոսի գլխավորած պատվիրակությունը, որը հանձնարարություն էր ստացել, առաջին հերթին, ներկայանալ Արտադի աթոռակալ տեր Տիրացուն²⁸։ Թագավորն ու կաթողիկոսացուն, անձամբ ճանաչելով այդ եկեղեցականին, զիտեին հավանաբար, որ նա լատինամետ քաղաքականության համակիրներից է։ Ուշագրավ է և այն փաստը, որ հենց այս տարիներին Հեթում Թագավորի պահանջով փորձ է կատարվում վերացնելու Աղթամարի կաթողիկոսության վրա 1114 թ. զրբված բանադրանքը, նաև Վասպուրականի հայ մեծամեծների համակրանքը շահելու մտահոգությամբ²⁹։

1295 թ. աշնան ամիսներին մոնղոլական իշխանությունը փոթորկվել էր դահակալական արյունահեղ կոիվներով։ Իշխանությունը զրաված Բայդուի դեմ զահի հավակնորդ Ղազանը՝ Արդուն խանի որդին՝ ուղարկեց իր զորահրամանատար Նովրուզին, որը Նախիջևանում, 1295 թ. հոկտեմբերի 4-ին պարտության մատնեց ու սպանել տվեց Բայդուն³⁰։ Նովրուզ ամիրի և Սադրադդին Սահիպ զիվանի նախաձեռնությամբ մոնղոլական զորամասերն սկսեցին անլուր հալածանքներ քրիստոնյա հպատակների նկատմամբ։ Նախիջևանի, Արտադի և Մարաղայի շրջաններում ոչնչացվեցին մեծ թվով եկեղեցիներ և «բազում վիշտս և անհնարին աղետս հասուցին քրիստոնեից ընդ ամենայն տեղիս»³¹։ Բարերախտաբար այս խժոժությունները երկար շտեկեցին. Նովրուզը շուտով, իր մերձավորների հետ միասին, կասկածվելով դավաճանության մեջ՝ մահապատժի ենթարկվեց։ Ղազան խանը, ընդառաջելով իրեն այցի եկած Հեթում Բ Թագավորին, հրաման արձակեց զազարեցնել բնություններն ու ավերածությունները, այդ բանի մեջ մեղադրելով մահվան դատապարտված Նովրուզին։

Արտադի Ս. Թադեի վանքը մեծապես տուժեց Նովրուզի զորքերից. Տիրացու եպիսկոպոսը անասելի տանջանքների ենթարկվեց ու կողոպտվեց։ Ստ. Օրբելյանն այդ մասին գրում է. «Ըմբռնեցին և զեպիսկոպոսն Առաքելոց զտէր Տիրացուն, և ազգի ազգի անարգանօք ձաղեցին, և առին զամենայն ինչս նորա. բայց ի վանքն նորա, որ էր շիրիմ սուրբ առաքելոյն Թադէոսի, քանդեցին զշինուածս տանցն, աւերեցին, կողոպտեցին և իսպառ կործանեցին»³²։ Նույն դեպքերի մասին տեղեկություններ է գրանցել նաև մի հիշատակագիր. «Ի թվին 262 (1297) էր աշխարհակալ Ղազանն, և եպիսկոպոս Սիւնեաց՝ Ստեփանոս Տարսայճի որդի, և եպիսկոպոս Թադէոսի առաքելոյ՝ Տիրա-

որ Գրիգոր Գ-ի նման «վկայասեր» էր, հունական ու լատինական վարքերի թարգմանություններով ճոխացրել է հայկական Հայտնավորքը)։

28 Հիշատակարանում այդ մասին գրված է. «Եւ մեղ հրամայեալ ի թագաւորէն և ի սուրբ ժողովոյն յառաջագոյն զալ ի սուրբ առաքելոյն Թադէոսի, առ զերահռչակ և արժանապատիւ եպիսկոպոսն տէր Տիրացու, որ էր առաջնորդ սուրբ ուխտիս Թադէոսի առաքելոյ» (Մատենադարան, պատասխիկ N 919)։

29 Հեթում Թագավորին հասցեագրած իր մտերմական նամակի մեջ Գր. Անավարդեցին գրում է. «Աղթամարն օրհնել ետուր» (Կղեմէս Գալանոս, Միաբանութիւն..., Ա, 1690, էջ 439), Մ. Զամչյանը հայտնում է, որ Անավարդեցին «բազում սէր եցոյց յայնմհետէ առ նոյն աթոռ» (Զամչյան, Գ, էջ 289), ուստի պետք է կարծել, որ վասպուրականցիները այդ տարիներին իրոք նպաստել էին Հոռմի եկեղեցուն մերձենալու ծրագրերի իրականացմանը։

30 A. A. Auu-3ade. Նշված աշխ., էջ, 280—282։

31 Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 472—473։ «Մանր ժամանակագրություններ», հատ. II, Նրևան, 1956, էջ 150։

32 Ստ. Օրբելյան, էջ 473։

ցու, որ բազում նեղութիւնս կրեալ յանօրինաց, յաւերել տանց և շինուածոց վանից ի շարագլխէն Նաւոուզայ»³³:

Սրանք են Տիրացու եպիսկոպոսի մասին պահպանված ստույգ վկայութիւնները:

Ս. Թադեի վանքի հարավ-արեւմտյան սյան պատվանդանը շիրմաքարի դեր է կատարել նշանավոր մի անձնավորութեան աճյունի. անցյալ դարավերջին այդ պատվանդանի վրա կարդացվել է «Թվ. Չեէ (այսինքն՝ 1298 թ.) այս է հանգիստ|||» եղծված արձանագրութիւնը³⁴: Կարծում ենք, որ այստեղ ամփոփված են հենց Տիրացուի մասունքները, ուստի նա իր մահկանացուն կրեցել է Նովրուզի կողմից խոշտանգվելուց ընդամենը 2—3 տարի հետո՝ 1298 թվականին:

Տիրացու եպիսկոպոսին հաջորդել է անվանի եկեղեցական գործիչ, Արտազի հայկական իշխանութեան փաստական հիմնադիր Զաքարիա եպիսկոպոսը, որ հայտնի է պատմութեան մեջ Ծործորեցի մականունով: Սրա եռանդուն գործունեութեանն անդրադառնալուց առաջ պետք է պարզել մի թյուրիմացութիւն:

Հեթում թագավորին ուղղած իր նշանավոր նամակի մեջ, որի գրութեան տարեթիվը ստույգ որոշված չէ, Գրիգոր Անավարզեցի լատինամոլ կաթողիկոսը հիշատակում է Մեծ Հայքի նշանավոր այն եկեղեցական գործիչներին, որոնց վերջին երեք տարիների ընթացքում տեղյակ է դարձրել (հարկավ՝ իր նվիրակների միջոցով) կաթողիկ եկեղեցու հետ մերձենալու նպատակով դավանաբանական զիջումներ կատարելու իր ծրագրերի մասին: Նա գրում է. «Եւ յառաջ դայս ասեմք զոր ի դէպ է, որ մեր հայերուն Արեւելցոյ մեծերուն զիրքս գիտացուցել եմք և կեցուցել: Առաջինն Օրպելին, որ է Սիւնեաց արհիեպիսկոպոս, որպէս հոգևոր իշխան գոլով, նոյնպէս և մարմնաւոր, և իւր ընդերացն ցուցաք զգիրքսն և հաստատեցաք այս տարի. և յանցեալ տարին՝ տէր Յոհաննէսի Առաքելոց եպիսկոպոսի, և ի միւս այլ ամին Բջնեցուն և Վարազեցեաց»³⁵:

Մ. Չամչյանի կարծիքով այս գրութիւնը շարագրված պետք է լինի 1294 թվականին: Ըստ այդմ այստեղ Առաքելոց եպիսկոպոս կոչված տէր Հովհաննէսը՝ նույնանալու է Տիրացու եպիսկոպոսի հետ³⁶: 1294 թվականը, սակայն, անհավանական է, քանի որ թղթի գրութեան ժամանակ Սյունյաց եպիսկոպոս է հիշվում Հովհաննէս Օրբելը՝ 1303 թ. վախճանված Ստեփանոս Օրբելյանի հաջորդը: Ուստի ճիշտ պետք է համարել Մ. Օրմանյանին, որ նա-

33 Երուսաղեմ, ձեռ. № 1428, էջ 168:

34 Խ[աչիկ] Վ[արդապետ Դադյան], Համառոտ նկարագիր Շավարշան-Արտազ դավառի Ս. Թադեոս առաքելո վանքի («Արարատ», 1898, էջ 91):

35 «Թուղթ տեսոն Գրիգորի կաթողիկոսի, զոր գրեաց առ կրօնաւոր թագաւորն Հեթում, հայր արքային հայոց Լեոնի» խորագրով այս մեծարժեք գրութիւնն ամբողջապէս հրապարակված է Կղեմէս Գալանոսի «Միաբանութիւն Հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հռովմայ» աշխատութեան մեջ (տե՛ս առաջին հատոր, Հոռոմ, 1650, էջ 441):

36 Թաղմամբով են օրինակները, երբ որեւէ մականուն, հաճախ գործածվելով, բռնել է նշանավոր պատմական դեմքերի անվանց տեղ: Հիշենք թեկուզ Հովհաննէս Սարկավադին, որ միջնադարում հայտնի էր առավել Սարկավազ վարդապետ անունով, կամ էլ Հովհաննէս Վանակահին, որը ճանաչված էր որպէս Վանական վարդապետ: Հովհաննէս Տիրացու եպիսկոպոսն էլ, վերոհիշյալների պէս, կարող էր ամէլի ծանոթ լինել իր Տիրացու մականունով:

մակի շարադրման ժամանակը հարմար է գտնում «գոնե մինչև 1304 հետաձգել»³⁷:

Այս դեպքում մնում է երկու ենթադրություն անել:

Գրիգոր Անավարզեցին իր նամակի մեր կողմից վկայակոչված հատվածում խոսում է Սյունիքի, ինչպես նաև Բջնիի եպիսկոպոսների մասին, որոնցից մեկի միայն մականունն է նշում (Օրպել), իսկ մյուսի անունն էլ չի տալիս: Հայտնի է, որ այդ երկու բարձրաստիճան եկեղեցականներն էլ Հովհաննես են կոչվել³⁸: Այս հանգամանքը ենթադրել է տալիս, որ նամակը շարադրելիս Անավարզեցին, թերևս, շփոթվել է ու գրչի վրիպումով Հովհաննես անունը Բջնիի կամ Սյունիքի եպիսկոպոսներին հատկացնելու փոխարեն, տվել է Առաքելոց աթոռի եպիսկոպոսին: Բացառված չպետք է համարել և այն վարկածը, որ Տիրացու եպիսկոպոսից հետո ու Զաքարիա Մործորեցուց առաջ Արտազի եպիսկոպոս է եղել իրոք ոմն Հովհաննես, այդ դեպքում պետք է արձանագրել, որ նա՝ շատ կարճ պաշտոնավարելով՝ շոշափելի հետք չի թողել պատմության մեջ:

4. Պարոնեք Զաքարիա Մործորեցին և իր գերդաստանը.— ժամանակակիցների կողմից «էքսարխոս Հայոց» կոչված³⁹ և գերադրական տիտղոսներով մեծարված⁴⁰ Զաքարիա արքեպիսկոպոսը որդին էր պարոն Մանվելի: Այս իշխանավորի մասին սկզբնաղբյուրները ժլատ են. անտարակույս նա եղել է Տիրացու եպիսկոպոսի մերձավոր ազգականներից մեկը (հավանաբար եղբայրը), և մեծ գեր կատարել Արտազի հայկական իշխանության տրնտեսական ու քաղաքական գիրքերն ամրապնդելու գործում: Սյունյաց մետրոպոլիտ Հովհան Օրբելը Զաքարիային հասցեագրած իր մի նամակում գրում է. «Դու գիտես, որ մեր հարքն ամենեքին մի էին լեալ քստ մարմնոյ բարեկամութեան և հոգևորի»⁴¹: Ուշագրավ այս տողերն իրավունք են տալիս եզրակացնելու, որ նամակի գրությունից առնվազն մի քանի տասնամյակ առաջ (շուրջ XIII դարի 70—80-ական թվականներին) Առաքելոց աթոռին եպիսկոպոսներ պարզեղ գերդաստանը ամրապնդել էր ավատատիրական իր իրավունքներն Արտազի շրջանում, և «ըստ մարմնոյ» ազգակցական կապեր հաստատել Սյունյաց Օրբելյանների հետ:

Պարոն Մանվելը, Զաքարիայից բացի, ունեցել է ևս շուրս որդի՝ Պետրոս, Սարգիս, Խոթլուբուղա և Արղութ (վերջին անվան վերձանությունը կասկածելի է): 1315 թ. Ս. Թագեի վանքում շարադրված մի հիշատակարանում գրիչ Ռստակեսը, որպես Արտազի շրջանի հոգևոր ու աշխարհիկ առաջնորդներ

37 Մ. Օրմանյան, § 1207, 1222:

38 Հովհաննես Օրբելի մասին տե՛ս մեր «Սյունյաց Օրբելյանների Բուրթկյան հյուղը» հոդվածը («Բանբեր Մատենադարանի», № 9, էջ 190), իսկ Բջնիի եպիսկոպոս տեր Հովհաննեսը հիշատակված է 1302 թ. որպես «սէր Յովհաննէս, որ ունիւր զվերատեսութիւն այցելականն դիտման քահանայականն դասու կատարելապետութեան Այրարատեան նահանգիս, նիստ կայանի ունելով զամուրն Բջնի» («ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Երևան, 1950, էջ 5):

39 Այսպես է կոչված նա Հովհան Օրբելի կողմից: «Մէջոյլս յոյն եկեղեցոյ մէջ կը նշանակէր պատիւ մ' ընդ մէջ պատրիարքութեան և մետրապոլիտութեան» (Վ. Հաջուճի, Կարևոր խնդիրներ հայ եկեղեցոյ պատմութենէն, Վենետիկ, 1927, էջ 309):

40 Իր կուսակիցները նրան մեծարում են «լուսաւորիչ տանս Արևելեան», «ջահ անշիջանելի ի սուրբ եկեղեցի» և բազմաթիվ նման արտահայտություններով, որոնց կհանդիպենք հետագա էջերում:

41 Այս նամակին անդրադառնալու ենք ստորև:

հիշատակում է և՛ Զաքարիա Եպիսկոպոսի, և՛ նրա Եղբայր պարոն Պետրոսի անունները՝ այսպես. «...յառաջնորդութեան այսմ նահանգիս և աստուածախնամ Արտազ գաւառիս սուրբ և առաքելաշնորհ արհիական գլխոյն, տիեզերալոյս և աշխարհածաւալ, բարիախորհ և վերադիտող, պարիսպ ամրութեան հանուրց եկեղեցեաց և բերդ հաստատուն քահանայից և ամենայն բրիստոնէից տէր Զաքարիայի, և պարոն Եղբայր նորին Պետրոսի, և գաւակաց սորին»⁴²:

Զաքարիա Եպիսկոպոսն ու պարոն Պետրոսը, իրենց ձեռքում կենտրոնացրած լինելով Արտազի շրջանի հոգևոր ու աշխարհիկ իշխանությունը⁴³, եռանդուն գործունեություն են ծավալում իրենց գերդաստանի տնտեսական և քաղաքական դիրքերն ամրապնդելու ուղղությամբ:


Նյութական մեծ միջոցների ծախսելով, նրանք պաշտպանական կառույցներով ամրապնդում են իրենց գերդաստանի նստավայրը՝ Մակվի Բերդը, կարգի են բերում միջազգային նշանակություն ունեցող կարավանային ճանապարհի իրենց իշխանության սահմաններով անցնող հատվածը, կառույցում փառահեռ կամուրջներ (տե՛ս նկար 1) և այլ շինություններ, հիմնադրում վանական նոր հաստատություններ և այլն: Ժամանակակից հայ և օտարազգի սկզբնաղբյուրներում կան արժեքավոր վկայություններ Զաքարիայի և նրա Եղբայրների գործունեության այս կողմը լուսաբանելու համար:

Մակվի անառիկ բերդի դիրքն ու պաշտպանական ամրությունները զարմանք են պատճառել շատերին: Նշանավոր պատմագիր Համգուլյա Ղազվինին (ծնվ. 1281 թ.), «Նուզհաթ-ուլ-կուլար» (Սրտերի վայելք) պատմա-աշխարհագրական աշխատության մեջ, որ շարադրված է Արտազի հայկական իշխանության ծաղկման ժամանակաշրջանում, հայտնում է, որ «Մակուն բերդ է մի քարաժայռի ճեղքվածքում և մի գյուղ այդ բերդի ստորոտում, այնպես որ այդ լեռը մինչև օրվա կեսն այդ գյուղն իր ստվերի տակ է պահում. և

⁴² Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 3778, էջ 464ա—464բ (Տե՛ս նաև Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 114—115, ն. Մատ. Տուցակ ձեռագրաց վանուց Սեանայ, Մոսկվա, 1892, էջ 20—21):

⁴³ Շրջանի աշխարհադրական սահմանները ճշգրիտ որոշելու տվյալներ չկան: Մակվի խանությունը, որ ստեղծվել է XVII դարում՝ Արտազի հայկական իշխանության տարածքի վրա, վարչականորեն բաժանված է եղել հետևյալ 18 մահալների. Կալա-Դարասի (Բերդադաշտ), Ավաջուղ, Կարա-կոյուն, Չայփարա, Չայ-բասար, Բարաջուղ, Ալանդ, Ջալալխյան և Միլանյան յուրտեր, Քաջարատ (Քջոտ—Լ. Խ.), Արադ-բանարի, Չալդրան, Սոկմանարադ, Քամաշալար, Դոշ-բանդլարը, Խոշար, Շարուր և Մուշ (տե՛ս Ի. Ի. Исхаги, Исторический очерк макинско-ханства, автореферат, Баку, 1966, էջ 16): Սրանց մեջ կենտրոնական դիրք է զբաղեցրել Բերդադաշտը: Արտազի հայկական հուշարձանների վրա դեռևս պահպանված արձանագրությունների հետազոտ ուսումնասիրության ճանապարհով թերևս երևան բերվեն նոր տվյալներ հայկական իշխանության ծայրային սահմանները որոշելու. պետք է ենթադրել, որ դրանք (այդ սահմանները) XIII—XIV դարերի ընթացքում կայուն չեն եղել: Հակված ենք ենթադրելու, որ Լանկ-Քամուրի արշավանքների շրջանում հայ ազատատերերի իշխանությունը պարփակված էր Բերդադաշտի տարածքով, որ կային շուրջ երեք տասնյակ գյուղեր: Լանկ-Քամուրը, երկրորդ անգամ հայտնվելով այդ կողմերում և իշխանազուն Սորղաթմիշին պատանդ վերցնելով, պարտադրել է Նուրադին իշխանին ըստ հարկի Քամուրյանների տրամադրության տակ զինել 20 այրուձի: Մակվի ողջ շրջանի համար այդ թիվը փոքր է: Հայտնի է, որ Մակվի խանը XIX դարի կեսերին պարտավորված է եղել պատերազմ դուրս բերել «հարյուր այրուձի և մի վաշտ հետիոտն» զինվորներ» (Ա. Քոխմախյան, Մասիս լեռների հարավային ստորոտներ, Բ. մաս, Թիֆլիս, 1882, էջ 6):

«մահրասխան», որ քրիստոնյա հոգևորականների (քեշիշների) մեծն է՝ այդտեղ է բնակվում»⁴⁴ Խիստ ուշագրավ է, որ պաշտոնական շրջաններում, որոնց ներկայացուցիչն էր Ղազվիինին, Մակվի հոգևոր առաջնորդ «մահրասխան», այսինքն՝ Զաքարիա եպիսկոպոսը, ճանաչված էր որպես հայ հոգևորականության պարագլուխ:



Նկ. 1. Մակվի կամուրջը:

Մակվի բերդի մասին շատ ավելի մանրամասն ու հետաքրքրական տեղեկություններ է գրանցել Ռուի Գոնսալես դե Կլավիխոն՝ Մպանիայի Հենրիկոս Գ թագավորի դեսպանը, որ XV դարի սկզբներին, Լանկ-Թամուրի արքունիք մեկնելու ճանապարհին, հյուրընկալվել է այստեղ և գրի անցկացրել իր տպավորությունները. «Ամրոցը, — գրում է նա Մակվի մասին, — կանգնած է բարձր լեռան ստորոտում գտնվող հովտի մի անկյունում, իսկ քաղաքը կառուցված է ավելի բարձր՝ նրա լանջին. հենց քաղաքից ներքև, նույն այդ լանջի վրա բարձրանում է ամուր պարիսպը՝ ներքին աշտարակներով: Այդ պարսպից այն կողմ կային տներ, ուր մարդիկ էին բնակվում, իսկ նրանից անդին՝ նույնպես ապրում էին մարդիկ և լանջը շարունակվում էր ավելի վեր: Այստեղ այժմ կառուցված է մի այլ պարիսպ՝ աշտարակներով և բարձր մարտկոցներով, որ երկարում է ու միանում առաջին պարսպին: Այս երկրորդ պարսպի մուտքը ժայռի մեջ փորված սանդուխներով էր, իսկ մուտքի վրա ի պաշտպանություն նրա կար մի մեծ աշտարակ: Այդ երկրորդ պարսպից այն կողմ, ժայռի վրա տներ էին կառուցված, որոնց միջամասերում՝ աշտարակներ, ինչպես և տներ, ուր իշխանն էր բնակվում, և այստեղ էին պահում

⁴⁴ Համդուլուլլա Ղազվիինի. Նուզհաթ-ուլ-կուլար, բնական բնագիր, Թեհրան, 1336 (1958), էջ 102: Այս տեղեկությունը շնորհակալությամբ ստացել ենք իրանագետ Հ. Փափազյանից:

բնակիչներն իրենց բոլոր պաշարները: Քարաժայռը, որի վրա կառուցված էին այդ տները, շարունակվում էր շատ ավելի վեր, քան տներն ու պարիսպներն էին: Եվ ժայռի բարձունքները կարկառի նման ծածկում են ամրոցը, պարիսպներն ու տները, թերված լինելով նրանց վրա երկնքի նման: Երբ անձրև է տեղում ջուրն երկնքից չի հասնում ամրոցին, որովհետև քարաժայռերն ամբողջովին ծածկում են այն. այսպիսով ամրոցը կառուցված է այնպես, որ նրա վրա կարելի չէ հարձակվել ոչ ցամաքից, ոչ էլ նույնիսկ երկնքից»⁴⁴:

Ուշագրավ է նաև Մակվի բերդի էվլիյա Չելեպիի (XVII դար) նկարագրությունը. ըստ նրա՝ բերդը «կառուցված է բարձր և սեպ ժայռի մը վրա, պատվանդանը նեղ և բարակ է և կաշտարակ է. դեպի երկինք, ամեն կողմն անառիկ ըլլալով: Միայն մեկ դուռ կա, որուն վրա կրնաս բարձրանալ ժայռին մեջ փորված մինարեի նման փոքր սանդուխով: Շարժական կամուրջը, որ գետին վրայն կ'երկարի դեպի բերդը, ամեն երեկո կը բարձրացվի, և այդպես բերդը բոլորովին կառանձնանա»⁴⁵:

Արտազի հայ իշխանները մեկ դարից ավելի, ապավինելով բերդի ամրություններին և հմտորեն կազմակերպելով պաշտպանությունը, դիմադրավեցին մեկը մյուսին հաջորդող նվաճողներին, հակահարված տալով նույնիսկ Լանկ-Թամուրի անհաղթահարելի զորաբանակներին⁴⁶:

Զաքարիա եպիսկոպոսի և նրա պալազատ եղբայրների համատեղ ջանքերը, ինչպես նշեցինք վերը, նշանակալից եղան նաև Արտազի շրջանով անցնող ճանապարհների բարեկարգման գործում: Անցյալ դարի 80-ական թվականներին զրանցված տեղեկությունների համաձայն՝ Մակու գետի վրա Զաքարիան ու պարոն Պետրոսը սրբատաշ քարերով կառուցել են շորս կամարակապ կամուրջներ, որոնց վրա կարդացվել են 1318—1328 թթ. արձանա-

44 Рюи Гонзалес де Клавихо. Дневник путешествия к двору Тимура в Самарканд, в 1403—1406 гг., пер. И. И. Срезневского, СПб, 1881, էջ 158—162: հմմ. Հով. Հակոբյան, Ուղեգրություններ, հատոր Ա, ԺԳ—ԺԶ դար, Երևան, 1932, էջ 113—116 (այս թարգմանությունը անփույթ է կատարված):

45 Հ. Միքայել Հովհաննեսյան, Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970, էջ 312 (թրգմ. Հ. Քյուրդյանի): Մակվի բերդի մասին հետաքրքրական տեղեկություններ կան նաև հայ ուղեգիրների և տեղագիրների աշխատություններում (տե՛ս օրինակ, Ն. Ֆրանգյան, Ատրպատական, Թիֆլիս, էջ 13—14):

46 Բնական ու արհեստական հզոր ամրություններով պաշտպանված այս բերդը, որ միջնադարյան հայկական ռազմավարական արհեստի մի փայլուն կոթող է եղել, բարոյաբանող ավերվել է 1642 թվականին Շահ-Աբրահ Բ-ի հրամանով, 3 տարի դրանից առաջ Թուրքիայի և Պարսկաստանի միջև կնքված հաշտության պայմանագրի թելադրությամբ: Այդ մասին լեռան վրա փորագրված է պարսկերեն չափածո մի արձանագրություն, որ մեջ է բերել ու թարգմանել Մ. Մինորսկին իր «Древности Маку, путевые заметки», (Петроград, 1916) աշխատության մեջ: Արձանագրության առաջին տողը՝ این قلعه قاپان بود Մինորսկին թարգմանել է այսպես. «Эта крепость, бывшая крепостью вепря», قاپان բառը վերձանելով որպես «կարան» (վայրի խող): Այս թարգմանությունը անհամոզիչ է. ըստ երևույթին այդ բառը հայերեն «կապան» բառն է, որ նշանակում է «կիրճ, որի ամենանեղ տեղում ամուր դուռ է շինած՝ ճանապարհն ըստ կամի կապելու կամ բանալու համար» (Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հատոր երկրորդ, Երևան, 1944, էջ 239): Մակվի բերդը իրոք մի կապան էր, ընկած ռազմական կարևոր նշանակություն ունեցող ճանապարհի վրա և պաշտպանված հզոր ամրություններով:

դրություններ⁴⁷։ Այդ կամուրջներից միայն մեկի մասին ունենք բավարար տեղեկություններ. կառուցված է Մակվից 2 կմ հեռավորության վրա. ունեցել է 7 փառահեղ կամարներ, որոնցից պահպանվել են կենտրոնի մեծ-կիսակոր կամարը և մեկ կողմի 3 զմբեթած կամարները (տե՛ս լուսանկարը)։ Կառուցողական ընդարձակ արձանագրությունը (տե՛ս նկար 2), որի բնագիրը հայտնի դարձավ բանասիրությանը միայն վերջերս, լրացուցիչ տեղեկություններ է պարունակում Արտադի իշխանական գերդաստանի պալատականների, մասնավորապես պարոն Պետրոսի և նրա հարազատների մասին։ Պարզվում է, որ նա ունեցել է Սանասար և Մանկասար անունով որդիներ. արձանագրության մեջ հիշատակված են նաև նրա յոթիկներ, (Թամսի կամ Թամթի անունով) և 4 եղբայրները՝ Զաքարիան, Սարգիսը, Խութլուբուղան և Արղութը⁴⁸։



Նկ. 2. Մակվի կամուրջի արձանագրությունը

Կամուրջներից բացի, նշանավոր է եղել նաև Կապի կոշվող կիրճը, որ Ս. Թադևի վանքի և Մակվի միջնամասում բացել է Զաքարիա եպիսկոպոսը՝

47 Ա. Թոխմախյան, Մասիս լեռների հարավային ստորոտները, Թիֆլիս, 1882, էջ 56։ Հեղինակը հայտնում է, որ այդ արձանագրությունները փորագրված են «Հայոց 967—978 թվականներին», հաստատապես շփոթելով 2 (700) և 2 (900) թվանշանները։ Այդ կամուրջները, անստորակույս, կառուցված պետք է լինեն 246 (767—1318)—226 (777—1328) թվականներին (2 և 2 թվերի շփոթության բազմաթիվ օրինակներ կան մեր բանասիրական գրականության մեջ)։

48 Լ. Գ. Մինասյան, Հնագրայան մի կամուրջ Ատրպատականում («Հանդէս ամսօրեայ», 1968, 4—6, էջ 243—246)։

Արձանագրությունն սկզբից թերի է, պակասում է առնվազն կառուցման թվականը և «յառաջնորդութեան» կամ «ի վերադիտողութեան» բառը). պահպանված մասը վերծանվում է այսպիսով. «[Ի թվ.] [] յառաջնորդութեան] Ս. աթոռոյս Թադէոսի տէր Զաքարոյ, եւ Պետրոս որդի պրն Մանուկայ շին[եցի] էջս զայս ի հալալ արդեանց իմոց, յիշատակ ծնողաց իմոց և ամուսնոյ իմոյ Թամսէ, և եղբարց իմոց Սարգիս, և Խութլուբուղին և Արղութի (այս անվան վերծանությունը կասկածելի է), և որդոց իմոց Սանասարին և Մանկասարին, զոր տէր աստուած

«Թուանքչի լեռան շխթայաժայռը պատառելով»։ Ճանապարհաշինական այս վիթխարի աշխատանքի մասին հանդիպակաց ժայռի վրա փորագրված է արձանագրություն, որից վերծանվել են ՉԿԷ (1318) թվականը և «Իշխանութեամբ տէր Զաքարին» բառերը⁴⁹։

Զաքարիա եպիսկոպոսի գործունեությունն արդասավոր է եղել նաև վանական հաստատությունների կառուցման ու վերաշինման ասպարեզներում։ Նրա անվան հետ է առնչվում, հատկապես, Մործորի վանքի հիմնադրումը, որն ավարտված պետք է լինի 1314 թվականից մի քանի տարի առաջ։ Նորակառույց այս վանքի անունով Մործորեցի մականունը ստացած Զաքարիա եպիսկոպոսը, իր կուսակից, անվանի մատենագիր Հովհան Մործորեցու համագործակցությամբ, այստեղ բարձրագույն դպրոց է բացել և նյութական պայմաններ ստեղծել գիտա-մանկավարժական աշխատանքների ծավալման համար⁵⁰։

1319 թ. կենտրոնական Հայաստանում երկրաշարժ է լինում, տուժում է հատկապես Արտազի շրջանը։ Մի ժամանակագիր այդ մասին գրում է. «Ե. ՉԿԷ (1319) թվին եղեւ շարժ յԱրեւելս և զԹաղէոս առաքելոյն վանքն և զեկեղեցին կործանեաց, և զտունս փլոյց և շն. (75) ոգի եսպան, զոր դարձեալ վերստին շինեաց զեկեղեցին և վանքն տէր Զաքարէ»⁵¹։ Շինարարական այդ մեծ աշխատանքներն ավարտվել են երկրաշարժից տասը տարի հետո՝ 1329 թվականին, ու պսակվել Զաքարիա եպիսկոպոսի և նրա մերձավորների մասին կարեոր տեղեկություններ պարունակող մի արձանագրությամբ (տաճարի և արձանագրության լուսանկարները տե՛ս նկ. 3 և նկ. 4)։ Արձանագրությունը փորագրված է վանքի հյուսիսային որմի վրա, երկաթագիր խոշոր տառերով և վերծանվում է այսպես.

«Այս տաճար լուսակերտ և երկնանման առկայացեալ հաստատագոյն հիմամբք ի վերայ աստուածաբնակ շիրմի սուրբ առաքելոյս Թաղէոսի, որ ըստ բազմատեսակ յանցանաց մեր զկործանումն էառ ի շարժէ։ Իսկ ևս

վայելել տացէ մինչև ի կատարած աշխարհի. շինաւղբն և աշխատողքն յիշեալ եղիցին, ամէն։ ԶԱկոր վդպետս (իմա՛ վարդապետս, այսինքն՝ կառուցող վարպետը—Լ. Խ.) յաղաւթս յիշեցէք»։ Ստանալով պր. Մինասյանից այս արձանագրության լուսանկարը (որի համար հայտնում ենք մեր շնորհակալությունը), նշգրտել ենք «Հանդէս ամսօրեայ»-ում տպագրված վերծանությունը։

49 Ս. Հաչկունի, Պարսկահայք (Յղթակցություն) («Արարատ», 1896, էջ 587—588)։ Վերոհիշյալ կամուրջների և այս կիրճի արձանագրությունները, ինչպես նաև Մակվի շրջանի հայկական մյուս հուշարձանները արժանի են ավելի հանգամանալից ուսումնասիրության։ Այժմ, երբ Ս. Թաղեի վանքը վերանորոգվել ու դարձել է իրանահայերի սիրված ուխտատեղին, ավելի լայն հնարավորություններ են ստեղծվել պատմական Արտազի հնագիտական արժեք ներկայացնող հուշարձանների գիտական ուսումնասիրության համար։ Համոզված ենք, որ տեական աշխատանքով, վանքերի ու եկեղեցիների կիսակործան պատերի ու տապանաքարերի վրայից հնարավոր կլինի վերծանել աննկատ մնացած բազմաթիվ արձանագրություններ, որոնք նոր լույս կսփռեն Արտազի պատմության և այդ երկրամասի հայ տերերի գործունեության վրա։

50 Մործորի վանքի հիմնադրման հանգամանքներին և այստեղ ստեղծված բարձրագույն դպրոցի գործունեությանը հանգամանորեն անդրադառնալու ենք վերջում՝ հատուկ պարբերությամբ։

51 Սամուէլի Բանանայի Անեցւոյ, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 157։

նուստ սպասաւոր նմին Զաքարիայ եպիսկոպոս, որդի պարոն Մանվէլայ, կարողութեամբն աստուծոյ սկիզբն արարի կրկին նորոգութեան առաւել քան զառաջինն, ի ժամանակի սաստիկ նեղութեան եւ հալածանաց քրիստոնէից, որ եւ բազում եկեղեցիք քակտին, վասն որոյ արձանագրեցաք զյիշատակս մեր առ ի յիշատակել զմեզ առաջի մեծին այն եւ անարին զենման զառինն աստուծոյ հանդերձ ծնողօք եւ զարմիւք, եւ զաջորդն մեր աղբար որդին զտէր Տիրացուն, այլ եւ զհարազատ եղբայրս մեր զՊետրոս եւ զՍարգիս, որք ըստ կարողութեան նպաստաւորք եղեն բնշիւք: Կատարումն թվ. ԶՀԸ (1329)»⁵²:

Վանքի շրջափակում, անշուշտ, կառուցված են եղել նաև կացարաններ և տնտեսական նշանակություն ունեցող օժանդակ այլ շինություններ. XVII դարից տեղեկություն է պահպանվել Կառնուտի կոչվող ջրմուղի մասին, որ «յառաջ ժամանակս բերեալ էր Զաքարիա եպիսկոպոսն՝ պարոն էմանուէլի որդի»⁵³:

Բերդերի, վանական հաստատությունների, ճանապարհների, կամուրջների և այլ շինությունների⁵⁴ կառուցման մեծածախ աշխատանքներն ի կատար ածելու համար, մանավանդ քրիստոնյաների նկատմամբ ծավալված հալածանքների տարիներին, պետք էր ունենալ մեծ հեղինակություն՝ իշխանության բարձրաստիճան պաշտոնեական շրջանում և նյութական լայն հնարավորություններ: Արտագի եպիսկոպոսն ու նրա եղբայրները օժտված էին և՛ մեկտվ, և՛ մյուսով:

Արտագի հայ ավատատերերի գերդաստանի մասին ժամանակակից սկզբնաղբյուրներում կան նաև այլ ակնարկներ: Նշանավոր մատենագիր Հովհան Մործորեցին, օրինակ, իր քարոզներից մեկի բնծայական-վերջաբա-

52 Ձեռքի տակ ունենք այս արձանագրության հաջող լուսանկարը (տե՛ս նկար 4) և տարբեր անձանց կողմից կատարված հետևյալ չորս վերծանումները. 1. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 340, էջ 122բ—123ա, 2. Յովն. Շանխարունեանց, Ստորագրութիւն կաթողիկէ էջմիածնի և հինգ զաւառացն Արարատայ, էջմիածին, 1842, 3. Խաչիկ վ. Գաղեան, Շաւարշան—Արտագ զաւառի սուրբ Թադէոս առաքելոյ վանքը («Արարատ», 1898, էջ 89), 4. Լ. Մինասյան, Իրանի հայկական վանքերը, Թեհրան, 1971, էջ 12 (արձանագրությունը տպագրված է նաև օրինների կողմից):

53 1679 թ. մի հիշատակարանում Թադեոս առաքյալի վանքի վանահայր Իսահակ վարդապետ Մակվեցին հայտնում է, որ «քակտեալ և աւերեալ» այդ ջրմուղը «կրկին նորոգեցաւ և յորդարուիս աղբիւրն բերեալ ածաւ ի մէջ վանիցս և զեղջս» (Մատենադարան, ձեռ. № 808, էջ 489ա, նաև՝ Գ. Հովսեփյան, Խաղրակյանք կամ Պոսշյանք Հայոց պատմության մեջ, Բ հրատարակություն, Անթիլիաս, 1969, էջ 283):

54 Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում, ինչպես նաև նրանից առաջ ու հետո, Մակվի շրջանում ստեղծված աշխարհիկ և հոգևոր շինությունների մեծաքանակ լինելու մասին վկայություններ կան հայ և օտարազգի ուղեգիրների աշխատություններում: Ա. Թոխմախյանն, օրինակ, ասում է, որ «Մակուայ, Ավաջուղի, Գարայնիի բոլոր թաթարաբնակ գյուղերումը եկեղեցիներ ասում է, որ Վալուայ, Ավաջուղի, Գարայնիի բոլոր թաթարաբնակ գյուղերումը եկեղեցիներ կան, բոլորն էլ ավերված: Լեռներում, գետերի ափերին կառուցած են վանքեր, մատուռներ: Իսկ խաչարձաններ, խաչեր այնքան բազմաթիվ են, որոնք թեև թաթարները անհետացնելու մտքը խորտակում, փշրում են, բայց եթե մինչև համիտյան էլ շարունակեին, հայոց քրիստոնեական կնիքը այդ աշխարհի վրայից չէին կարող եղծել» (Մասիս լեռների հյուսիսային ստորոտները, էջ 52):

Նշանավոր արեւելագետ Վ. Մինորսկին Մակվի շրջանի տարբեր վայրերում տեսել ու նկարագրել է մի քանի հայկական վանքեր ու եկեղեցիներ, հիշատակել, որ Մակվի բերդաժայռի վրա փորագրված են խաչեր ու արձանագրություններ և այլն:

նում, մեծարանքի խոսքեր շռայլելով Զաքարիա հպիսկոպոսի հասցեին, անդրադառնում է նաև նրա մերձավորներին՝ գրելով. «Եւ որք ընդ սովաւ կարգեալ են իշխանութիւնք և ի զարմից սորին շառաւիղեալք բարեպաշտ պարոնայք, զօրութիւն բարձրելոյն հովանի լիցի նոցա»⁵⁵:

Այս տողերով ևս աներկբայելի է դառնում Զաքարիա հպիսկոպոսի դերը Արտազի հայ ավատատերերի ընտանիքում. նրանց քաղաքական կշիռն ու տնտեսական բարգաւաճ վիճակը խարսխված էր Առաքելոց աթոռի հեղինակության և Հայաստանյայց եկեղեցու կազմակերպության մեջ նրա գրաված դիրքի վրա: Նկատի առնելով հենց այս հանգամանքը, ստորև վերլուծելու ենք կարևոր այն տվյալները, որոնք լույս են սփռում XIV դարի առաջին տասնամյակներին հայ եկեղեցու պառակտյալ վիճակի և Կիլիկիայի ու կենտրոնական Հայաստանի հոգևոր և աշխարհիկ պետերի քաղաքական ու դադափարական հակադիր դիրքորոշման վրա, բացահայտելով մասնավորապես Արտազի աթոռի և նրա իշխանազուն հպիսկոպոսի դիրքն ու դերը այդ լարված պայքարում:

5. Արտազի արքունի դավանաբանական պայքարի հորձանքում.—Կիլիկյան Հայաստանի բարձրաստիճան հոգևորականության ամենաազդեցիկ ներկայացուցիչները՝ հանձինս Գրիգոր Անավարդեցի (1293—1307) և Կոստանդին Կեսարացի (1307—1322) կաթողիկոսների, կաթոլիկ եկեղեցու գերիշխանությունն ընդունելը նախապայման էին համարում հայկական թագավորության գոյությունը պահպանելու համար անհրաժեշտ նկատվող և եվրոպական խաչակիր երկրների կողմից շարունակ խոստացվող ռազմական օգնությունն ստանալու: Եկեղեցու վեհապետերը, կուսակից ունենալով Կիլիկիայի հայ ավատատերերի գերակշիռ մասին, եռանդուն քայլերի էին դիմում իրենց քաղաքականության դեմ և՛ Կիլիկիայում, և՛, մանավանդ, Մեծ Հայքում կազմակերպված հուժկու դիմադրությունը հաղթահարելու համար: Դավանաբանական շղարշի տակ կատաղի պայքար էր մղվում հայ ժողովրդի քաղաքական բաղձանքների իրականացման երկու հակադիր ուղիների վրա կանգնած ու սոցիալ-քաղաքական տարբեր դիմորոշում ունեցող խմբակցությունների միջև: Եվ եթե արքայանիստ Սիս քաղաքում կայան գտած Հայոց կաթողիկոսները՝ լատինասեր քաղաքականության ջատագովներն էին, ազգային եկեղեցու ավանդույթներին հավատարիմ կուսակցության պարագլուխները՝ Սյունյաց հպիսկոպոսներն էին. սրանք, որ սիրում էին պճնվել «պոստօֆրոնդէս Հայոց Մեծաց և մետրոպոլիտ Սիսական նահանգի» բարձրագուշ տիտղոսներով, հենվում էին Սյունյաց Օրբելյանների և Հայաստանի աշխարհիկ ու հոգևոր մյուս ավատատերերի միասնական ուժի վրա, որոնք, գիտակցելով հեռավոր եվրոպայից օգնություն ակնկալելու անիրական լինելը, Ամենայն Հայոց կաթողիկոսական աթոռը մայր հայրենիք տեղափոխելու ծրագրեր էին մշակում, գրտնելով, որ զարեքով սրբագործված ազգային ավանդություններն ինքնին՝ դադափարական հզոր ազդակ են ժողովրդի ինքնագիտակցության և գոյատևման համար: «Հաւան ևմք մեք ընդ մեր հարսն ի դժսխս իջանել, եւ ոչ ընդ հոռոմոց յերկինս ելանել»—այս էր նրանց կարգախոսը, որ այսքան գեղեցիկ ու դիպուկ ձևակերպել էր Սյունյաց մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանը:

⁵⁵ Երուսաղեմի մատենադարան, ձեռ. № 1003, էջ 68:

Արտազի թեմի առաջնորդ Զաքարիա եպիսկոպոսը, ընթանալով իր նախորդ Տիրացու եպիսկոպոսի նախագծած ուղիով, հռոմեական եկեղեցուն մերձենալու քաղաքականության ջերմ կողմնակիցն ու ջատագովն էր Մեծ Հայքում. «Տէրս Զաքարիա զինքն նուստս և հնազանդ ունի և հրամանակատար յաշորդին Պետրոսի» (այսինքն՝ Հռոմի պապին), այսպես է գրում նրա մասին իր կուսակիցներից մեկը⁵⁶:

Այս հաստատվում է ժամանակակիցների բազմաթիվ վկայություններով. ֆրանցիսկյան միաբանության անդամ դարձած մի հայ կրոնավոր՝ Դանիել Թավրիզեցին, լատիններեն լեզվով շարադրված դավանաբանական իր գրվածքի մեջ հայտնում է, որ «Հռոմեական եկեղեցու հետ միավորված ժամանակակից հայերը ընդունում են սուրբ հոգու բխումն ինչպես հորից, այնպես էլ որդուց. ես համոզված եմ, որ այդ հենց այդպես է, քանի որ անձամբ տեսել եմ մի քանիսի, այսինքն՝ տեր թագավորի, տեր կաթողիկոսի և Մեծ Հայքում տեր Զաքարիայի, ինչպես և Հռոմի եկեղեցու հետ միավորված մի քանի այլ անձանց մոտ»⁵⁷:

Հայ եկեղեցու առաքելական հիմնադրության մասին գոյություն ունեցող ավանդությունների, կաթողիկոսյանը հարած հայերի և, մասնավորապես, Զաքարիա եպիսկոպոսի մասին խիստ ուշագրավ տեղեկություններ է գրանցել Դոմինիկյան կրոնավոր Ժուրդեն դե Սևերակը, որ Հնդկաստան ուղևորվելու ճանապարհին՝ 1320 թ. ձմռանը եղել էր Հայաստանում: Նրա ուղեգրության Արտազի շրջանին և Ս. Թադեի վանքին վերաբերող հատվածը մեջ ենք բերում ստորև ամբողջությամբ, շնայած այն պարունակում է նաև մեր նյութին անմիջապես չառնչվող տեղիներ. «[Արարատ] լեռան վրա,—գրում է նա,—կանգնած է մի տուն, որն ինչպես պատմում են, կառուցել է ինքը՝ Նոյր, իր տապանը թողնելուց հետո: Ասում են նաև, որ լեռան վրա ինչ-որ տեղ պահպանվել է Նոյի տնկած խաղողի որթը, որի գինուց Նոյն արբեց: Իսկ Նոյի որթատունկի հատիկներն այնքան հսկայական են, որ մարդիկ իրենց աչքին չեն հավատում: Այս բոլորի մասին ես իմացա մեր մի կաթոլիկ արքեպիսկոպոսից՝ մեծ և ուժեղ վեհապետից: Նա իշխում է այս կողմերում և ըստ ամենայնի արժանի է վստահության⁵⁸: Իսկ ես, շնայած եղել եմ այստեղ (հավատացեք իմ խոսքերին), բայց ոչ ամռանը, այլ ձմռանը:

Այս Մեծ Հայքը շատ է տառապել. այստեղ նահատակությամբ իրենց վախճանն են գտել երեք առաքյալներ՝ Բարթուղիմեոսը, Սիմեոնն ու Հուդան⁵⁹:

56 Նրուսադեմի մատենադարան, ձեռ. № 789, էջ 149:

57 Տե՛ս Դանիել Թավրիզեցու «Հայերին վերադրված մոլորությունների կապակցությամբ եղբայր Դանիելի պատասխանը» խորագրով լատիններեն աշխատությունը՝ հետևյալ հրատարակության մեջ. «Recueil des Historiens des Croisades. Documents arméniens», t. II, Paris, 1906, էջ 561:

58 Ինչպես կտեսնենք ստորև, խոսքը Զաքարիա Սործորեցու մասին է, ուստի Ժուրդեն դե Սևերակի գրանցած տեղեկությունների սկզբնաղբյուրը նա է՝ Առաքելոց աթոռի եպիսկոպոսը:

59 Բարթուղիմեոսը համարվում է Քրիստոսի 12 աշակերտներից մեկը, որ ըստ ավանդության քարոզել է խորասանում, Պարսկաստանում և Հնդկաստանում, բայց ի վերջո հաստատվել է Հայաստանում ու նահատակվել Սանատրուկ թագավորի կողմից: Սիմեոնը կամ Շմավոնը նույնպես 12 առաքյալական առաքյալներից է համարվում. քարոզել է, իբր, Եգիպտոսում, Լիբիայում և Մավրիտանիայում. ոմանք նրան նահատակված են համարում Բրիտանիայում, ուրիշներ՝ Նրուսադեմում, իսկ հայկական միջնադարյան ավանդությամբ՝ Հուդա-Թադեոսի հետքերով մեկնել է Հայաստան և վկայական իր վախճանը գտել Ռշտունյաց դավառում: Հուդան

Եւ տեսել եմ այն զնգանք ուր տանջվել են Սիմոնն ու Հուդան և աղբյուրները, որոնք առաքելական դավադանի հարվածով ժայթքել են կենսատու ժայռից: Ութ, տասը, տասնյոթ անգամ դավադանը դիպել է քարին, և այժմ այդտեղ հենց այդքան աղբյուրներ կան, իսկ նրանցից ոչ հեռու կառուցված է մեծ ու գեղեցիկ մի եկեղեցի:

Այս Մեծ Հայքում նահատակվել է մի հիանալի կույս Սանդուխտ⁶⁰ անունով և նա արքայադուստր է եղել: Այստեղ (Մեծ Հայքում) են նետել վիրապի մեջ՝ առյուծի և վիշապի բերանը՝ հայերին կաթոլիկական հավատքի բերող սուրբ Գրիգորին, և այդ տեղի է ունեցել, երբ Հայաստանում թագավորում էր Տրդատը, սուրբ Սեղբեստրոսի և կայսր Կոստանդիանոսի ժամանակներում: Նույն այս Հայաստանում է մորթվել երանելի Հակոբ վկան⁶¹:

Այս նահանգում (այսինքն՝ Հայաստանում) մեծ մասամբ բնակվում են հերձվածող հայեր, քարոզիչ և կրտսեր եղբայրները⁶² կաթոլիկության և դարձի բերել այս հերձվածողներից⁶³ ճիշտ շորս հազար, թերևս նույնիսկ ավելի անձանց, և այս բացարձակ ճշմարտություն է:

Եվ իրոք, մի մեծ արքեպիսկոպոս՝ տեր Զաքարիան, իր ողջ հոտի հետ միասին, բնդունել է մեր կրոնը: Ապավինելով տիրոջ ողորմածությանը մենք հուսով ենք, որ բոլոր (հերձվածողները) շուտով դարձի կբերվեն, եթե այդ գործին ձեռնամուխ լինեն արժանավոր եղբայրներ:

...Այս Հայաստանը երկայնությամբ ձգվում է Սեբաստիայից մինչև Օրոգի (իմա՝ Մուղանի) հարթավայրը, իսկ լայնությամբ՝ Պարխար լեռից մինչև Թավրիզ: Պարխարից Թավրիզ քսաներեք օրվա ճանապարհ է, Սեբաստիայից Մուղան՝ քառասուն օրվա⁶⁴:

Ժուրգենի հաղորդած տեղեկությունները կարևոր են նաև իշխանության վարչական կենտրոններում և այլ հայաբնակ վայրերում կաթոլիկ դավանանք բնդունած բնակչության թիվը պարզելու համար. «Այստեղ,—գրում է նա Թավրիզի մասին,—մենք (իմա՝ կաթոլիկները) ունենք բավականին գեղեցիկ մի եկեղեցի՝ հազարի շուրջ հավատացյալներով. նախկինում նրանք հերձվածողներ էին, իսկ այժմ դարձի են եկել մեր հավատքի: Գրեթե նույնքան նորադարձներ կան Ուրում (իմա՝ Հեր կամ Խոյ)... այս քաղաքը հարուստ է և գտնվում է Թավրիզից երկօրյա հեռավորության վրա. ճիշտ այդպես հինգ-

կամ Քաղեոսը համարվում է Քրիստոսի 70 աշակերտներից մեկը՝ Քովմա առաքյալի եղբայրը. ըստ ավանդության բժշկել ու բրիստոնեական հավատքի է բերել Եղեսիայի հայ թագավոր Արգարին, նահատակվել է Սանատրուկ թագավորի կողմից, արքայադուստր Սանդուխտի հետ միասին (տե՛ս Մ. Ավգերյան, Ծաղիկ վարուց սրբոց, Վենետիկ, 1800, էջ 52, 106—107, 227—228):

Զաքարիա Մործորեցին իրեն համարում էր հիմնականում Քաղեոս առաքյալի հաջորդ, սակայն ըստ հարկի պճնվում էր նաև Բարթոլոմեոսի և Սիմոնի հեղինակությամբ, կոչվելով առաքելոց եպիսկոպոս:

⁶⁰ Սանդուխտ անձնանունը թյուրիմացաբար արտածելով հայերեն սանդուխտ (աստիճան) բառից եվրոպացի ուղեգիրը տվել է այդ բառի լատիներեն թարգմանությունը՝ Scala:

⁶¹ Խոսքը հավանաբար Հակովիկ Պարսկի մասին է (տե՛ս Ծաղիկ վարուց սրբոց, էջ 188—189):

⁶² Քարոզիչ եղբայր էին կոչվում Դոմինիկյան միաբանության անդամները, իսկ կրտսեր եղբայր (նաև՝ միմյուր)՝ ֆրանցիսկյանները:

⁶³ Կաթոլիկ այս կրոնավորը հերձվածող է անվանում բոլոր ոչ կաթոլիկ բրիստոնյաներին, ավյալ ղեպրում լուսավորչադավան հայերին:

⁶⁴ „После Марко Поло...“, էջ 137—138:

հարյուր կամ վեցհարյուր (կաթուղիկներ) են հաշվվում Սուլթանիայում... այն-
տեղ ևս մենք ունենք շատ գեղեցիկ մի եկեղեցի»⁶⁵։

Մերձավոր Արևելյան երկրներում կաթուղիկ եկեղեցու ծավալած քարոզ-
չական աշխատանքի հիմնական ծանրությունը մինչև 1318 թ. ընկած էր
ֆրանցիսկյան միաբանության անդամների ուսերին։ Նրանք առաջին հերթին
հայտնվում ու հենակետեր էին ստեղծում միջազգային տարանցիկ առևտրի
հիմնական մայրուղիների վրա գտնվող այն վայրերում, որոնք նշանակալից
դեր էին կատարում որպես ապրանքափոխության կենտրոններ և կարավա-
նային երթևեկի կանգառներ։ Ըստ այդմ էլ՝ նրանց հարում էին հասարակա-
կան այն շերտերը, որոնք ներդրում էին լինելով միջազգային առևտրի ոլորտի
մեջ, անմիջական շահ ունենին եվրոպական երկրների հետ տնտեսական և քա-
ղաքական կապերի հետագա ամրապնդումից։ Ինչպես նշել ենք արդեն, ֆրան-
ցիսկյան միաբանության քարոզիչ անդամները XIII դարի վերջերին և XIV-ի
սկզբներին իրենց ազդեցության տակ էին առել Կիլիկիայի Հայաստանի աշ-
խարհիկ ու հոգևոր ավատատերերից շատերին և, առաջ շարժվելով դեպի
արևելք, քայլ առ քայլ ներթափանցում և հենակետեր էին ստեղծում պատ-
մական Հայաստանի առևտրա-արհեստագործական նշանավոր կենտրոննե-
րում և Անդրկովկասի ու Իրանի հայաշատ քաղաքներում։ Դեռևս 1302 թ.
Սյունյաց մետրոպոլիտ Ստեփանոս Թրբելյանը, իր «Հակաճառութիւն ընդդէմ
երկարնակաց» վիճարանական գրվածքի մեջ դառնություն անդրադառնում
էր լատինական եկեղեցու ազդեցության տարածման երևույթին. «Կիլիկիա
բոլոր,—գրում էր նա,—որ տեղի էր մեր պարծանաց, յայս (իմա՛ լատինական
եկեղեցու դավանանքով) վարակեալ կայ, և զլիաւոր քաղաքք որ ի Հոռոմք՝
ի սոյն մոլորեալ են, և եհաս մինչև առ մեզ, զի քարոզի այս յայտնապէս ի
թաղաւորական քաղաքն ի Տփլիս, և ի հին տունն Բաղրատունեաց յԱնի՝ որ
ի Շիրակ, նաև ի Թավրէժ շահաստան, և յայլ բազում տեղիս»⁶⁶։

Ժուրղենը, ինչպես տեսանք քիչ առաջ, Թրբելյանի այս ցանկը լրացնում
է Հեր և Սուլթանիա քաղաքների անուններով, որոշակի տեղեկացնելով, որ
կաթուղիկ եկեղեցին հետևորդներ է ձեռք բերում այդ վայրերում ոչ թե մահ-
մեղականներին քրիստոնյա դարձնելով, այլ «հերձվածող» քրիստոնյաներին,
այսինքն հայերին՝ «դարձի բերելով»։

Լատինական եկեղեցուն մերձենալու քաղաքականության վարիչները,
Կիլիկիայում՝ թաղավորն ու կաթողիկոսը, Մեծ Հայքում՝ Արտադի եպիսկո-
պոսը, դավանաբանական և ծիսական տարբերությունները վերացնելու իրենց
պահանջը հիմնավորում էին տեսական այն գրույթով, որ, իբր, Հայոց եկե-
ղեցին ի սկզբանե անտի (Գրիգոր Լուսավորչի ժամանակներից սկսած), կա-
թուղիկ եկեղեցու մասն է կազմել, ուստի, հետագայում առաջացած տարբերու-
թյունները վերացնելով, եկեղեցին վերականգնում է իր անաղարտ վիճակը։
Սակայն ընդունելով Հոռոմի պապի գերիշխանությունը, լատինամետ հայ գոր-
ծիչները հեռու էին այն մտքից, թե այդ քայլով ոտք են դնում ինքնալուծարքի
ճանապարհի վրա։

⁶⁵ Նույն տեղում, էջ 164։

⁶⁶ Տեսո՛ւ Ստեփաննոսի նախագահ արքեպիսկոպոսի՝ Հակաճառութիւն ընդդէմ երկարնա-
կաց, շարադրեալ ի թուին Հայոց ԶԾԱ, Կ. Պոլիս, 1756, էջ 42—43 (հմմ. նաև՝ Մատենադարան,
ձեռ. № 573, էջ 63ա—63բ)։

Այլ վիճակ ստեղծվեց Հայաստանում 1318 թվականից հետո, երբ Հովհաննես ԻԲ պապի (1316—1334) հատուկ կոնդակով ֆրանցիսկյան և դոմինիկյան միաբանությունների միջև քարոզչական գործունեության շրջանների նոր բաժանում կատարվեց: Վաշխառու պապի կամակատարները դարձած դոմինիկյան կրոնավորները, ի տրիտուր իրենց ծառայությունների, որպես քարոզչության ասպարեզ ստացան Ասիական արևելքի այն երկրները, որոնցով անցնում էին միջազգային առևտրի ամենաբանուկ ճանապարհները: Այդ կոնդակով հիմնադրվեց մի նոր արքեպիսկոպոսություն՝ Սուլթանիա կենտրոնով, որի անձայրածիր սահմանները որոշվում էին այսպես. «Արարիո (իմա՝ Արարատ) լեռից սկսած դեպի Արևելք, ներառյալ Պարսկական Թաթարիայի մեծ պետության... ողջ կայսրությունը... ինչպես և Դոխիի ու Խաչգուրի թագավորությունը (այսինքն՝ Միջին Ասիական երկրները) և նրանց ենթակա բոլոր շրջանները: Այս արքեպիսկոպոսությանն են ենթարկվում նաև Հրնդկաստանն ու Եթովպիան, իսկ արքեպիսկոպոսն ինքը այսուհետև նստելու է Սուլթանիա քաղաքում, քանի որ այդ արժանավայել ու մեծ բնակավայր է»⁶⁷:

Սուլթանիայի արքեպիսկոպոս է նշանակվում դոմինիկյան միաբանության անդամ Ֆրանկո Պերուչացին, որն իր ենթակայության տակ ուներ վեց եպիսկոպոսություններ, որոնցից երեքը՝ Ատրպատականի Թավրիզ, Մարաղա և Դեհլսարկան քաղաքներում⁶⁸:

Դոմինիկյան այս քարոզիչները սկզբնական շրջանում համագործակցում էին ֆրանցիսկյանների հետ, հաշվի առնելով, որ նրանք այդ վայրերում ստեղծել էին արդեն որոշ հենակետեր, կառուցել եկեղեցիներ և հետևորդներ շահել: Դոմինիկյաններն սկզբից զգույշ էին նաև հայոց եկեղեցու պաշտոնեության հետ իրենց հարաբերություններում, խուսափելով իրենց թշնամական դիրքը բացահայտելուց:

Սակայն քիչ անց, ամրապնդելով իրենց դիրքերը նախիջևանի գավառում⁶⁹ և իրենց ազդեցությունը տարածելով ֆրանցիսկյանների ստեղծած լատինադավան համայնքների վրա, նրանք անսքող պայքարի դրոշ են պարզում հայոց եկեղեցու դեմ: «Իրենց գլխավոր զենքն էր,—գրել է նրանց մասին հայոց եկեղեցու պատմության նշանավոր հետախույզ Մ. Օրմանյանը,—շարք մը պիտակ հեղինակություններով և իմաստակ պատճառաբանություններով խիղճերը վրդովել, Հայոց եկեղեցվուն մեջ պաշտված խորհուրդները անվավեր ու չեղյալ նկատել, և հավատացելոց մկրտության և պաշտոնից ձեռնադրության վրա կասկածներ հարուցանելով, կրկնամկրտություններ և կրկնաձեռնադրություններ ընել, հայ եկեղեցիներու և սրբություններու նվիրականությունը ուրանալ և անարգել, և պարզապես հայադավանները անհավատներու հավասարել»⁷⁰:

⁶⁷ G. Golubovich, Biblioteca bio-bibliografica della Terra Santa e dell' Oriente Francescono, t. II, էջ 570 և հտ., օգտվել ենք M. Я. Свем-ի «После Марко Поло» աշխատության միջնորդությամբ:

⁶⁸ Marcus Antonius v. d. Oudenrijn. Linguae Haicanae Scriptores, Bern, 1960, էջ 19—20:

⁶⁹ Այստեղ կաթոլիկ դավանանք է ընդունում Երնջակի շրջանի Քոնա, Ապարաներ, Սալիթաղ, Ապրակունիս, Խոշկաշեն և Զահուկի շրջանի Զահուկ և Շահապոնս գյուղերի հայ բնակչության մեծ մասը:

⁷⁰ Մ. Օրմանյան, Ազգապատում, § 1350:

Արտազի շրջանի հայ ազատատերերի գերդաստանը, պարոնտեր Զաքարիա եպիսկոպոսի գլխավորությամբ, փորձում է ի շահ իր նպատակների օգտագործել Հայաստանի և Ատրպատականի հարևան շրջաններում խարխալ նետած կաթուղիկ քարոզիչների գաղափարական ազդեցությունն ու կշիռը։ Ստեղծված պայմաններում Մեծ Հայքի աշխարհիկ ու եկեղեցական գործիչները, ի պաշտպանություն ազգային եկեղեցու գաղափարական և կազմակերպչական դիրքերի, հակամիջոցների պետք է դիմեին։ Այսպիսով, Հայաստանում սկսվում է դավանաբանական լարված պայքարի մի շրջան, որ տևում է տասնամյակներ, ունենալով մակերնթացության և տեղատվության իր փուլերը։ Մեզ, բնականաբար, հետաքրքրելու են այդ պայքարի այն դրվագները, որոնք առնչվում են Արտազի շրջանին և Թադևոս առաքյալի վիճակին։

Այս առումով ուշագրավ են հատկապես Սյունյաց մետրոպոլիտ Հովհան-Օրբելի (հիշատակված է որպես եպիսկոպոս 1302—1323 թթ.) դույզ նամակները, մեկն ուղղված կաթողիկոսին, մյուսը՝ Զաքարիա Մործորեցուն։ Բանասիրության մեջ տարբեր կարծիքներ են հայտնվել այդ գրությունների շարադրման ժամանակի մասին։ Մ. Զամչյանը գրված է համարում 1305-ին՝ կապելով Գրիգոր Անավարդեցու հետ, Մ. Օրմանյանը գրեթե համամիտ է նրան, իսկ Գ. Հովսեփյանը, գրության հնագույն եզրը 1314-ը համարելով, ավելի հավանական է գտնում 1317—1318 թվականները։

Նամակներից պարզվում է, որ կաթողիկոսը Արևելյան Հայաստան է ուղարկել Գրիգոր անունով իր նվիրակին, պատվիրելով նրան մեռն բաշխել միայն թեմական այն առաջնորդներին, ովքեր հանձն կանեն ջրախառն գինով պատարագ մատուցել և Քրիստոսի ծննդյան տոնը դեկտեմբերի 25-ին կատարել։ Հայոց եկեղեցու պատմության XIV դարի առաջին տասնամյակների կարևոր իրադարձությունների լույսի տակ դժվար չէ հանգել այն եզրակացության, որ այդպիսի վճռական պահանջով կաթողիկոսը կարող էր հանդես գալ միայն Սսի (1307 թ.) կամ Աղանայի (1317 թ.) եկեղեցական ժողովներից հետո, հենվելով հենց այդ ժողովների խիստ կասկածելի իրավական ուժ ունեցող որոշումների վրա։ Հարցի մանրակրկիտ քննությունը մեր նպատակից դուրս համարելով, մենք ևս այդ նամակների գրության ամենահավանական տարեթիվ համարում ենք 1317—1318 թվականները⁷¹։

Արդ՝ կաթողիկոսին հասցեագրված իր նամակում Սյունյաց մետրոպոլիտը հայտնում է, որ արտահայտելով իր վիճակի իշխանների, ազատների, հոգևորականության ու ժողովրդի միասնական կամքը, նա հրաժարվում է կատարել կաթողիկոսի պահանջը, և մնալով ազգային եկեղեցու ավանդական

71 Այսպես ենք կարծում հաշվի առնելով նաև Հովհան-Օրբելի Զաքարիա Մործորեցուն ուղղած նամակի մի հատվածը, ուր խոսք կա այն մասին, որ Արտազի եպիսկոպոսը պարծենալիս է եղել ինչպես իր, այնպես էլ իր շուրջ համախմբված անձանց գիտության վրա («...թէ զու այնպէս գիտուն եղար՝ որպէս կարծես զբեզ կամ զբոյրդ՝ որպէս պարծես հանապազ և խորխոտացեալ ևս առաջի իշխանաց»): Պարզ է, որ Զաքարիան այդպիսի դիրք կարող էր բռնել 1314-ից հետո միայն, երբ արդեն հիմնադրել էր Մործորի վանքը՝ բարձրագույն իր դպրոցով, իրեն կուսակիցը դարձրել Հովհաննես Երզնկացի—Մործորեցի վարդապետին և այլն։ Որ այս նամակների շարադրման ժամանակ Երզնկացին արդեն հաստատվել էր Մործորի վանքում ու դարձել Զաքարիայի մերձավոր գործակիցը, պարզ երևում է Մ. Զամչյանի ձեռքի տակ եղած և օգտագործած նյութերից (տե՛ս «Պատմութիւն Հայոց», հատ. Գ, Վենետիկ, 1786, էջ 306—308)։

դիրքերի վրա, իրեն ազատ է համարում այսուհետև վարելու ինքնուրույն քաղաքականություն⁷²:

Հովհան-Օրբելի Զաքարիա Մործորեցուն հասցեագրած նամակից պարզվում է, որ վերջինս ոչ միայն հաճույքով կատարել է կաթողիկոսի պահանջը՝ պատարագի խորհրդին ջուր խառնելով և դեկտեմբերի 25-ին Քրիստոսի ծննդյան տոնը կատարելով, այլև ընդառաջ է գնացել կաթոլիկ եկեղեցուն բազմաթիվ այլ հարցերում ևս (տարվա ընթացքում պահքի 50 օր է հաստատել, արգելել է աշխարհիկ քահանաների ամուսնությունը և այլն): «Ի հակառակաց կողմն դարձուցէր զքեզ,—մեղադրում է նրան Հ. Օրբելը,—և երդամաք չափ քակես զեկեղեցի աստուծոյ, և զհնազանդեալքս ի հոգևոր զխոյն օծուես, երբեմն իշխանաբար սաստելով, երբեմն գիրս և խօսս շարախօսութեան զմէնց առ հոգևոր տէրն առաքելով, և ի նմանէ մեզ սաստ և սպառնալիս տաս բերել» և այլն⁷³:

Մ. Զամչյանի ձեռքի տակ եղել են նաև այլ թղթակցություններ. Զաքարիայի պատասխան-նամակը Հովհան Օրբելին, վերջինիս երկրորդ գրությունը և այլն: Դրանց տվյալներով Արտագի եպիսկոպոսը կաթոլիկ եկեղեցուն ընդառաջ գնալու իր գործելակերպը փորձում է արդարացնել տեսական այն դրույթով, որ «Օրէնք աստուծոյ զամենեանս միաւորէ ընդ Քրիստոսի, իսկ օրէնք սատանայի՝ բաժանէ ի նմանէ, զի մի է տէր, մի հաւատ, մի օրէնք, և զլուխ օրինացն՝ սէր, և մի եկեղեցի՝ ժառանգ սիրոյ նորա, յորմէ արտաքսեալ որ ոչ ունի բնաւին փրկութիւն»: Ինչպես հրեաները հնում ունեցել են մի քահանայապետ, այնպես էլ քրիստոնյաները՝ պետք է մեկ հոտ լինեն՝ մեկ հովիվ ունենալով, դաս առնելով հրեաների պատմութիւնից. «Որչափ ժամանակ հրեայն ի մի տաճար երկրպագէին և մի թագաւոր ունէին, աստուած ընդ նոսա էր, իսկ յորժամ բաժանեցան՝ յաւար և յափշտակութիւն մատնեցան. որպէս և այժմ քրիստոնեայք՝ տուեալ եղեն կոխան հեթանոսաց»—գրում է նա⁷⁴:

Սսի և Աղանայի ժողովների որոշումները Մեծ Հայքի թեմերին պարտադրելու մտահոգությամբ կաթողիկոսն ու իր գործակիցները եռանդուն քայլերի են դիմում. գրվում են հորդորական նամակներ՝ հասցեագրված ոչ միայն վիճակավոր առաջնորդներին, այլև անվանի ու հեղինակավոր գիտնական-վարդապետներին: Պահպանվել են այդպիսի մի քանի նամակների Նսայի Նշեցու շարագրած պատասխան-գրությունները: Գլաձորի համալսարանի մեծ բաբունապետը, իր և իր կուսակիցների անունից («ես և հաւանողքն ինձ»—գրում է նա) հայտնում է, որ քրիստոնեական եկեղեցիների միաբանությունը իրոք աստվածահաճո մի գործ է և սատանան է, որ «ատելութեամբ զմեզ առ իրեարս զրգոէ և բաժանէ, զի դիւրաւ հաղթեսցէ»: Բայց իրատես լինելով, նա գտնում է, որ քանի դեռ չեն ստեղծվել եկեղեցիների միավորման համար անհրաժեշտ պայմաններ, ամեն մի եկեղեցի, առաջնորդվելով «հին սովորութիւն քաղցր է իւրաքանչիւր ումեք» սկզբունքով, պարտավոր է հավատարիմ մնալ անցյալից ժառանգած և ազգային երանգ ստացած ավանդություններին, միաժամանակ հարգելով մյուսների օրենքներն ու սովորույթները:

72 «Ընաբաղ», 1860, էջ 43: Հմմտ. Մատենադարան, ձեռ. № 8245, էջ 182:

73 «Ընաբաղ», 1860, էջ 56: Հմմտ. ձեռ. № 8245, էջ 183:

74 Մ. Զամչեանց, Պատմութիւն Հայոց, հատ. Գ, Վենետիկ, 1786, էջ 306—308:

Նշեցի բարունապետը կիլիկեցիների կողմից «սուրբ» հռչակված ժողովը (ամենայն հավանականությամբ խոսքն Ադանայի ժողովի մասին է)՝ «սուտ ժողով» է կոչում, ելնելով այն իրողությունից, որ՝ նախ, ժողովին մասնակցել են սակավաթիվ պատգամավորներ (այն էլ միայն կիլիկիայի ներքին թեմերից), և ապա, շատերը հենց տեղում հակառակել են ու «դեռ տակալին ևս հակառակին»՝ մերժելով ժողովի վնասակար որոշումները. իմաստասեր վարդապետը իր միտքն եզրափակում է այսպես. «Իրք, որ ի սահմանին իւրում հակառակութիւն կրէ՝ յայտ է թէ ոչ է ճշմարիտ, այլ սուտ»⁷⁵: Ի վերջո Եսայի Նշեցին հայտնում է, որ ինքը և իր կուսակիցները պատրաստ են նույնիսկ իրենց կյանքը զոհարելու, բայց չեն շեղվելու երբեք նախնիներից ժառանգած ու դարերով սրբազործված ավանդություններից⁷⁶:

Մեծ Հայքի քաղաքական ու եկեղեցական գործիչները չեն սահմանափակվում լոկալ դադափարական պայքար մղելով, ի պաշտպանություն իրենց սկզբունքների գրվածքներ շարագրելով ու բանավիճելով: Շուտով գործարար քայլեր են կատարվում Զաքարիա Մործորեցու լատինամետ գործունեության

75 Ուշագրավ այս գրությունը, որ պահպանվել է Մաշտոցի անվան մատենադարանի № 9622 ձեռագրում (էջ 734—753), խորագրված է այսպես. «Թուղթ Եսայեայ վարդապետին, պատասխանի թղթույ Ստյ կաթողիկոսին և թագաւորին»: Գրության ստույգ տարեթիվը հայտնի չէ, բայց գրված պետք է լինի նույն այս տարիներին՝ XIV դարի 10-ական թթ. վերջերին:

Հարկ է նշել այստեղ, որ շնայած Եսայի Նշեցի բարունապետի անունը Գլաձորի համալսարանի առնչությամբ վերջերս շատ է հիշվում, բայց նրա կյանքի ու գիտական գործունեության գրվածքները գիտական ուսումնասիրության առարկա չեն հանդիսացել: Աշխարհով մեկ ցրված հայերեն ձեռագրերի մեջ նրա անունով կան շուրջ երկու տասնյակ աշխատություններ՝ մեկնություն, ճառ, նամակ, շրջաբերական գրություն և այլն, որոնց մեծագույն մասը ոչ միայն չի հրապարակված, այլ և չի գնահատված մասնագետների կողմից: Հ. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարան»-ի հատորում (Երևան, 1944, էջ 128) թվարկված են Նշեցու 12 աշխատությունները. առանց հատուկ քննություն կատարելու այդ ցանկը կարող ենք լրացնել հետևյալ գործերով. (1) «Թուղթ վասն կարգաց եկեղեցույ և ժամուց, զոր արարեալ է Եսայի վարդապետի ի խնդրոյ վարդապետաց Սիւնեաց և առաջնորդաց վանորէից, աստուածասէր կրօնաւորաց» (Մատենադարան, ձեռ. № 5154, էջ 259ա—261ա). (2) «Երիցս երանեալ բազմերջանիկ վարդապետին Եսայեայ, արարեալ ի խնդրոյ Ստեփանոս վարդապետի Թեղենեցոյ, Յաղագս եկեղեցոյ խորհրդեան» (ձեռ. № 9622, էջ 754—772). (3) Շրջաբերական թուղթ, որով հորդորում է հավատացյալներին ողորմություն տալ Տարոնի սուրբ Կարապետի վանքի նվիրակին (ձեռ. № 848, էջ 100ա—106բ) և վերջապես, (4) Կաթողիկոսին և թագավորին հասցեագրված այս նամակը, որից բաղվածքներ ենք կատարում և որը առիթ տվեց անդրադառնալու Եսայի Նշեցու գրական ժառանգությանը:

76 Մ. Զամչյանը, Հ. Շահխաթունյանցը, Ղ. Ալիշանը և այլ բանասերներ, հենվելով Սամվել Անեցու շարունակողներից մեկի հաղորդած տվյալի վրա (Սամվել, էջ 155), նույնացրել են Կոստանդին Կատուկեցի (Պրոնզործ) և Կոստանդին Կեսարացի կաթողիկոսներին, գտնելով, որ Հելթում թագավորի կողմից 1289-ին դահլեյկեց արված վեհապետը՝ երկրորդ անգամ կաթողիկոս է դարձել 1307-ին: Մ. Յոմանյանը, հանգամանորեն քննարկելով այս կաթողիկոսների մասին տույն տվյալները, հանգել է այն եզրակացության, որ դրանք տարբեր անձնավորություններ են (տե՛ս «Ազգագաղափար», §§ 1169, 1245): Եսայի Նշեցու այս թղթի մեջ կա մի հատված, որ թերևս հնարավորություն է ընձեռում վերանայելու Յոմանյանի ուսումնասիրության արդյունքները: Նշեցու գրության մեջ կան նաև մեջբերումներ կիլիկեցիների իրեն հղած նամակից. «Այլ և պատուով,— ասէ,— ընկալարուք զհրամանս սուրբ հօրս՝ իբրև ճշմարիտ» խոսքերի կապակցությամբ Նշեցին գրում է. «Թէ սուրբ հայր էր ընդէ՛ր ընկեցիր յաթոռոյն և շար ի վերայ եղիր»: Դժվար չէ կոհանել, որ աթոռադուրկ արված և կրկին «սուրբ հայր» դարձած անձը, որի հրամաններին պարտավոր էին ենթարկվել Մեծ Հայքի հոգևորականները՝ պետք է կաթողիկոսը լիներ, իսկ այդպիսին Կոստանդին Կատուկեցին կարող էր լինել, որի կրկին կաթողիկոս դառնալու մասին, ինչպես ասացինք, կան ձեռագրական վկայություններ:

արդյունքները խափանելու և նրա իրավասությունները սահմանափակելու ուղղությամբ: Առաքելոց աթոռի հոգևոր իշխանությունը, ինչպես ասել ենք արդեն, դուրս էր գալիս պատմական Արտազ գավառի սահմաններից՝ ընդգրկելով Պարսկահայքի և Ատրպատականի հայաբնակ մի շարք շրջաններ, ներառյալ Թավրիզ ու Մարաղա քաղաքները⁷⁷: Այս վիճակը, սակայն, երկար չի տևում. շուրջ 1321 թվականին, Մեծ Հայքի բարձրաստիճան հոգևորականության ու ֆեոդալների համատեղ ջանքերով, Թավրիզում թեմական առաջնորդ է կարգվում Զաքարիա Մործորեցուց կախում շունեցող և նրա որդեգրած քաղաքականության հակառակորդ Մատթեոս եպիսկոպոսը, որին մեծարում են «սրբազան քաշապետ և վերատեսուչ առաքելական աթոռոյ» տիտղոսով⁷⁸, հակադրելով Առաքելոց թեմի լատինադավան առաջնորդին:

Այս Մատթեոսին Եսայի Նչեցին «մեր յոյժ սիրեցեալ որդի» է կոչում⁷⁹ և նրան հասցեագրած իր ուշագրավ թղթի մեջ խորհուրդ է տալիս մերժել ու հալածել ֆռանկ և կաթոլիկ դարձած հայ այն վարդապետներին, որոնք թշնամական դիրք են գրավել Հայոց եկեղեցու նկատմամբ ու հայերին իրենց հավատքից հանելու նպատակ ունեն. «Դարձեալ լսեցաք,—գրում է նա,—թէ սուտ վարդապետեր ի ֆռանկաց յազգէ և այլք ի Հայոց՝ ծագեր, եկեալ են առ ձեզ, և զՀայոց բրիստոնէութիւնս հայհոյեալ՝ նախատեն զեկեղեցի, և զառաջնորդս ուրանալ տուեալ, բազում հակառակութիւնս յեկեղեցիս ձգեն: Զայնպիսի հերձուածողսն մի ընդունիցիք ի տունս ձեր, և մի ողջոյն տայք նոցա, և մի առնոյք ողջոյն ի նոցանէ, զի ուրացողք են, այլ եղիցին ձեզ իբրեւ զհեթանոսս և զմաքսաւորս»⁸⁰:

Մատթեոս եպիսկոպոսը պաշտոնավարում է երկար. 1335 թվականից պահպանվել է շափածո մի հիշատակարան, գրված ոմն Գրիգոր երեցի կողմից, որի մեջ գրվատանքի ջերմ խոսքերի է արժանանում եռանդուն այս գործիչը: Նա, որ կարողանում էր «որպէս արծիւ սլանալով առ թագաւոր և ընդ

77 Այդ երևում է ստորև վկայակոչվող երկու հիշատակարաններից, որոնք գրված են Զաքարիա եպիսկոպոսի իշխանությունը ճանաչող դավանակիցների կողմից 1. Տեր Տիրացու եպիսկոպոսը՝ Զաքարիայի հաջորդն ու եղբորորդին, 1342 թ. հիշատակված է որպես առաջնորդ Թավրիզ քաղաքի և շրջակայքի («...ի յառաջնորդութեան աստուածապահ նահանգիս Թավրիժու քաղաքիս տէր Տիրացուի եպիսկոպոսի», «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 331): 2. Մարաղայում 1361 թ. ընդօրինակված Աստվածաշնչի հիշատակարանում որպես հոգևոր առաջնորդ դարձյալ հիշատակված են Արտազի եպիսկոպոսները. «...ի հայրապետութեան աթոռակալաց առաքելոյն Թաղէոսի տէր Տիրացուի և Զաքարիայի» (Նոր Զուղա, ձեռ. № 336):

78 Մատթեոս եպիսկոպոսի մասին անդրանիկ վկայությունը գտնում ենք Եսայի Նչեցու ծանոթ թղթի մեջ, որն ըստ Գ. Հովսեփյանի՝ գրված պետք է լինի կամ 1321 թվականին կամ քիչ առաջ (տե՛ս «Խաղրակյանը կամ Պոռչյանը Հայոց պատմության մեջ», Բ հրատարակություն, Անթիլիաս, 1969, էջ 286—288):

79 Որոշ ուսումնասիրությունների մեջ ասվում է, թե, իբր, Եսայի Նչեցու գլխավորած Գլաձորյան համալսարանն ավարտել ու վարդապետական դավադան են ստացել 360 անիձնք: Այդ թիվը, սակայն, խիստ չափազանցված է ու չի հիմնավորվում հին աղբյուրներով: Մխիթարիչ Ապարանեցու «Գիրք ուղղափառաց»-ի մեջ այդ մասին կա ուշագրավ տվյալ. «Մեծ վարդապետն Հայոց Եսայի, որ էր ի Դալլիձորն... տուեալ է դաւադան իշխանութեան վարդապետելոյ զձ և Կէ (167) անձանց» (M. Oudenburg, նշվ. աշխ., էջ 216): Հավանաբար դրանցից մեկն էր Առաքելոց թեմի առաջնորդ դարձած Մատթեոս եպիսկոպոսը:

80 «Ճոսրաղ», 1860—1861, էջ 210: Հմմտ. Մատենադարան, ձեռ. № 2776, էջ 248ա, № 8245, էջ 170:

իշխան» հոգալ իր վիճակի հայ բնակչության կարիքները, հաջող պայքար է մղում նաև կաթոլիկ քարոզիչների ու նրանց դավանանքն ընդունած հայ գործիչների դեմ.

«Տէրն ոչ արար ընդ մեր մեղացն,
Աստուածութեան կամք քաղցրացան,
Յարույց կրկին կանկնող բնութեանս
Ըստ առաջին Մաթէոսեան,
Լուսաւորիշ սուրբ հաւատոյս
Որպէս Գրիգոր Պարթևական,
Որ զշարժեալ թիւն (իմա՛ թոյնն) մահաբեր
Իժիցն արար փախըստական,
Քաղկեդոնի շար / / / անդելով.
Զնեստոր առնէր թշւառական»⁸¹

Այս Մատթեոսին հաջորդած պետք է լինի Արտազի արքեպիսկոպոս և Ս. Թադէի վանահայր կոչված Մեսրոպ վարդապետը: 1335 թ. նա հիշատակված է որպէս անվանի բարունապետ, որի մոտ ուսանելու էին զալիս աշակերտներ նույնիսկ Կիլիկիան Հայաստանից և այլ վայրերից: Սա եպիսկոպոս է եղել 1335 թվականից տարիներ հետո⁸², 1359 թ. բնաւթել է կաթողիկոս և աշխույժ գործունեություն ծավալել կաթոլիկ եկեղեցուն արված զիջումներն ի չիք դարձնելու, Հայոց եկեղեցու ազգային դիմապատկերն անաղարտ պահելու ուղղությամբ: Սրա ջանքերով 1361 թ. Սսում զումարվել է եկեղեցական ժողով, որն անվամբեր ճանաչելով Սսի և Աղանայի ժողովների որոշումները, իսպառ մերժել է կաթոլիկական նորամույժ ծեսերը⁸³. «Եբարձ զշուրն ի սուրբ խորհրդոյն և հերքեաց զախթարմայութիւնն, որ մուծեալ էր ի Հայս ի Կոստանդին հերժուածողէն և յՕշին թագաւորէն»—ասում է սրա մասին Սիմեոն Երևանցին⁸⁴:

⁸¹ Մատենադարան, ձեռ. № 2776, էջ 262ա:

⁸² Մեսրոպ բարունապետի ջանքերով Ս. Թադէի վանքում ստեղծված դպրոցի մասին կարեւոր տվյալներ է հաղորդել Հովհանն անունով Ստեփի մի երիտասարդ, որ «սակս ուսման» Կիլիկիայից Մեծ Հայք էր եկել, սովորել Գլաձորում, ապա հաստատվել Ս. Թադէի վանքում, դառնալով Մեսրոպի աշակերտը: Ներսէս Շնորհալու «Մեկնութիւն Մատթէի աւետարանին» աշխատության իր ընդօրինակության հիշատակարանում Հովհաննը գրել է. «Այլ և ես թարմատարս Յովհանն աշակերտ բանի յաշխարհէն Կիլիկեցոց, ծնեալ և սնեալ ի մայրաքաղաքն Սիս, եկի յաշխարհս Արեւելից՝ տարաշխարհիկ շրջելով սակս ուսման, որ և ուսայ զորն որ յնամեձէն ես աշխայ և է զոր ի մերոյս բարունապետէ Մեսրոպայ, առ ոտս սորա դեգերելով և վարժելով, և տեսի ի մեր լսարանիս զայս լուսաւոր և թուրվանդալ մեկնիչս, և ստացա զսայ յիշատակ հոգոյ իմոյ և ծնողաց և ուսուցչաց: Արդ գրեցաւ սա ի թվականիս 929 (1335), ի յաշխարհիս Արտազ կոչեցեալ, ի հայրապետութեան տեսուն Յակոբայ... և յեպիսկոպոսութեան Արտազու և սուրբ առաքելոյն Թադէոսի տէր Զարարիայի» (Երուսաղեմ, ձեռ. № 1428):

Թերեւս նույն այս գրչի մեկ ուրիշ հիշատակարանն է տպագրված Գ. Զարպհանալյանի «Պատմ. հայ դպրութեան» աշխատության Բ հատորի մեջ (Վենետիկ, 1878, էջ 193—194). այնտեղ ասված է. «Եղեալ թափառական տարագնաց ընթացիւք ի կոյս կողմանց արևու, և զկայ առեալ զաղարեցի յԱրտազ... դեգերեալ առ ոտս աստուածախօս սուրբ բարունոյս Մեսրոպի»:

⁸³ Մ. Պրմանյան, Ազգապատում, է 1322:

⁸⁴ Զամբո, Վաղարշապատ, 1873, էջ 17:

Որոշ տվյալներ թույլ են տալիս հանգելու այն եզրակացության, որ Մեսրոպ վարդապետի Արտազի եպիսկոպոս եղած տարիներին, հավանաբար Ջաքարիա եպիսկոպոսի մահվանից հետո՝ Ս. Թադեի վանքը դուրս է բերվել Արտազի հայ ավատատերերի իրավասությունից, դառնալով ազգային եկեղեցու ավանդություններին հավատարիմ եպիսկոպոսի աթոռանիստ։ Արտազի կաթողիկոսյան հարած եպիսկոպոսները՝ Ջաքարիա Ծործորեցու հաջորդները՝ ստիպված տեղի են տվել, ամփոփվելով Մակվի բերդում և Ծործորի վանքում։

Ստույգ տվյալներ չեն պահպանվել պարզելու, թե Մեսրոպ վարդապետից հետո ո՞վ է գրավել Արտազի եպիսկոպոսությունն ու Ս. Թադեի վանքի վանահայրությունը, գիտենք սակայն, որ 1397 թ. այդ պաշտոնում եղել է Պետրոս անունով մի եպիսկոպոս, որ բահանա է ձեռնադրել էջմիածնի ապագա կաթողիկոս Կիրակոս Վիրապեցուն⁸⁵։ Այնուհետև տեղեկություն ունենք 1426 թվականից, երբ Գրիգոր Մակվեցի Ջալալբեկյանը, ներկայանալով որպես «աթոռակալ սրբոյն Թադէոսի», տեղեկություններ է գրանցում Իսքանդար Կարա-կոյունլուի կողմից Մակվի բերդի գրավման և Արտազի հայկական իշխանության վերացման մասին⁸⁶։

* * *

Ջաքարիա եպիսկոպոսը Արտազի հայկական իշխանության սահմաններում 1313—1321 թթ. ընթացքում շարադրված հիշատակարանների մեջ⁸⁷ մեծարված է որպես եկեղեցական այդ թեմի և Ս. Թադեի վանքի միահեծան առաջնորդ⁸⁸, իսկ 1329 թ. շինարարական ընդարձակ արձանագրության մեջ, ինչպես տեսանք վերը, Ջաքարիան գրանցել է տվել նաև իր փոխանորդ կարգված Տիրացու եպիսկոպոսի անունը, որ եղել է նրա եղբորորդին («Եւ զաջորդն՝ մեր աղբար որդին՝ զտէր Տիրացուն»)։⁸⁹ XIV դարի 30—40-ական թվական-

⁸⁵ Այս տեղեկությունը քաղված է Թովմա Մեծոփեցու «Յիշատակարանից», որի տպագրում Պետրոս անվան փոխարեն, հավանաբար վրիպակով, Պողոս է գրված։ Մատենադարանի մեր համեմատած 12 ձեռագրերը, առանց բացառության, այս եպիսկոպոսին Պետրոս են կոչում։

⁸⁶ Անտեղյակ լինելով Արտազի աթոռի եպիսկոպոսության և Ս. Թադեի վանքի առաջնորդության զույգ պաշտոնների շուրջ XIV դարի ընթացքում հայ եկեղեցու ավանդություններին հավատարիմ և կաթողիկ եկեղեցու դավանանքն ընդունած հակընդդեմ խմբավորումների միջև ծավալված պայքարի զրգանքներին, պատմագիտական աշխատություններում շփոթել են միմյանց «Թադեոս առաքյալի աթոռակալ» կոչված անձնավորություններին, ապարդյուն փորձեր կատարելով միասնական մի շղթայի մեջ առնելու Ջաքարիային ու նրա հաջորդներին՝ մի կողմից և Մատթեոսին ու նրա հաջորդներին՝ մյուս կողմից։

⁸⁷ Պահպանվել են հիշատակարաններ 1313, 1315, 1318 և 1321 թվականներից, որոնք տպագրված կամ հիշատակված են հետևյալ աշխատությունների մեջ. Ն. Պողաբյան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Հակոբյանց, հատոր հինգերորդ, Երուսաղեմ, 1971, էջ 96—97, «ԺՂ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Երևան, 1950, էջ 114—115, Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. № 2104, էջ 164բ, Վ. Հացունի, Կարևոր խնդիրներ հայ եկեղեցվո պատմության, Վենետիկ, 1927, էջ 310։

⁸⁸ 1313 թ. Թավրիզում ընդօրինակված Սարգիսզբբի մեջ հիշատակված է նաև ոմն տեր Հակոբ «Յաթոռակալութիւն Բ աթոռոցն Թադէոսի և Բարդղղիմէոսի տէր Ջաքարիա և տէր Յակոբի» (Ն. Պողաբյան, նշվ. աշխ., էջ 96—97)։ Այս Հակոբը, սակայն, Ջաքարիային ենթակա մի կղերական է, հավանաբար Սալմաստի առաջնորդ Հակոբ եպիսկոպոսը, որ հիշատակված է նաև Կ. Գալանոսի կողմից՝ որպես Ադանայի ժողովի մասնակից։

⁸⁹ XIV դարի 40-ական թթ. սկզբներին կաթողիկոսների կողմից հայ եկեղեցու վրա բարդված 117 «մոլորությունների ցանկում» կա նաև մի կետ (103-րդ), որով հայերը մեղադրվում են բազմակնության նկատմամբ ներողամիտ լինելու մեջ։ Համառոտելով այդ գրության հիմնական

ների մի շարք հիշատակարաններում, իր մեծանուն հորեղբոր հետ միասին հիշատակվում է նաև այս Տիրացու եպիսկոպոսը, որ ժամանակակիցների կողմից «հեզ և մարդասեր» մակդիրն է ստացել⁹⁰:

Զաքարիայի մահվան թվականը անհայտ է մնում, իր մահկանացուն կնքած պետք է լինի 1340-ական թվականների վերջերին, անտարակույս 1350-ից առաջ, քանի որ այդ թվականի մի հիշատակարանից պարզվում է, որ նա այլևս գոյություն չունի («զհանկուցեալն ի Քրիստոս») և նրան հաջորդել է իր ժառանգ տեր Տիրացուն, «որ է այլը բար]եխորհ և իմաստուն, յոյժ անուանի և ամենեցուն մեծամեծաց սիրելի»⁹¹:

Մինչև Տիրացու եպիսկոպոսի ու նրան հաջորդող Արտազի հայ հոգևոր ու աշխարհիկ տերերի գործունեությանն անդրադառնալը, անհրաժեշտություն է զգացվում հակիրճ մի ամփոփումով փակել Զաքարիա եպիսկոպոսին նվիրված այս գրվագը:

Գրեթե մի ամբողջ հիսնամյակ իշխելով որպես Առաքելոց թեմի եպիսկոպոս և Արտազի շրջանի ավատատեր դարձած հայ գերդաստանի նահապետ՝ պարոնտեր Զաքարիա Ծործորեցին զգալի դեր է կատարել Հայաստանի քաղաքական ու մշակութային կյանքում: Ընդառաջելով Կիլիկյան Հայաստանի արքունի տան անդամների ու բարձրաստիճան հոգևորականության լատինամոլ քաղաքականությանը, նա դարձել է նրանց ձայնափողը Մեծ Հայքում, պայքարելով Հայոց եկեղեցու ինքնուրույն գոյությունը ամրապնդել ցանկացող և ազգային ավանդություններին հավատարիմ մնացած քաղաքական ու եկեղեցական գործիչների դեմ: Իր գործունեության առաջին երեք տասնամյակների ընթացքում նա հաջողություններ է ունեցել: Հավատ ընծայելով եվրոպական երկրներից քաղաքական ու ռազմական օգնություն ստանալու սին ու պատիր խոստումներին, Արտազի շրջանի և շրջակա նահանգների քաղաքային բնակչության որոշ խավեր (մասնավորապես եվրոպական երկրների հետ տնտեսական կապեր ունեցող և քարավանային առևտրի մեջ ներգրավված վաճառականներ ու արհեստավորներ), ընդունել են կաթոլիկ դավանանք և ճանաչել Արտազի արքեպիսկոպոսին՝ որպես իրենց հոգևոր առաջնորդ: Զաքարիա Ծործորեցին, իր գերդաստանի իշխանազուն անդամների գործակցությամբ, թերևս նաև Կիլիկիայից ու եվրոպական երկրներից նյութական օժանդակություն ստանալով, Արտազի շրջանում ծավալել է շինարարական աշխույժ գործունեություն: Կառուցել է Ծործորի վանքը, ստեղծելով այնտեղ վանական դպրոց և մշակութային աշխատանքների համար նպաստավոր պայմաններ⁹², վերաշինել է Ս. Թադևի երկրաշարժից գրեթե հիմնահատակ կոր-

մասերը Մ. Օրմանյանն այսպես է ձևակերպում մեզ հետաքրքրող հատվածը. «Հայերը... ապօրեն զավակները իբր օրինավոր ժառանգ կրնդունին, և մինչև իսկ այնպիսիները եպիսկոպոսության կը բարձրացնեն. և օրինակ կը բերեն Զաքարիայի եղբոր ապօրեն զավակը, որ հորեղբոր տեղը եպիսկոպոս ձեռնադրվեցավ» («Ազգապատում», § 1305):

Եթե այս վերաբերում է Զաքարիա Ծործորեցուն, ապա պետք է հետևենք, որ 1329 թ. նրա հետ միասին Արտազի եպիսկոպոս կոչված տեր Տիրացուն, Զաքարիայի եղբայրներից մեկի (հավանաբար՝ պարոն Պետրոսի) ապօրեն զավակն է եղել:

90 Տե՛ս «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 227, 282 և Քեֆյյան, Յուցակ, էջ 579:

91 «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 385:

92 Զաքարիա եպիսկոպոսն անձամբ ղրադվել է մատենագրական աշխատանքներով, որպես մեկենաս զարկ տվել ինքնուրույն ու թարգմանական երկերի ստեղծման, ձեռագրերի քաղաքական աշխատանքներին: Նրա գործունեության այս բնագավառին անդրադառնալու ենք Ծործորի վանքին նվիրված գրվագի մեջ:

ծանված վանքը և այլ վանքեր ու եկեղեցիներ, բարեկարգել Արտազի շրջանով անցնող միջազգային նշանակություն ունեցող ճանապարհը՝ կառուցելով գեղեցիկ կամուրջներ և այլն:

1320-ական թվականներին, երբ կաթողիկ քարոզիչների քայքայիչ աշխատանքը նոր թափ է ստանում Հայաստանում, ազգային եկեղեցու ինքնուրույն գոյության անհրաժեշտությունը դիտակցող հայրենասեր գործիչները, Եսայի Նշեցի րաբունապետի գաղափարական ղեկավարությամբ, հակադրոհի են անցնում: Շուտով Զաքարիա եպիսկոպոսի իրավասությունից դուրս է բերվում իշխանության մայրաքաղաքն ու ողջ Ատրպատականը. Թավրիզում ստեղծվում է Արտազի թեմին հակադրվող, Թաղեոս առաքյալի անունը իրեն վերապահող եկեղեցական նոր թեմ, կաթողիկոսյան ակնհայտ թշնամի Մատթեոս եպիսկոպոսի աթոռակալությամբ: 1340-ական թվականներին Առաքելոց եպիսկոպոսի հոգևոր իշխանությունից դուրս է բերվում նաև Ս. Թաղեի վանքը. Արտազի կաթողիկ դարձած տերերը ավելի են սեղմում իրենց գործունեության շրջանակները՝ տեղի տալով ազգային եկեղեցու սկզբունքներին հավատարիմ կուսակցության գրոհներին: Եվ այսպես, Արտազի եպիսկոպոս Զաքարիա Մործորեցու հաջորդներին ժառանգություն է մնում բզկտված եկեղեցական մի թեմ, որ սահմանափակվում է Մակվի բերդի և Մործորի վանքի անձուկ շրջանակներով: Սրանց հոգևոր առաջնորդությունը՝ Մակվի իշխանության սահմաններից դուրս ճանաչում են միայն Ատրպատականի հայաբնակ շրջանների կաթողիկ դավանանք ընդունած հայ բնտանիքները:

6. Արտազի իշխանությունը Զաքարիա եպիսկոպոսից հետո. — Զաքարիայի հաջորդ Տիրացու եպիսկոպոսը, որին պատշաճ է Տիրացու Բ անունը տալ (տարբերակելու համար XIII դերջերին ապրած նույնանուն գործչից), աթոռակալել է իր հորեղբոր հետ միասին արդեն 1329 թվականից. Զաքարիայի մահվանից հետո, մի քանի տարի միայնակ վարել է Արտազի և Ատրպատականի մյուս հայաբնակ շրջանների հայ կաթողիկոսների առաջնորդի պաշտոնը. 1350 թ. շարադրված մի հիշատակարանի գրիչ մաղթում է սրան իշխել երկար տարիներ «ի պայծառութիւն սուրբ եկեղեցոյ և ջահ լուսատու լինել բանիւ և գործով նուազեալ ազգիս մերոյ, հանդերձ հարազատ եղբար[ը]ք իւրովք, այլ և նախնեօք հարց և հաւուց և ամենայն արեան մերձաւորօք՝ կենդանեօք և հանգուցելովք»⁹³: 1361 թվականից տեղեկություն ունենք, որ Տիրացու Բ եպիսկոպոսը իր մերձավոր ազգականներից մեկին՝ Զաքարիա անունով՝ կարգել է իրեն փոխանորդ⁹⁴: Համբավավոր իր նախորդի անունը ժառանգած այս Զաքարիա եպիսկոպոսը հիշատակվում է նաև 1392 թ. շարադրված երկու հիշատակարաններում՝ որպես Թաղեոս առաքյալի վիճակի հայրապետ⁹⁵ և Արտազի գավառի պարոնտեր: Ֆրա Մխիթարիչը Սաղմոսի

93 «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 385:

94 Այս տեղեկությունը գտնում ենք Մարաղայում մի կաթողիկ հայի ընդօրինակած Աստվածաշնչի հիշատակարանի մեջ, ուր ասված է. «Գրեցաւ աստուածաշունչս... ի քաղաքիս Մարաղա, ի մարդեղութեան Քրիստոսի ՌՅԿԱ (1361) և ի թվ. Հայոց ՊԺ, ի թագաւորութեան սուլթան Վախսին և ի հայրապետութեան աթոռակալաց առաքելոյն Թաղէոսի տէր Տիրացուի և տէր Զաքարիայի» (հիշատակարանը բաղել ենք Մ. Տեր-Մովսիսյանի կազմած հայերեն ձեռագրերի անտիպ ցուցակից):

95 Վ. Հացունի, նշվ. աշխ., էջ 310:

մեկնությունն այդ թվականին ընդօրինակած ձեռագրի հիշատակարանում հայտնում է, որ «Շտապով գրեցի զսա ի գաւառս Արտազու, ի գեօղս որ կոչի Մակու, առ պարոնութեամբ տէր Զաքարիայի մեծ կրանաւորի»⁹⁶։ Սրանից պարզվում է, որ Տիրացու Բ եպիսկոպոսը վաղուց արդեն հեռացել էր կյանքից, ասպարեզը թողնելով իր հաջորդ Զաքարիա Բ եպիսկոպոսին։

Պատմական այս ժամանակաշրջանում գոյություն ունեցող հայ փոքրաթիվ և ուժասպառ հայ ավատատերերը պատվարում էին իրենց տիրույթները վանական (վակֆային) հողատիրության ցուցանակով։ Պետական ատյանների առջև ավելի հաճախ ներկայանում էր ավատատեր գերդաստանի հոգևորականի սքեմ հագած ներկայացուցիչը, հանդիսանալով վանական հաստատություններին վակֆ արված կալվածքների պաշտոնական տնօրենը, սակայն ավելի հաճախ տվյալ գերդաստանին պատկանող կալվածքների տնտեսական գործերի տնօրինությունն իրագործում էր նույն գերդաստանի աշխարհական տանուտեր-իշխանը։

Զաքարիա Բ եպիսկոպոսի աթոռակալության տարիներին, մասնավորապես XV դարի սկզբներին, Արտազի շրջանի հայկական իշխանության տիրակալը՝ պարոն Նուրադինն էր։ Ֆրա Մխիթարիչի ընդօրինակած վերահիշյալ ձեռագրի մեջ 1406 թ. գրանցված մի հիշատակարանում այս իշխանի մասին կարգում ենք. «Ի գաւառս Արտազու, ի գիւղս որ կոչի Մակու, առ պարոնութեան պարոն Նուրադինի»⁹⁷։

Արտազի հայկական իշխանության վիճակի, պարոն Նուրադինի ու նրա որդիների, Մակվի բերդի անառիկ ամրությունների և հարակից հարցերի մասին բացառիկ հետաքրքրություն ունեցող տվյալներ է հաղորդում Սպանիայի Հենրիկոս Գ թագավորի դեսպան, մեզ ծանոթ Ռուի Գոնսալես դե Կլավիխոն, որ 1403—1406 թթ. անցել է Հայաստանով և ուշագրավ տեղեկություններ գրանցել իր տեսածի ու լսածի մասին՝ «Մեծ Թամերլանի պատմություն» (Historia del gran Tamerlan) խորագիրը կրող ճանապարհորդական իր նոթերի մեջ։ Այս աշխատության 78-րդ հատվածն ամբողջապես նվիրված է Մակվի հայկական իշխանության պատմությանը և ժամանակակից վիճակի նկարագրությանը։

Ստորև մեջ ենք բերում այդ հատվածը՝ գրեթե ամբողջությամբ (բաց թողնելով Մակվի բերդի գեղեցիկ նկարագրությունը, որի մասին խոսք է եղել նախորդ էջերում)։

«Կիրակի, հունիսի 1-ին (1404 թ.)՝ երեկոյան ժամերգության պահին նրանք (այսինքն՝ ինքը՝ Կլավիխոն և իր շքախմբի անդամները—Լ. Խ.) հասան մի ամրոց, որ Մակու էր կոչվում և այդ ամրոցը պատկանում էր Նուրադին անունով մի կաթոլիկ քրիստոնյայի, և (ամրոցի) բոլոր բնակիչները նույնպես կաթոլիկ քրիստոնյաներ էին, թեև ծագումով հայ էին և իրենց լեզուն էլ հայերենն էր, սակայն նրանք գիտեին և թաթարերեն և պարսկերեն։ Այդ վայրում կար սուրբ Դամիսկիկի եղբայրների մի վանք»⁹⁸։ Ամրոցը կանգնած է բարձր

96 «Ժն դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա, Երևան, 1955, էջ 61։

97 Նույն տեղում, էջ 61։

98 Խոսքն, անշուշտ, Մործորի վանքի մասին է, որ XIV դարի առաջին հիսնամյակում ֆրանցիսկյան միաբանության ազդեցության տակ էր գտնվում, բայց հետագայում՝ Նախիջևանի շրջանում դոմինիկյանների հաստատվելուց հետո, ամբողջապես ընկավ նրանց ազդեցության տակ։

լեռան ստորոտում գտնվող հովտի մի անկյունում...⁹⁹։ Ամրոցի ներսից սկիզբ է առնում մի հորդ աղբյուր, որի ջրից օգտվում է ժողովուրդն ու ջրում բազմաթիվ պարտեզները¹⁰⁰։ Ամրոցի ստորոտում տարածված է շատ գեղեցիկ մի հովիտ, որի միջով անցնում է գետը, այն ծածկված է որթատունկերով ու մշակված արտերով։

Թամուրբեկը հարձակվել է այս ամրոցի վրա, բայց չի կարողացել գրավել, ուստի պայմանագիր է կնքել տեղի իշխանի հետ, որի համաձայն նա պարտավորվել է ըստ պահանջի տրամադրել նրան (Թամուրին) քսան հեծյալ։ Սրանից ոչ շատ ժամանակ անց Թամուրբեկը զորքով անցնելիս է եղել նրա (Մակվի) մոտով, ամրոցի իշխանը կանչել է շուրջ քսան տարեկան իր որդուն, հանձնել նրան երեք լավ թամբած ձիեր, որպեսզի նա տանի դռներ Թամուրբեկին նվեր։ Երբ Թամուրբեկը հասնում է ամրոցի ստորոտը, իշխանի որդին դուրս է գալիս և իր հոր անունից առաջարկում (նվեր ընդունել) այդ ձիերը։ Նա ընդունում է և հրամայում, որ այդ ամրոցին պատկանող հողերին իր զորքը պետք չէ որևէ վնաս հասցնի։ Այնուհետև Թամուրբեկն ասում է, քանի որ այս ամրոցի իշխանն ունի այսպիսի մեծ որդի, պատշաճ չէ նրան իր մոտ պահի, և նրան (որդուն) տանում է իր հետ։ Հետագայում նա նրան հանձնում է Օմար-Միրզա կոչվող իր թոռանը, որպեսզի նա ապրի նրա մոտ, քանի որ նա (Օմար-Միրզան) Պարսկաստանի և այդ երկրի կառավարիչն էր։ Եվ այժմ էլ նա ապրում է նրա մոտ և ծառայում այդ թագավորի զորքերում։ Այդ թագավորը բռնի ստիպել է ամրոցի իշխանի որդուն դառնալ մահմեդական (մավր), տվել է նրան Սորղաթմիշ անունը և դարձրել իր թիկնապահ։ Եվ չնայած նա այսպիսով մահմեդական է դարձել, սակայն իր կամքով չէ մահմեդական և մահմեդական չէ իր վարվեցողությամբ։

Դեսպանները լավ ընդունելություն գտան այդ ամրոցի իշխանի կողմից, որին շատ հաճելի էր նրանց քրիստոնյա լինելը։ Նա հյուրամեծար ընդունեց նրանց ու պատմեց, որ մի երկու շաբաթ դրանից առաջ Թամուրբեկի զարմիկ Յասան Միրաշան¹⁰¹, որ նրա մերձավորներից էր, մարդ էր ուղարկել պահանջելու, որ նա ընդունի իրեն ամրոցում, որովհետև ցանկություն ունի այնտեղ պահելու իրեն պատկանող ինչ-որ գանձ։ Նա պատասխանել է, որ չի ընդունի նրան, բայց եթե նա ունի պաշտպանության կարոտ գանձ, ապա թող հանձնի իրեն, և ինքը լավ կպահպանի, դրանից հետո նա այդ մասին այլևս տկնարկ չի արել։

Դեսպանորդներն այդտեղ (Մակվում) մնացին իրենց եկած օրը։ Հետագայում, Պարսից թագավորի բանակատեղում նրանք հանդիպեցին այդ ամրոցի իշխանի որդուն և զրույց ունեցան նրա հետ։ Այդ (Նուրադին) իշխանն ու-

99 Ինչպես ասացինք վերը՝ բաց ենք թողնում Մակվի ամրոցի նկարագրությունը, որ տրված է վերը (տե՛ս էջ 141)։ Մակվի այս նկարագրությունը «История Азербайджана» գրքում (том I, Баку, 1958, էջ 215), անգիտությամբ աղբյուրաչափապես ամրոցի նկարագրություն է համարվել, ըստ այդմ հայ իշխան Նուրադինը՝ աղբյուրների ֆեոդալ ներկայացվելով։

100 Այս աղբյուրը սկիզբ է առնում ժայռի մեջ եղող մի մեծ (շուրջ 180 մետր երկարություն և 45 մետր լայնություն ունեցող) բարայրից, որը բնական պահեստի դեր է կատարել բերդի բնակիչների համար, իսկ հետագայում, քաղաքական հանցագործների համար բանտարկելության ապահով վայր դարձել։ Քարայրի արդի վիճակը նկարագրված է Վ. Մինորսկու կողմից («Древности Маку», էջ 4—5)։

101 2. Հակոբյանի թարգմանության մեջ այս անունը տառադարձված է «Ջահան Շահ Միրզա» ձևով, որ, իհարկե, ճիշտ չէ։ Հավանարար պետք է կարդալ՝ Հասան-Միրանշահ։

ներ սրանից երիտասարդ մի այլ որդի ևս. և նա դեսպանորդներին ասաց, որ այդ որդին գիտնական է, լավատեղյակ իր լեզվին, և եթե կամոքն աստծո նրանք վերադառնան, ապա նա նրանց հետ (եվրոպա) կճանապարհի իր այդ որդուն, որպեսզի նրանք տանեն նրան (Սպանիայի) թագավորի մոտ, որպեսզի թագավորի հանձնարարությամբ պապը նրան այս երկրի եպիսկոպոս ձեռնադրի: Հիրավի շատ զարմանալի է, որ այդ ամբողջ գոյատևում է քրիստոնյաներից այդքան հեռու, ամեն կողմից շրջապատված լինելով մահմեդականներով¹⁰²:

Հարմանալի է նաև, որ նրանք լինելով հայ՝ դառնում են կաթոլիկ, դրանով գոհացում տալով աստծուն»¹⁰³:

Կլավիխոյի «Ուղեգրության» ընդարձակ այս հատվածը հնարավորություն է ընձեռում պարզելու Արտազի հայկական իշխանության վիճակն սկսած XIV դարի 80-ական թվականներից: Լանկ-Քամուրի արշավանքի մասին տեղեկությունը, անշուշտ, վերաբերում է 1386—1387 թվականներին, երբ կաղ աշխարհակալի զորաբանակները, Քավրիզը գրավելուց հետո սկսեցին իրենց ասպատակությունները Ատրպատականի և Հայաստանի բարեբեր շրջաններում: Հայկական շատ բնակավայրեր ուժեղ դիմադրություն ցույց տվեցին. Կողբ գյուղի բնակիչները, քաջարի տանուտեր Մարտիրոսի շխավորությամբ, դիմադրեցին Լանկ-Քամուրին «մեծաւ պատերազմաւ և սրտապինդ զօրութեամբ»¹⁰⁴: Դիմադրություն կազմակերպեցին նաև Սուրմարի բերդաքաղաքի, Պոռչյանների իշխանանիստ Շահապոնք ամրոցի, Բջնիի, Նրեանի և շատ այլ վայրերի բնակիչներ: Կլավիխոյի շարադրանքից պարզվում է, որ Մակվի բերդը պաշարելուց հետո, երբ ակնհայտ է դառնում նրա անառիկ լինելը, Քամուրը գերադասում է համաձայնության գալ Նուրադին իշխանի հետ, ճանաչել նրա իշխանությունն Արտազի շրջանի վրա, պայմանով, որ ըստ պահանջի իրեն տրամադրվի 20 հեծյալից բաղկացած մի ջոկատ: «Սրանից ոչ շատ ժամանակ անց»,—ինչպես ասում է Կլավիխոն,—Լանկ-Քամուրը կրկին հայտնվում է այս կողմերում և իր մոտ պատանդ վերցնում Արտազի իշխանի երիտասարդ որդուն՝ Սորղաթմիշին: Այս դեպքը կատարված պետք է լինի

102 Տեղին է այստեղ մեջ բերել նաև Հանս Շիլտբերգերի վկայությունը Մակվի հայ կաթոլիկների մասին, որ վերաբերում է գրեթե նույն ժամանակներին: Շիլտբերգերը, գերի ընկնելով մահմեդականների ձեռքը, XIV դարի վերջերին և XV-ի սկզբներին շրջել է Մերձավոր Արևելքի երկրներում, Հայաստանում և Իրանում, առիթ է ունեցել շփվելու հայերի հետ, նույնիսկ սովորել է հայերեն և կարևոր տվյալներ գրանցել մեր ժողովրդի սովորությունների ու հավատքի մասին: «Կա նաև մի քաղաք,—գրում է նա,—ընկած մի լեռան վրա և կոչված Մակու. այստեղ հոռմեական դավանանքի մի եպիսկոպոսություն կա. նրա քահանաները պատկանում են դոմինիկյան միաբանությանը, բայց երգում ու խոսում են միայն հայերեն լեզվով» (Hans Schiltbergers Reisebuch... Tübingen, 1885, էջ 58: Հմտ. նաև՝ Путешествия Ивана Шильтбергера по Европе, Азии и Африке, с 1394 по 1427 год, пер. с немецкого и снабдил примечаниями Ф. Брун, Одесса, 1866, էջ 49): Շիլտբերգերի ռուսերեն թարգմանիչ Ֆ. Բրուներ հայերին վերաբերող էջերի թարգմանության ու ծանոթագրության ժամանակ դիմել է Գաբրիել Այվազովսկու օգնությանը. վերջինս, անտեղյակ սկզբնաղբյուրների մեջ առկա տվյալներին, վճռականորեն հայտարարել է, որ Մակվում կաթոլիկ դավանանքի հայերի մասին տեղեկությունները սխալ են: Ֆ. Բրուներ, սակայն, հենվելով Կլավիխոյի վրա հավատ է ընծայել հշմարտապատում Շիլտբերգերին:

103 Рюи Гонзалес де Клавихо, նշվ. աշխ., էջ 158—162:

104 Պատմություն Լանկ-Քամուրայ և յաջորդաց իւրոց, արարեալ թովմա վարդապետի Մեծորենցոյ, Փարիզ, 1860, էջ 18:

աշխարհակալ բռնավորի ձեռնարկած երրորդ մեծ արշավանքի սկզբներին՝ 1399 թվականին, երբ նրա զորքերը մտնելով Անդրկովկաս, մինչև հաջորդ տարվա ամռան ամիսները ավերում, գերում ու կոտորում էին Վրաստանի և հյուսիսային Հայաստանի շրջանները:

Դառնալով Ատրպատականի տիրակալ կարգված Միրզա-Օմարի թիկնապահ, հայ իշխանազուն Սորղաթմիշը ստիպված է լինում առերես ընդունել մահմեդականություն: Այս մասին տեղեկություն է հաղորդել նաև Թ. Մեծոփեցին՝ ասելով, որ քրիստոնյաների նկատմամբ թշնամական դիրք գրաված թամուրյան այս ամիրզադան «յառաջին ամի իշխանութեան իւրոյ երեք (իմա՝ չորս—Լ. Խ.) իշխան յազգէս մերմէ, որք իբրեւ զճիւ մի ողկուզաց էին մնացեալ ի մէջ ազգիս, դարձոյց բռնութեամբ ի յանհաւատութիւն»¹⁰⁵: Այդ իշխաններն էին՝ Որոտանի տեր Բուրթեկ Օրբելյանը՝ իր Սմբատ եղբոր հետ միասին, Նղեզիսի տեր Գորգուն Օրբելյանը, Ազցք գյուղի տեր Ազիտանը և Մակովի տեր Սորղաթմիշը¹⁰⁶:

Սրանց հաջորդում է քրիստոնյա ապրելու արտոնություն ստանալ թամուրյանների պարտությունից հետո՝ 1408 թվականին, երբ Հայաստանում հաստատվում են Զելաիրյանները, դաշնակից ունենալով Կարա-կոյունլու թուրքմենական ցեղի առաջնորդներին: «Եւ մարդիկ,—հայտնում է այդ մասին Թ. Մեծոփեցին,—որք յաւուրս շաղաթային ի հաւատոյ ուրացեալք էին, եկին ի հաւատս՝ Բուրթէլն Որոտնայ, Տարսայիճ՝ Նղեզեաց, Սուրղաթմիշ՝ Մակուայն, Ազիտան՝ Ազցից»¹⁰⁷:

Թ. Մեծոփեցին Սորղաթմիշին ճանաչում է որպես «տէր Մակուայ»: Ե՛րբ է նուրադինը մահացել և ե՛րբ իշխանությունն անցել Սորղաթմիշին, ճշգրիտ որոշելու հնար չունենք. կարելի է ենթադրել, որ այդ տեղի է ունեցել շուրջ 1408—1410 թթ. հետո. երբ Մեծ Հայքի կենտրոնական նահանգների վրա իր տիրապետությունը հաստատեց Կարա-Յուսուֆ Կարա-կոյունլուն, Մակովում իշխում էր արդեն Սորղաթմիշը: Կարելի է հավանական համարել և այն ենթադրությունը, որ Արտազի վերջին այս իշխանի գործունեության տարիներին՝ նրա հետ միասին, որպես նույն շրջանի հողերի առաջնորդ, իշխում էր նրա կրտսեր եղբայրը՝ անանուն այն իշխանազուներ, որին նուրադինը ցանկանում էր ուղարկել պապի մոտ Արտազի եպիսկոպոս ձեռնադրելու համար¹⁰⁸:

Կարա-Յուսուֆի մահվանից հետո իշխանության գլուխ անցած Իսրայելյան Կարա-կոյունլուն 1422—1427 թթ. եռանդուն քայլերի է դիմում իր պետության սահմաններում գտնվող կիսանկախ ամիրությունների վերացման,

105 Թ. Մեծոփեցի, էջ 67—68:

106 Թ. Մեծոփեցին ասում է. «...և գտին Մակուայ հանին ի սուտ և յերկարեակ աղթարմայութենէն» (այսինքն՝ կաթոլիկ դավանանքից հանելով՝ դարձրին մահմեդական): Այս իշխանի անունը՝ «Սորղաթմիշ Մակուայն»՝ Մեծոփեցին նշում է մի այլ տեղ, երբ խոսում է բռնի ուրացված վերոհիշյալ իշխանների կրկին քրիստոնյա դառնալու մասին (տե՛ս ստորև):

107 Թ. Մեծոփեցի, էջ 73 (հմմտ. նաև Լ. Խաչիկյան, Սյունյաց Օրբելյանների Բուրթեկյան հյուղը, «Բանբեր Մատենադարանի», № 9, 1969, էջ 180—182):

108 Տեսանք, որ Արտազի եպիսկոպոսները՝ փոխնիփոխ կոչվում էին Տիրացու (Ա), Զաքարիա (Ա), Տիրացու (Բ), Զաքարիա (Բ): Նշելով այս փաստից անանուն այս պարտություն կարելի է կոչել Տիրացու Գ: Հենց այստեղ նշենք, որ Զաքարիա Սործարեցուց կամ, թերևս, Տիրացու Բ-ից հետո Արտազի եպիսկոպոս դարձած լատինադավան այս եպիսկոպոսները, ինչպես պարզ երևում է Կլավիխոյի վերոհիշյալ ավյալներից, ձեռնադրվում էին Հռոմի եկեղեցուց փեհադեաից, իրենց բոլոր կապերը խղած լինելով Հայոց եկեղեցուց:

այլազգի ֆեոդալներին պատկանող տիրույթների բռնադրաման ուղղությամբ: Նա վճռական մարտեր է մղում հատկապես Բաղեշում, Խլաթում, Ոստանում, Վանում, Խիզանում և այլ վայրերում ինքնավար իշխանություններ ստեղծած քուրդ ամիրների դեմ, որոնք հաճախ հանդես էին գալիս թշնամիների բանակում և դժկամությամբ էին ենթարկվում կենտրոնական իշխանության հրահանգներին: Այս պայքարի ընթացքում՝ 1426 թ. վերջ է տրվում նաև Արտազի իշխանությանը, որ գոյատևել էր շուրջ մեկուկես դար, կարևոր դեր կատարելով հայ բնաշխարհի քաղաքական ու մշակութային կյանքում:

Ապավինելով բերդի անառիկ նկատվող ամրություններին Մակվի հայ իշխանները, անտարակույս, ուժեղ դիմադրություն պետք է կազմակերպած լինեին. այդ մասին, սակայն, տեղեկություններ չեն պահպանվել:

Մակվի բերդի գրավման և Արտազի իշխանության վերացման մասին անդրանիկ վկայությունը գրանցել է Ս. Թադևոս առաքյալի վանքի առաջնորդ Գրիգոր Մակվեցի Զալալբեգյանը, որ հետագայում հաստատվեց էջմիածնի վանքում և դարձավ Ամենայն Հայոց կաթողիկոս: Երուսաղեմի մատենադարանի № 1582 ձեռագրի 342-րդ էջի վրա նա գրել է.

«Ի յայսմ ամի թուականի՝
Յութ հարիւր ու եաթանասնի,
Հընկից թուից ևս աւելի (1426 թ.)՝
Յարեաւ հողմն մրրկի,
Սքանդար անուն յազդէ թուրքի
էառ զղղեակն վանայ,
Նաև զՄակուա և զնվանա»¹⁰⁹:

Երկու տարի հետո, նույն ձեռագրի մեջ գրանցած ընդարձակ հիշատակարանում, Ս. Թադեի առաջնորդ եպիսկոպոսը ավելի հանգամանորեն է անդրադարձել Մակվի անկման և Արտազի հայկական իշխանության բարձման դեպքերին, անսքող բացահայտելով իր թշնամական դիրքը Մակվի «աղթարմա» (այսինքն դավանափոխ եղած—կաթողիկ դարձած) տերերի նկատմամբ, որոնք Ս. Թադեի վանքից տարել էին իրենց միջոցներով կառուցել տված դուռը (հավանաբար՝ գեղեցիկ մի հորինվածք), մեծ զանգակը, ժամատան գերանները և շարժական այլ իրեր. լինելով Արտազի շրջանի իշխաններ, նրանք միաժամանակ թույլ չէին տալիս վերաշինել վանքը, և այլ դժվարություններ էին հարուցում ազգային եկեղեցու ավանդություններին հավատարիմ մնացած եկեղեցականների առջև և այլն: Նկատի ունենալով Գր. Մակվեցու այս հիշատակարանի կարևորությունը՝ ստորև մեջ ենք բերում գրեթե ամբողջությամբ.

«Արդ՝ եղև զրութիւն սորա ի թվականութեանս Հայոց Մեծաց ի ՊՀէ (1428), ի մայրաքաղաքի որ այժմ Դավրէժ կոչի, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի տաճարին, զի անդ սկսայ եւ փոքր ինչ գրեցի, եւ եկեալ առ ոտս սուրբ առաքելոյս Թադէոսի աւարտեցի՝ ի սոյն ամի, որում էառ Ըսքանդար անուն ոմն բռնաւոր, որդի Ղարա-Ուսուֆին, զանառիկ զղեակն Մակուա, եւ գերկարնակ ուրացող ազգն ախթարմայից տարազիր եւ տարաշխարհիկ արար ի վերա երկրի, եւ կատարեցաւ բանն տեառն, զի զշարքն շարեաւ կորոյս, եւ զայգին ետ այլոց մշակաց:

¹⁰⁹ Նուայր եպս. Պողաբյան, Մայր ցուցակ սրբոց Յակոբեանց, հատոր հինգերորդ, Երուսաղեմ, 1971, էջ 368:

Որ եւ ես նուաստից նուաստս, եւ տրուալս ամենայնի Գրիգոր անձն եղկելի՝ զծող սմին, ի վաղուց հետէ փափաքէի շինութեան առաքելական սուրբ աթոռոյս մերոյ, եւ ոչ տային թոյլ նախասացեալ ներհակքն բնակիչքն Մակվայ, որ եւ կրկին վայ եկն ի վերայ նոցայ եւ երարձ զիշխանութիւն նոցա ի յԱրտազ գաւառէ, եւ ետ շխ Բայազիթ ոմն այլազգոյ, եւ որ յառաջասացեալ շարքն բարձեալ էին ի դրանէ սուրբ առաքելոյս եւ տարեալ թասպութեամբ եւ նախանձու, սա դարձեալ ի տեղի իւր երեւ մեծաւ յօժարութեամբ եւ հնազանդութեան սիրով՝ զդուռն եկեղեցոյս, եւ զմեծ զանկակն, եւ զգերան ժամատանս, եւ այլ ամենայն կերպիւ անխաթ եւ ողորմութիւն, զոր ի մարդապաշտ անիծեալ յազգէն յայն ոչ տեսար ամենեւին, զոր սա արար. որ եւ ըստ հնազանդութեան իւրոյ զհատուցութեան ի մարմնաւորս առցէ՝ զառողջութիւն եւ զտաւաթ»¹¹⁰:

Հազիվ թե հնարավոր լինի շարախինդ այս տողերը հասարակական կարծիքի բնորոշ արձագանք համարել. Ս. Թադեի վանքի առաջնորդը, ինչպես ասացինք, ուներ նաև անձնական հաշիվներ Մակվի «ախթարմա» տերերի հետ:

Արտազի հայկական իշխանության անկման տխուր փաստին անդրադարձել են նաև այլ ժամանակակիցներ, և հատկապես՝ աղթամարցի բազմաշխատ գրիչ Թումա Մինասենցը իր ընդարձակ հիշատակարաններից մեկում, որ իրավամբ ճանաչված է որպես ժամանակագրություն. «Իսկ ի յՊԶԶ (1427) թվին,—գրել է նա,— էառ նոյն Սքանդարն զանառիկ բերթն Մակուայ ի ձեռաց քրիստոնէից... և անմխիթար կրտսկիժ ել հաս բոլոր ազգացս քրիստոնէից, զի բոլոր աշխարհացս այն մին բերթն միայն էր մնացեալ ի ձեռս քրիստոնէից, և այն ես առաւ ի մէնջ»¹¹¹:

Խորը կսկիծով են շաղախված այս տողերը. հայրենասեր գործիչը ողբում է կենտրոնական Հայաստանում իր գոյությունը պահպանած հայկական վերջին այս իշխանության բռնադրավումը օտար տիրակալների կողմից, հավատքի ու դավանանքի հարցերը մեկ կողմ նետելով:

Սորդաթմիշը Արտազի իշխանական գերդաստանի վերջին ներկայացուցիչն է, որ հիշատակված է սկզբնաղբյուրներում: Մակվի բերդի անկումը և կաթուղիկ հայ տերերի իշխանության բարձումը տեղի է ունեցել, հավանաբար, հենց Սորդաթմիշի օրոք: Մեծ հավանականությամբ սրա ազգականներն ու հաջորդները որպես գյուղատեր-կալվածատերեր, շարունակել են իրենց գոյությունը պատմա-աշխարհագրական այդ միջավայրում նաև հետագա մեկ-երկու դարերի ընթացքում: Այդ բնաշխարհի հայկական հուշարձանների, մանավանդ վիմական արձանագրությունների մանրակրկիտ ուսումնասիրությամբ կարող են ի հայտ բերվել Արտազի հայ ավատատերերի նոր անուններ, ինչպես և նոր տվյալներ արդեն հայտնի անձնավորությունների մասին: Այդ աշխատանքը թողնելով մեր հաջորդներին, ստորև փորձելու ենք տոհմաբանական մի ծառ կազմել՝ ներառնելով նրա մեջ Արտազի հոգևոր և աշխարհիկ տերերի ընտանիքին պատկանող ու մեզ հայտնի բոլոր անձանց անուններ:

¹¹⁰ Ն. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 368: Հմմտ. նաև «Ժն դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա, էջ 353 (այս հրատարակությունը, որ կատարված է Մ. Տեր-Մովսիսյանի ընդօրինակությամբ, ունի սխալ ընթերցումներ ու բացթողումներ):

¹¹¹ «Ժն դարի հիշատակարաններ», մասն Ա, էջ 376:

բը. խորհում ենք, որ այն կարող է իր նպաստը բերել որպես շարադրված նյութի հակիրճ ամփոփում (տե՛ս հաջորդ՝ 166 էջը)¹¹²:

1426 թվականից հետո Մակվի նշանավոր բերդը դառնում է Կարա-կոյունլու թուրքմենների կարևորագույն ամրություններից մեկը: Ջհանշահ փաղիշահի (1437—1467) անհնազանդ որդիներից Հասան-Ալին երկար տարիներ արգելափակված էր անմատչելի այս բերդում: Իր հոր սպանությունից հետո, նա, որ «ի Մակու էր ի զընդան», ազատ է արձակվում և պատրաստվում դիմագրավելու Ադ-կոյունլու Ուզուն-Հասանի հաղթականորեն առաջ շարժվող զորքերին, սակայն պարտություն է կրում և նրանով էլ վերջ է տրվում Կարա-կոյունլուների տիրապետությանը Իրանում և Անդրկովկասում: Արտագի շրջանում բնակություն հաստատած Կարա-կոյունլու թուրքմենները այսօր էլ ամենաբազմամարդ էթնիկական տարրն են Իրանի հյուսիս-արևմտյան սահմանագլուխը դարձած այդ շրջանի: Նրանց միջավայրում շատ տարածված է Ալի-Իլահի աղանդը, որ ինքնատիպ մի խառնուրդ է մահմեդականության, բրիստոնեության և հեթանոսական հավատալիքների¹¹³:

Արտագի շրջանում իրենց գոյությունը երկար պահպանեցին նաև կաթոլիկ դավանանք ընդունած հայերը, կենտրոն ունենալով Մործորի սուրբ Աստվածածնի վանքը և Կեծուկ գյուղը, որի ճիշտ վայրը որոշելու համար նյութեր չունենք¹¹⁴: 1654 թվականին կազմված մի վիճակագրության մեջ տվյալ է

112 Տոհմածառը բաժանել ենք երկու մայր ճյուղերի, ձախակողմյանը հատկացնելով գերդաստանի հոգևոր տերերին, աջակողմյանը՝ աշխարհիկ իշխաններին: Ենթադրյալ առնչությունները՝ կետագծերով են ցույց տրված: Յուրաքանչյուր անվան կից դրված են տվյալ անձնավորության մասին հայտնի ծայրային րվակաճճերը:

Հոգևոր տերերին հատկացված ճյուղին առընթեր՝ ձախ կողմից, տրված է ս. Քաղևոս առաքյալի թեմի հայադավան եպիսկոպոսների ցանկը:


113 Ըստ որոշ տվյալների կարելի է ենթադրել, որ Կարա-կոյունլուների իշխող դինաստիայի անդամներից ոմանք եղել են կրոնական այս վարդապետության հետևորդներ: Իսբանդարի և Ջհանշահի գործունեության մեջ դիտված են դրվագներ, որ անբացատրելի պետք է մնային, եթե նրանց ուղղադավան մահմեդական համարենք: Առավել շափով նույնը կարելի է ասել Հասան-Ալու մասին, որը նորոգել է Արճեշի հայկական եկեղեցիներից մեկի գմբեթը, Մակվում կառուցել է Ս. Վարդան անունով եկեղեցի և այլն:

Ալի-Իլահի աղանդի մասին առաջին գիտական խոսքն ասել է Ա. Քոխմախյանը, որ XIX դարի 80-ական թթ. սկզբներին եղել է Մակվի շրջանում և մի քանի օր ապրել աղանդավորների գյուղերում: Ըստ նրա պատմածի՝ տարին մի քանի անգամ նրանք կատարում են սրբազան կրակը լուցանելու արարողություն՝ երկսեռ բազմությամբ: Տարին մեկ անգամ, շեյխի ձեռքով, մատաղի (ազապի) արարողություն է կատարվում. միսը բաժանում են բոլոր մեծահասակներին, սկոթները (առանց ջարդելու)՝ թաղում են: Ուխտ են կատարում սոսի ծառերին, մոմ են վառում, խունկ ծխում, մատաղ անում իրենց ուխտատեղերում, որ «Ղարա-օղլան», այսինքն՝ Փոխ-մանուկ են կոչվում: Չնայած արտաբնական իրենց ձևացնում են մահմեդական, բայց ոչ ծոմ են պահում, ոչ նամազ անում: Գինի և օղի զործածում են՝ առանց բաշվելու նրբ նրանց հարցնում են, թե Ալին ինչու են ասած ուրդի դավանում, նրանք պատասխանում են. «Նրան, որին դուք Քրիստոս եք անվանում, միևնույն է որին մենք Ալի ենք ասում, զանազանությունը անվան մեջ է միայն. մեր և ձեր (հայերի) միջև եղած տարբերությունը՝ սոխի կճեպի չափ է» (Ա. Քոխմախյան, Մասիս լեռների հարավային ստորոտները, Բ մասն, Քիֆլիս, 1882, էջ 33—38):

Այս աղանդավորների մասին գրել են նաև Իրան այցելած եվրոպացի ու ռուս արևելագետներ (տե՛ս օրինակ, В. Минорский, Материалы для изучения персидской секты „Люди истины“ или Али-Илахи, часть I, М., 1911).

114 Մործորի վանքից շուրջ 2 կմ հյուսիս գտնվում է Բարոն գյուղը, որ այսպես է կոչվել, հավանաբար, պարոնապատկան կալվածք լինելով: Գուցե այդտեղ են պատսպարվել Մակվի տերերը 1426 թվականից հետո, զրկվելով իրենց իշխանանիստ բերդից: Կարելի է ենթադրել նաև, որ Կեծուկը հենց այս Բարոն կոչված գյուղի հին անունն է:

ԱՐՏԱՍԶԻ ՀՈԳԵՎՈՐ ԵՎ ԱՇԽԱՐՀԻՆ ՏԵՐԵՐԻ ԳԵՐԳԱՍՏԱՆԸ
(ճյուղագրության վարձ)



եղել այս գյուղում բնակվող 9 տուն (50 շունչ) կաթուղիկների մասին¹¹⁵։ Այստեղից էր Գրիգոր Մործորեցի կոչված վարդապետը, որ 1672 թ. գտնվում էր Վենետիկում, ուր զբաղված էր նախիջևանի կաթուղիկ վաճառքի շահի գրված գրամագլխի տոկոսներն ստանալու գործով. 1675—1676 թթ. վերադարձած լինելով Մործորի վանք, նա ընդօրինակել է մի քարոզչիրք, կատարել է նաև թարգմանություններ՝ իտալերենից հայերեն, գրել տաղեր և կրոնական այլ գրվածքներ¹¹⁶։

Արտազի շրջանի հայ-կաթուղիկները, կտրված լինելով ազգային կենսատու ավանդություններից, նախիջևանի շրջանի իրենց դավանակիցների հետ միասին խզեցին իրենց կապերը մայր ժողովրդից և ընդունեցին մահմեդականություն։

Փրձենք պարզել այս իրողության ժամանակը։

1732 թ. շարադրած իր «Դրախտ ցանկալի» գրվածքի մեջ Ղազար Զահկեցին կաթուղիկ հայերի կրոնափոխության մասին խոսում է՝ որպես տարիներ առաջ կատարված փաստ. «նմանապէս և յերկրին նախջուանայ ախթրմայից զեղորայքն,—գրում է նա,— բազումք դարձան ի կրօնս պարսից, որպէս Սալիթաղ և Քոնայ... և Կէծուկ՝ սոքա ամենեքեան. իսկ Ապրակունիս և Շահրունիս և Խոշկաշէն և Ապարաներ, որ է եպիսկոպոսարան իւրեանց՝ սոցա մեծ մասն։ Բայց ի գեօղաքաղաքին Ճահկայ եղեալ ախթարմայքն ոչ դարձան ի կրօնս պարսից վասն ազգիս միաբնակաց, որ զետեղեալք եմք ի միջի նոցա»¹¹⁷։ Ըստ այսմ կրոնափոխությունը տեղի է ունեցել 1732-ից տասնամյակներ առաջ։

1691 թ. Երնջակի շրջանի Նորաշեն գյուղում շարադրված մի հիշատակարանի մեջ ասվում է, որ արդեն 7 տարի է ինչ պարսից շահի զորավարներից մեկը, «իբրև դաւադ ծովու» զորքի գլուխ անցած, ասպատակություններ է կատարում, ավերում և ավարում է Գանձակից սկսած՝ մինչև Գողթան գավառն ընկած շրջանները։ Հիշատակագիրը այդ դեպքերի հետ է առնչում նաև շատ «սուտ քրիստոնյաների» (իմա՝ կաթուղիկ հայերի) մահմեդականություն ընդունելը. «Բազում սուտ քրիստոնեայք զսուրբ և զճշմարիտ հաւատս Քրիստոսի փոխանակեցին... և միաբանեցան ընդ պարսից»—գրում է նա¹¹⁸։

Այս տեղեկությունների համադրումով հանգում ենք այն եզրակացության, որ Արտազի և նախիջևանի հայ կաթուղիկների զանգվածային հավատափոխությունը տեղի է ունեցել 1691 թվականից մի քանի տարի առաջ, եզրափակիչ արարքը հանդիսանալով Մակվի և Քոնայի հոգևոր և աշխարհիկ տերերի միջավայրում XIV դարի առաջին տասնամյակներին սկիզբ առած հոռմեական եկեղեցու հետ միաբանելու անհնոատես շարժման։

115 Հ. Ս. Էփրիկյան, Բնաշխարհիկ բառարան, հատոր երկրորդ, Վենետիկ, 1907, էջ 386։

116 Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատոր Ա, Երևան, 1942, էջ 628, «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան մատենադարանի», հատոր Ա, էջ 1207, հատոր Բ, էջ 499։

117 Ղազար Ճահկեցի, Դիրք աստուածաբանական, որ կոչի Դրախտ ցանկալի, Կ. Պոլիս, 1735, էջ 333—334։

118 Գ. Զաւակեանյան, Մատենադարան հայկական թարգմանութեանց, Վենետիկ, 1889, էջ 614—615։

II

ԱՐՏԱԶԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ԾՈՐԾՈՐԻ ՎԱՆՔԸ

1. Ծործորի վանքի տեղագրությունը.—Արտազի հայկական իշխանության մշակութային կենտրոնը Ծործորի վանքն է եղել, որ հիմնադրվել է Զաքարիա եպիսկոպոսի կողմից և ծաղկել XIV դարի առաջին հիսնամյակում, հանդիսանալով գրական ու թարգմանչական գործունեության աշխույժ միջավայր:

Ծործորի ա. Աստվածածնի վանքի մասին հնագույն վկայությունը 1314 թվականից է, և կապվում է Հովհան Երզնկացի վարդապետի գրական-մանկավարժական գործունեության հետ. հաստատվելով նորաստեղծ այդ վանքում, նա Ծործորեցի մականունն է ընդունել, և իր «Յովաննէս Երզնկացի» անունը ճոխացրել՝ «որ այժմ կոչիմ Ծործորեցի» վերադիր բանաձևով: Վանական այս համալիրի ճշգրիտ վայրն առ այսօր չի որոշված և, նույնիսկ, այն կարծիքն է գերիշխում, որ Ծործորի վանքը՝ նույն Ս. Թադեի վանքն է, սխալմամբ տարանջատված¹:

Այս տեսակետն անհիմն է և անընդունելի: Ս. Թադեի վանքում ընդօրինակված ձեռագրերի մեջ վանական այդ հաստատությունը հիշատակվում է այսպիսի բանաձևերով. «Ի գաւառիս կոչեցելումն Արտազ... ի հռչակաւոր ուխտս, ի յաթոռս և ի հանգիստս սուրբ առաքելոյս Թադէոսի, ընդ հովանեաւ ամենազաւր աշոյն Յիսուսի, առ ոտս սուրբ և աստուածային արեամբ ներկեալ նշանիս՝ սուրբ գեղարդեանս և սուրբ կուսին Սանդիստոյ, և այլ բազմահաւաք սրբոցս»², կամ. «Ի գաւառս որ կոչի Արտազ, ընդ հովանեաւ սուրբ առաքելոյս Թադէոսի և աստուածամուխ սուրբ գեղարդեանս»³: Ինչպես տեսնում ենք, Ս. Թադեի վանքի սրբությունների շարքում աստվածամոր անունն իսկ չկա, մինչդեռ Ծործորի վանքի կապակցությամբ ամենուրեք հիշատակվում է միայն Աստվածածինը, ակնարկ անգամ չլինելով Թադեոս առաքյալի և Սանդուխտ կույսի մասունքների, աստվածամուխ գեղարդի և «բազ-

¹ Զ. Ոսկյանը, հատուկ անդրադառնալով այս խնդրին, գրում է. «Զ. Ինճիճյան և Զ. Էփրեկյան երկու զանազան վանքեր կը համարին (հմմտ. «Ասորադրութիւն», էջ 205, Բնաշխարհիկ բառարան, Բ, էջ 251), Զ. Զամչյան կը գրէ իր Պատմութեան ցանկին մեջ (էջ 155)՝ «Ծործորու վանք, այն է ուխտ սուրբ Աստուածածնի ի վիճակ Թադէի չԱրտազ գաւառի» (հմմտ. և Պտմ. 9, էջ 271): Զ. Զարհանեւյան (Պտմ. հայ դպրութեան, էջ 757) և Զ. Պոտուրյան (Բազմավէպ, 1906, էջ 257) կը համարին միեւնոյն վանքը, ինչպես նաև Զ. Ալիշան (Յուշիկը հայրենեաց, Բ, էջ 472)»: Զ. Ոսկյանը բաղվածքներ է անում մի շարք հիշատակարաններից, որոնց մեջ գրչության վայրը մատնանշվում է այսպես. «Ի վիճակ սուրբ առաքելոյն Թադէոսի, ի վանս Ծործորու կոչեցեալ՝ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի»: Այս բանաձևը անկողմնակալ ընթերցողի համար երկու տարբեր վանքերի գոյությունը հաստատող մի փաստ է. Ոսկյանը, սակայն, հակառակ եզրակացության է հանգել. «Այս վկայություններու և տեղիքներու վրա հենելով,—գրում է նա,—հովանական կը թվի թե Ս. Թադեի և Ծործորու վանքերը միեւնոյն վանքերն են... գուցե անոր եկեղեցիներեն մին նախապես կոչված է Ս. Աստվածածին և մյուսը Ս. Թադեոս և կամ նախապես թեմը Թադեոսի վիճակ և վանքը Ս. Աստվածածին անվանված. և ապա քանի որ առաջնորդարանը մեկ հատ էր, կնքված է՝ Ս. Թադեոսի վանք՝ անունով» (նշվ. աշխտ., էջ 467—468):

² Մատենադարան, ձեռ. № 3778, էջ 464ա:

³ «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 227:

մահաւար» այլ սրբությունների մասին: Ըստ այդմ աներկբայելի է երկու տարբեր վանքերի գոյությունը:

Ս. Թադեի վանքը գտնվում է Մակու քաղաքից շուրջ 20 կմ հարավ, Ղարաբիլիսա գյուղի մոտակայքում: Վանքը կանգուն է առ այսօր, ունենալով XVII դարում և XIX դարի սկզբներին կառուցված հավելյալ շենքեր. ուխտագնացության սիրված վայր հանդիսանալով փրանահայության համար՝ մասնակի վերանորոգություններով ամրացվել և շենացվել է վերջին տարիներս⁴:

Մործորի վանքի տեղը որոշելու համար բացառիկ նշանակություն ունի Մակվի շրջանի մասին առկա տեղագրական գրվածքներից ամենակարևորը՝ Ա. Թոխմախյանի «Մասիս լեռների հարավային ստորոտները» աշխատությունը: Այստեղ գրանցված խիստ արժեքավոր տվյալների հիման վրա, օգտագործելով նաև տեղագրական ու քարտեզագրական այլ նյութեր, հնարավոր է լինում պարզել, որ Մործորի վանքը գտնվում է Ակի կոշվող ձորի բերանում, ուր միախառնվում են երեք գետակներ՝ սկիզբ տալով Զենգիմար կոշվող գետին, որ նույնանուն կիրճով հարավից հյուսիս հոսելով, Օղակ գյուղի մոտ թափվում է Մակու-շայ գետը⁵: Հայերի կողմից Զենգիմարա Ասպարածին (նաև Ասպարազին), իսկ տեղացի մահմեդականների կողմից Մայրամ-նանա կոչված այդ վանքը, որի ավերակների ուսումնասիրությունը տեղում ուշադրավ նյութեր կարող է պարզել հայ բանասիրությանը, անտարակույս նույն այն վանական հաստատությունն է, որ հայտնի է միջնադարյան հայկական աղբյուրներում Մործորի վանք անունով⁶:

Հանդիսանալով Արտագի հայկական իշխանության մշակութային կենտրոնը, Մործորի վանքը ծաղկում է ապրել XIV դարի առաջին հիսնամյակում, իր անվան հետ հավերժ շաղկապելով Զաքարիա եպիսկոպոսի և նրա մերձավոր խորհրդական ու կուսակից, նշանավոր գիտնական ու մանկավարժ Հովհաննես Մործորեցու անունները: Ստորև, առանձին հատվածներով անդրա-


⁴ Documenti di Architettura Armena 4, S. Tadei vank, Milano, 1971.

⁵ Ա. Թոխմախյանը գրում է. «Այս աշխարհի ամենամեծ գետը Մագու գետն է, որ ոտգում է Մագուա դաշտը. նորա... երրորդ ամենամեծ ճյուղը բաժանվում է երեք զլխավոր սկիզբների. առաջինը՝ Սարիդալի, սկսվում է Շավարշ[ան] լեռների հյուսիս-արևելյան կողմերից և ոտգում է Թալգարարա հովիտը, երկրորդը՝ Կուսանաց գետը, իջնում է Ավջուղի հարավային սահմաններից և քերելով Արշակավան քաղաքի ավերակները, Հարամյու ձորումը միանում է Սարիդալիի հետ: Երրորդը բղկում է Սանատրուկ և Մահար լեռներից, անցնում է Թադեոս առաքելոս վանքի տակից: Այս երեք ճյուղերը Ասպարածին վանքի ավերակների մոտ խառնվում են իրար և կազմում Զինգյումեթ գետը, որ Ակի ժայռոտ և դժվարակոխ ձորից անցնելով հարավից դեպի հյուսիս՝ Օղակ գյուղի մոտ խառնվում է վերահիշյալ ճյուղերի հետ և շրջելով բնթացքը դեպի արևելք, մտնում է Մագուա ձորը» (Մասիս լեռների հարավային ստորոտները, մասն Ա, Թիֆլիս, 1882, էջ 34):

Այս շրջանի պատմական աշխարհագրության մասին արժեքավոր տվյալներ կան նաև Հ. Օ. Աղաբեկյանի «К вопросу о месте аварайрского сражения» հոդվածում (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 4, էջ 91—114):

⁶ Մործորի վանքի շատ անհաջող լուսանկարը աղադրված է Վ. Մինորսկու վերահիշյալ «Древности Маку» աշխատության մեջ (էջ 11). հրապարակում ենք դրա հիման վրա կատարված ճշգրիտ գծանկարը (տե՛ս նկ. 5): Վանքի մասին Մինորսկու մոտ կարդում ենք. «В Бебеджике у самого входа Зенгимар в глубокую и непроходимую щель, по которой река выбегает на макинскую долину (выше города Маку), находятся развалины часовни из тесаного камня, известной у мусульман под названием Марьям-пене, т. е. „мать Мария“ (նույն տեղում, էջ 11—12):

դառնալու ենք նրանց գործունեությանը, հանդամանորեն ներկայացնելով հատկապես Հովհան Մործորեցու զիտական աշխատանքի արդյունքները:



Նկ. 3. Փաղեսս առաքյալի վանքի 1329 թ. կառուցված եկեղեցին (առջևի շենքը)

2. Զաքարիա Եպիսկոպոս Մործորեցի՝ մեկեմաս ու մատենագիր.—Ամեն մի բարձրաստիճան եկեղեցական պաշտոնյա, մանավանդ տասնամյակներ աթոռակալած և դադափարական թեժ պայքար մղած մեկը, իր կյանքի ընթացքում պարտավորված է լինում պաշտոնական բազմաթիվ ու բազմատեսակ գրություններ առաքել իր ժամանակի հոգևոր և աշխարհիկ տերերին, վերադաս և ստորադաս պաշտոնյաների ու այլ անձանց: Այդպիսի գրությունների հեղինակները, սովորաբար, տեղ չեն գրավում մատենագրության պատմության մեջ: Այլ է Առաքելոց թեմի նշանավոր առաջնորդ Զաքարիա Եպիսկոպոսի պարագան: Նրա նամակներից մեկը՝ հասցեագրված Հովհան Օրբելին, որ տպագրված է գրեթե ամբողջությամբ⁷, հեղինակի ճարտար ընդդիմախոս լինելու մասին առատ վկայություններ է պարունակում. նա ոչ միայն պաշտպանում է իր որդեգրած դիրքը դավանաբանական պայքարում, այլև

7 Մ. Զամչյանց, Պատմություն Հայոց, Գ, էջ 306—308:

հակահարձակման անցնում, մեղադրելով Սյունյաց մետրոպոլիտին անհնազանդության և մեծամտության մեջ: Ժողովրդական բառ ու բանով և երգիծանքի հնարանքներով Զաքարիան համեմտում է իր գրության տարբեր մասերը, ներկայանալով ընթերցողին որպես բնածին տաղանդով օժտված մի անձնավորություն: Ըստ տեղեկությունների նա շարադրել է և այլ նամակներ՝ ուղղված կաթողիկոսին ու այլ գործիչներին:

Մործորի վանքի հիմնադիրը, վերահիշյալ նամակներից բացի, հեղինակել է նաև այլ երկեր, որոնցից կարևորները կամ դեռևս չեն հայտնաբերվել, կամ էլ տեղ են գրավելու հայ մատենագրության ավաղելի կորուստների ցանկում:

Մ. Զամչյանն իսկ գիտեր, որ Զաքարիան գրել է ինչ-որ պատմություն՝ «Ի վերայ կարգի վարդապետացն Հայոց» և այլ երկեր:

Հավանաբար նույն այս «Պատմությունն» ի նկատի ունենալով լեհահայ գործիչ Վարդան Հունանյանը 1703 թվականից հետո եվդոկեցիներին հղած իր մի նամակում, Նզր կաթողիկոսի հրավիրած ժողովի մասին խոսելիս: Նա մերժում է այն կարծիքը, թե Մաթուսաղան գիտնականագույնն է եղել այդ ժողովի 195 մասնակիցներից. նրանց մեջ եղել են Արտադի արքեպիսկոպոս Տիրատուրի, Հաղբատի արքեպիսկոպոս Վահանի նման նշանավոր մարդիկ: Իրպես աղբյուր այդ վկայությունների Հունանյանը ձեռագրի լուսանցքի վրա նշել է. «Զաքարիայ Մործորեցի, Յաղագս ժողովոց, գլ. Թ.»⁸: Այս նույն աղբյուրի մասին հպանցիկ տեղեկություն ունի նաև լեհահայ մի այլ գործիչ՝ Ստեփանոս Ռոշկան⁹:

Զաքարիա Մործորեցու պատմական ինչ-որ գրվածքի հեղինակ լինելու մասին լուր է ունեցել նաև Հովհաննես Շահխաթունյանցը. 1847 թ. ապրիլի 25-ին Ներսես Աշտարակեցուն հղած իր մի գրության մեջ նա խնդրում է Աստրախան ուղարկվող Մատթեոս եպիսկոպոսին հանձնարարել նաև հետևյալը. «Ի գնալ նորա անդ հասու լիցի գրատան եկեղեցւոյն սուրբ Աստուածածնի անդ յԱստրախան, և զամենայն առեալ ի տումար ըստ ամբողջութեան մատենիցն և ըստ հատուածոց հեղինակութեանց պարունակելոց ի նոսին, յորս, որպէս լսիմս, գտանի և պատմութիւն ի Զաքարիայէ Մործորեցւոյ, որ անգիտ է ամենեկին ցարդ»¹⁰:

Զաքարիայի պատմագրական գործունեության մասին այս տվյալները տարբերվում են միմյանցից. ըստ Զամչյանի նրա գրվածքը եղել է «Ի վերայ կարգի վարդապետացն Հայոց», ըստ Հունանյանի նա գրել է. «Յաղագս ժողովոց» խորագրով մի աշխատություն, իսկ Շահխաթունյանցի տվյալներով՝ ուղղակի «Պատմություն»: Հակված ենք կարծելու, որ տարբեր անվանումներով հիշատակվածը՝ միևնույն պատմագրական երկն է, որի մեջ, ամենայն հավանականությամբ, մանրամասն տեղեկություններ են եղել հատկապես Հայոց եկեղեցական ժողովների մասին: Այդ գրվածքն առ այսօր չի հայտնաբերված, բայց որոնումները պետք է շարունակել. բացառված չէ, որ աշխարհով մեկ սփռված հայերեն ձեռագրերից որևէ մեկում, գուցե առանց հեղինա-

8 Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, մասն Ա, էջ 115, Զ. Տաշյան, Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, 1895, էջ 114 (մեղ հետաքրքրող վկայությունը գրանցված է Վիեննայի մատենադարանի № 12 ձեռագրի 52ա էջի վրա):

9 Զ. Տաշյան, նույն տեղում, էջ 681:

10 Ա. Սեդրակյան, Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանցի կենսագրությունը, Ս. Պետերբուրգ, 1898, էջ 174—175:

կի անվան հիշատակության, թաքնված է Զաքարիա Մործորեցու գրչի այդ արգասիքը՝ նոր տվյալներ պարունակելով հայոց եկեղեցու պատմությանը և Արտազի հայկական իշխանությանն առնչվող անցուդարձերի մասին:

Զաքարիայի պատմագրական աշխատանքների հետ աղերսվում են նաև Արտազի և Կապադովկիայի աթոռների առաքելական ծագման ու հաջորդականության մասին հյուսված ցանկերը: Արտազի թեմի առաքելական սկզբնավորության մասին վաղ միջնադարում կյանքի կոչված հնարույր ավանդությունների վերարժարծումն ու գունազարդումը նոր շուք էր տալու և հեղինակություն բերելու Մակվի հայ տերերի գերդաստանին: Դրանով է բացատրվում այն հանգամանքը, որ Ս. Թադևի վանքի վերաշինումից անմիջապես հետո Զաքարիա պարոնտերը շրջանառության մեջ է դնում «Յիշատակագրութիւնք եպիսկոպոսաց առաքելական վիճակիս Արտազու» կոչված մի գրություն, որի անսրող նպատակն է անընդմեջ հաջորդականության կարծեցյալ շղթայով հարաբերության մեջ մտնել Գրիգոր Լուսավորչի և Քրիստոսի աշակերտ Թադևոս առաքյալի հետ:

Զաքարիա եպիսկոպոսը իր այս հորինվածքին պատմական ստույգ գրության տեսք տալու մտահոգությամբ հայտնում է, որ ձեռքի տակ ունեցել է Հայոց ՂԸ (այսինքն՝ մեր թվարկության 650) թվականին Մաղարթա վանքի սպասավոր ոմն Հովհաննեսի գրած մի հիշատակարան: Ուշադիր քննությունը բերում է այն համոզման, որ ցանկի մեջ թվարկված անուններն ըստ մեծի մասին հորինված են նոր ժամանակներում՝ Զաքարիայի գործակցությամբ: Ուշագրավ են այն տողերը, որ Զաքարիայի հավաստումով պատկանում են, իբր, Մաղարթա վանքի վերոհիշյալ վանականին. «Բայց ի սոցանէ չկարացաք գտանել,—ասէ հաւաքողն յիշատակագրութեանս,—թէ ոյր և զո ոք կարգեալ եղև տեսուչ այսմ վիճակիս յաղագս կործանման և աւերման քաղաքիս և վանացս ի ձեռս բռնաւորաց և շարժից»:

Դժվար չէ այս տողերը շաղկապել XIII դարի վերջերին մոնղոլ զորավար Նովրուզի կատարած խժոժությունների և 1319 թ. մեծ երկրաշարժի թարմ հիշատակների հետ, քննարկվող գրվածքի հորինման պատիվը շնորհելով Զաքարիա Մործորեցուն: Ըստ այդմ նրան պետք է վերադրել նաև «Յաջորդութիւն սուրբ առաքելոյն Թադէոսի ի Կեսարիայ Կապադովկացոց վիճակի» կոչված ցանկի վերախմբագրման աշխատանքը: Այս ցանկը ևս, նախորդի նման, կյանքի է կոչվել Թադևոս առաքյալի վիճակի հեղինակությունը ժամանակակիցների աչքում բարձրացնելու նպատակով: Կեսարիայի եպիսկոպոսական հինավուրց աթոռը վաղուց ի վեր գոյություն չունի: Արտազի հայ եպիսկոպոսը, իրեն հուշակելով Թադևոս առաքյալի հաջորդ, այս ցանկի թելադրությամբ փորձում էր սփռել նաև Կապադովկիայի հին եկեղեցու վեհապետների՝ Ղևոնդի, Բարսեղ Կեսարացու և մյուս նշանավոր գործիչների փառավոր անուններով¹¹:

11 Այս ցանկերն առաջին անգամ հրապարակվել են «Արարատ» ամսագրի մեջ (1868 թ., էջ 102—104), ապա արտատպվել բազմիցս (տե՛ս օրինակ, «Հանդէս ամսօրեայ», 1941, էջ 44, Սամուել Անեցու ժամանակագրության հավելված, էջ 279—281 և այլն): Վ. Հացունին իր «Կարևոր խնդիրներ հայ եկեղեցւո պատմութենէն» մեր կողմից վկայակոչված աշխատության մեջ, վերլուծելով վերոհիշյալ տվյալները, հանգել է ընդունելի այն եզրակացության, որ «Մործորեցւոյն ցուցակին թի հին գրուցատրութենէ» և «գործակցութեամբ հոգւոյն» հավաքված անվանք՝ կրնային նպաստել յուր աթոռին փառաց, բայց ոչ և հայ եկեղեցւո պատմության» (էջ 102):

Զաքարիա եպիսկոպոսն ունեցել է նաև այլ գրվածքներ, մասնավորապես ինչ-որ կանոնադրություն, որի մասին ակնարկներ կան Հովհան Թրբելի մեզ ծանոթ մեղադրական թղթի մեջ: Սյունյաց մետրոպոլիտն այստեղ նախատում է Արտագի եպիսկոպոսին Հայոց եկեղեցու ավանդություններն արհամարհելու, կաթողիկ եկեղեցուն դավանաբանական զիջումներ կատարելու մեջ՝ վկայակոչելով վերջինիս գրած կանոնները: Պարզվում է նաև, որ Մործորեցու այդ կանոններն ըստ էության եղել են եկեղեցական արարողությունների ու ծեսերի փոփոխման մասին հրահանգներ, որոնք ընդառաջել են կաթողիկ եկեղեցու պահանջներին¹²:

Մեծ է Զաքարիա եպիսկոպոսի դերը որպես մեկենաս. նրա նախաձեռնությամբ և օժանդակությամբ գրվել ու թարգմանվել են աստվածաբանական երկեր և մեկնություններ (դրանց մասին խոսք կլինի ստորև), ընդօրինակվել են արժեքավոր ձեռագրեր և այլն¹³:

3. Հովհաննես երզնկացի—Մործորեցի.—Միջնադարյան հայ մատենագիրները քաջ տեղյակ էին, որ XIII—XIV դարերում ապրել ու ստեղծագործել են երզնկացի երկու Հովհաննեսներ՝ Պլուզը և Մործորեցին: Հայ մեկնիչների մի ցանկի մեջ, օրինակ, գրված է. «Զքերականն բազումք (մեկնեցին), բայց յետոյ Յոհաննէս վարդապետն երզնկացին, յետ նորա՝ Եսային, յետ նորա՝ Յոհաննէս Մործորեցին»¹⁴, իսկ Ղ. Զահեցին ոչ միայն տարանջատում է նույնանուն այդ երզնկացիներին, այլև համառոտակի ներկայացնում դրանցից յուրաքանչյուրի գրական վաստակը, վերջինիս մասին գրելով. «Յոհաննէս Մործորեցին, այր քաջուսումն և մտապերճ: Սա մեկնեաց զաւետարանն Մատթէոսի պարզ և զիրահաս ոճով, և մեկնեաց զքերականութիւնն»¹⁵:

Մ. Զամչյանն էր հավանաբար առաջինը, որ հանդիմանում էր միաձուլելով նույնանուն այդ գործիչներին, կյանքի կոչեց անգո մի մատենագիր՝ Հովհաննես

Յավայի է, սակայն, որ աղբյուրների գիտական քննություն կատարելու անհրաժեշտության մասին զեղեցիկ դատողություններ կատարող բանասերը դառնում է ծայրահեղ դյուրահավատ, երբ խոսքը վերաբերում է կաթողիկ եկեղեցու առաքելական սկզբնավորության մասին գոյություն ունեցող ավանդություններին:

¹² Մեջ ենք բերում Հովհան Թրբելի նամակի համապատասխան հատվածը. «Զգիտացաք թէ ինչ պատճառաւ դու ի մէջ բաժանեցար. թէ զհոգևոր տիրոջ հրամանքն պատճառես, նա ի բեզնէ չուր միայն խնդրեց ի խորհուրդն առնուլ և ի ղեկտեմքերի Ին. (25) զծնունդն առնել. դու զպահոց լուծումն յո՞ւստ ուսար, և զառաքելական կանոնաց ջրումն կամ հեթանոսաբար զանխըտիր շաղղակերութիւնդ... և ի հաւատոյն ուրացութիւն յո՞ր Քրիստոսէ ուսար, կամ ղեկեղեցիս հայաստանեայց ուրանալ և յոլով նախատանօք նախատել, կամ զտարոյն բոլոր պահքն ի Մ. (50) օր բերելալ, որպէս քո գրեալ կանոնս ևր, կամ զամուսնութիւն աշխարհի քահանայի՝ բառնալ, և զոչ արժանիսն քահանայագործութեան ի գործ սուրբ խորհրդոյն ածել, դու զքո խորհրդովդ զբեզ ի միջոյ քո եղբարցս և ի քո դիտոյն և յամենայն եկեղեցոյ որոշեցեր՝ ուրիշ առանձին կանոնադրութեամբք» («Ծոռաբաղ», 1860, էջ 55, ձեռ. № 8245, էջ 183):

¹³ Ներսես Տարոնացի վարդապետը 1332 թ. գրած իր հիշատակարանում հայտնում է, որ իր պատվերով ընդօրինակվող Աստվածաշնչի գրություն համար ծախսվել է 1350 դրամ, որից 500-ը իրեն անփոխադարձ տվել է Զաքարիա եպիսկոպոսը. «Եւ ես,—գրում է նա,—յայնժամ յարեալ անտի և զնացի ի սուրբ առաքելայն Թադէոս՝ առ տէր Զաքարէ արքեպիսկոպոս, և նա Լա ինձ Ծ. (500) դր[ամ]» («ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 246):

¹⁴ Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հատոր Ա, Երևան, 1959, էջ LXI:

¹⁵ «Գիրք աստուածաբանական, որ կոչի Դրախտ ցանկալի, շարադրեալ ի Ղազարու աստուածաբան վարդապետէ Ծահեցոյ», Կ. Պոլիս, 1775, էջ 638 (հմտ. Հ. Անասյան, նշվ. աշխ., էջ XLVI):

Երզնկացի—Պլուզ—Մործորեցի եռահարկ մակդիրներով, որ ապրել է, իբր, շուրջ մեկ դար, կյանքի վերջին տասնամյակներում հրաժարվել գաղափարական իր սկզբունքներից ու կնքել իր մահկանացուն որպես կաթոլիկ եկեղեցու սպասավոր¹⁶։ Այսպես են պատկերացրել Հովհաննես Երզնկացու կյանքն ու գործունեությունը և Գ. Զարպհանալյանը և Ղ. Ալիշանը և նրանց հետևող բոլոր բանասերները՝ մինչև վերջին տարիներս, երբ միացյալ ջանքերով լուծվեց այդ թյուրիմացությունը՝ Պլուզ և Մործորեցի կոչված Հովհաննեսների կրկին տարանջատումով¹⁷։

Հովհաննես Պլուզ Երզնկացու մասին գրվել են արդեն լուրջ ուսումնասիրություններ, որոնց մեջ տրվել է բազմալատակ այդ մատենագրի երկերի գրեթե ամբողջական ցանկը, հրապարակվել են նրա շափածո ստեղծագործությունների մեծ մասը և այլ գործեր։

Անհամեմատ քիչ աշխատանք է կատարված Մործորեցի Հովհաննեսի կենսագրության և գիտա-մանկավարժական գործունեության կարևոր գրվադների բացահայտման ուղղությամբ։ Ա. Սրապյանը, ուսումնասիրելով XIV դարի հիշատակարանների հրապարակված ժողովածուն, նշել է, որ նրա կենսագրության հնագույն տվյալը 1302 թվականից է և որ նա Մործորեցի մականունն է ընդունել 1314-ից հետո¹⁸։ Հ. Քյուրդյանը Վենետիկի Մխիթարյանց մատենադարանի № 2019 ձեռագրում գտել է «Խոստովանութիւն գաղտնեաց», «Խրատք ոգեշահք վասն զղջման և արտասուաց» և այլ խորագրերով մի քանի շափածո գործեր, որոնց հեղինակն է ոմն Հովհաննես Երզնկացի՝ «որոյ գիւղն Պարկանց կոչի»։ Նույն ձեռագրի մեջ գտնվում են նաև նույն Հովհաննեսի խնդրանքով Գևորգ վարդապետի գրած ինչ-որ մեկնություններ։ Այս Գևորգին նույնացնելով նշանավոր Գևորգ Սկևռացու հետ (մհ. 1301 թ.), Քյուրդյանը ենթադրել է, որ Պարկանցի Հովհաննեսն էլ ոչ այլ ոք է, քան ինքը՝ Մործորեցի Հովհաննեսը, որ մինչև Արտազում հաստատվելը, իր ծննդավայր գյուղի անունով կոչվել է Պարկանցի¹⁹։

Հարկ է նշել, որ փաստական ոչ մի հիմք չունենք ի հաստատություն այս նույնացումների։ Մործորեցին մինչև Արտաղի համանուն վանք տեղափոխվելը գրել է մի շարք հիշատակարաններ, որոնցից և ոչ մեկում իրեն Պարկանցի չի կոչել, իսկ մի հիշատակարանում, ինչպես կտեսնենք ստորև, ասված է ուղղակի, որ նա «էր ի հռչակաւոր քաղաքէն Եզնկայ կոչեցեալ»։ Անընդունելի է նաև Գևորգ վարդապետին Սկևռացու հետ նույնացնելը, որը Երզնկայի կողմերում երբեք չի գործել²⁰։ Կարծում ենք, ուստի, որ վերոհիշյալ ձեռագրի մեջ հիշատակված վարդապետը՝ նշանավոր Գևորգ Երզնկացին է (մհ. 1416 թ.)՝ Հովհան Որոտնեցու աշակերտն ու Գր. Տաթևացու դասընկերը, որ XIV դարի վեր-

16 Մ. Զամչյանց, Պատմութիւն Հայոց, հատ. Գ, էջ 271—274։

17 Այս հարցի շուրջ ժամանակագրական կարգով արտահայտվել են Լ. Խաչիկյանը, Հ. Քյուրդյանը, Ա. Սրապյանը և է. Բաղդասարյանը։ Մանրամասնությունները տեսնել է. Բաղդասարյանի «Նոր տվյալներ Հովհաննես Երզնկացու (Պլուզի) մասին» հոդվածի մեջ («Բանբեր Հայաստանի արխիվների», 1969, № 2, էջ 131—140)։

18 Արմենուհի Սրապյան, Հովհաննես Երզնկացի, Երևան, 1958, էջ 31—32։

19 Հ. Քյուրդյան, Հովհաննես Երզնկացի-Մործորեցի (Նորագյուտ նյութեր Ս. Ղազարու մեկ նոր ձեռագրին), «Բազմավեպ», 1954, էջ 242—245։

20 Է. Բաղդասարյան, Գևորգ Սկևռացու «Վարքը» («Բանբեր Մատենադարանի», № 7, 1964, էջ 399—434)։

ջերին Երզնկայի մոտ գտնվող Կապոսի վանքում դպրոց էր հիմնադրել և իր շուրջ համախմբել ուսման կարոտ մի տասնյակ աշակերտների: Հավանաբար սրանցից մեկն էր սխալմամբ Հովհաննես Մործորեցու հետ նույնացված Հովհաննես Պարկանցին²¹:

Հովհաննես Երզնկացին, իր իսկ վկայությամբ, եղել է «երջանիկ վարժապետ» Եսայի Նշեցու աշակերտը: Գլաձորի համալսարանում սովորելու տարիներին ընդօրինակել է մի քանի ձեռագիր, բոլորն էր իմաստասիրական ուշագրավ նյութերի ժողովածուներ: 1298 թվականին «ի գաւառիս Վայոց ձոր, ի վանս Գլաձոր» արտագրել է Մ. Խորենացու խմբագրած ճարտասանական գիտելիքների ձեռնարկը՝ «Պիտոյից գիրքը», որի հիշատակարանում իրեն կոչում է «յոգնամեղ ծառայ... աշակերտ բանի»²²: Զորս տարի հետո՝ 1302 թ., նույն վայրում («ի սուրբ և ի գերահռչակ ուխտն Գլաձոր անուանեալ, որ է երկրորդ Աթէնս») Հովհաննեսն ընդօրինակել է Ներսես Լամբրոնացու «Մեկնութիւն սաղմոսաց» աշխատության մի մասը. հաջորդ մասի գրիչ Մկրտիչը իր գործընկերոջը ներկայացնում է ոչ որպէս «բանի աշակերտ», այլ «սպասաւոր... բանի մերձ ի կատարելութիւն», այսինքն վարդապետական աստիճան ստանալու նախադրանք կանգնած մի անձնավորություն²³: Մեկ տարի անց Հովհաննես Երզնկացին հիշատակվում է արդեն որպէս վարդապետ. նրա աշակերտներից մեկը, որի անունը ցավոք անհայտ է մնում, նրա պատվերով ընդօրինակում է քերականագիտական, բնագիտական և իմաստասիրական արժեքավոր հոգվածների մի ժողովածու, որի հիշատակարանում գրվատում է իր ուսուցչին, ընդգրծելով գրչության արվեստի մեջ նրա քաջավարժ լինելը²⁴: Հաջորդ տեղեկությունը մեր գործչի մասին ստանում ենք 1306 թ. Գլաձորի վանքում իր իսկ ընդօրինակած ձեռագրի շափածո և արձակ հիշատակարաններից: Զեռագիրը սլարունակում է ուշագրավ և հազվագյուտ բնագրեր՝ Ստեփանոս Սյունեցու և Նանա վարդապետի գրած «Յովհաննու աւետարանի մեկնութիւն»-ները, Անդրեաս Կապադովկացու «Մեկնութիւն յայտնութեանն Յովհաննու» աշխատությունը և այլ հետաքրքրական բնագրեր: «Դարձեալ,—գրում է Հովհաննես վարդապետն իր աշխատանքի մասին,—լիշեսչիք ի Քրիստոս և զիս՝ զտարժանեալ մեղսաներկ ոգիս՝ զնուաստ Յովհաննէս] Եզնկայեցի սպասաւոր բանի, որ հարեալ ցանկութեամբ սիրոյ ի փափաք սորին, գրեցի իմով իսկ տխնղծ մատամբս ի մխիթարութիւն վշտացեալ հոգւոյ իմոյ, և ի վարժ կրթութեան երկա-

21 Նորայր եպս. Պողարյանը վերջերս հրատարակած իր «Հայ գրողներ» արձեռագրոր աշխատության մեջ (Երուսաղեմ, 1971, էջ 406) տալիս է այդ աշակերտների ցանկը՝ «Աբրահամ արեղա, Արիստակես Սեբաստացի, Ավետիք կրօնավոր, Հակոբ վրդ. Ղրիմեցի, և Հովհաննես արեղա Երզնկացի»: Այս Հովհաննեսին նույնացնելով Պարկանցի Հովհաննեսի հետ, լրացնում ենք Նորայր եպիսկոպոսի ցանկը Խաչատուր կրօնավորի անունով. Սրանք բոլորն էլ վարժ ու ժիր գրիչներ են եղել:

22 Մատենադարան, ձեռ. № 6273, էջ 100 (այս ձեռագիրը Ղ. Փիրղամելյանի հավաքած հիշատակարանների ժողովածուն է):

23 «Բայց առաջին սկիզբն գրութեան սորա,—գրում է նա,—եղև... ձեռամբ ուրումն սրբազան քահանայի՝ առն իմաստնոյ և ճարտարի, որ էր ամենայն աստուածաշունչ կտակարանաւորն վարժեալ՝ սպասաւոր զոլով բանի մերձ ի կատարելութիւն՝ Յովհաննէս անուն, որ էր ի հռչակաւոր բաղարձն Եզնկայ կոչեցեալ» (Մատենադարան, ձեռ. № 6558, էջ 637բ, հմմտ. «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 5—6):

24 Մատենադարան, ձեռ. № 598, էջ 213բ (հմմտ. ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 17—18):

սէր անձին բանասիրի, և ի յիշատակ արձանի հոգւոյ իմոյ ամենայն նախնեաց»²⁵:

Հաւանաբար հենց այս տարիներին «ի դառն զաղափարաց ստուգեալ», այսինքն վերծանելով դժվարընթեռնելի ձեռագրեր ու սրբագրելով աղավաղված տեղերը, Հովհաննէս Երզնկացին ընդօրինակել է ևս մի ձեռագիր, որը պարունակում է Վահրամ Բաբունու փիլիսոփայական երկերը, Գր. Նարեկացու «Ողբերգութեան մատեանի», Կյուրեղ Աղեքսանդրացու «Պարապմանց գրքի», Գրիգոր Նյուսացու և Աստվածաբանի աշխատությունների լուծմունքներ և այլ հետաքրքրական նյութեր²⁶:

Սրանք են Հովհաննէս Երզնկացու նախածործորյան շրջանի մասին առկա տեղեկությունները: Դրանց համադրումով պարզվում է, որ նա, ծնվել է շուրջ 1270-ական թթ. Երզնկա քաղաքում, XIII դարի վերջին տարիներին սովորել է Գլաձորում. վարդապետական դավադան է ստացել 1302—1303 թթ. ու դարձել նշանավոր ուսումնական այդ հաստատության ուսուցիչ, Եսայի րաբունայեթի օգնականներից մեկը, այդ պաշտոնում մնալով, հաւանաբար, մինչև Մործորի վանք տեղափոխվելը:

Գլաձորում սովորելու և աշխատելու տարիներին Հովհաննէսն ընդօրինակել է մի շարք ձեռագրեր. դրանցից առնվազն չորսը հասել են մեզ ու վկայում են գրչի լայն հետաքրքրությունների մասին: Նա, մասնավորապես, ուշադրություն է դարձնում գիտական և իմաստասիրական ծանրակշիռ աշխատությունների վրա, որոնց վերծանման և ընդօրինակման համար ջանքեր չի խնայում:

Որոշակի տվյալներ չունենք պարզելու, թե երբ և ինչ պարագաներում է Հովհաննէս Երզնկացին Սյունիքից Արտազ փոխադրվել և հաստատվել Մործորի վանքում, բայց գիտենք, որ այդ տեղի է ունեցել 1314 թվականից առաջ: Հենց այդ թվականին «Ճանճին խուղ» կոչված ինչ-որ վայրում Խաչիկ անունով մի գրիչ ընդօրինակել է իմաստասիրական ու մեկնողական նյութերի հարուստ մի ժողովածու, որի մեջ տեղ է հատկացրել նաև մեր Հովհաննէսի երեք քարոզներին, դրանցից առաջինի խորագրում՝ Երզնկացի կոչմանն առնթեր՝ գնելով նաև «որ և Մործորեցի» որոշիչը²⁷:

Մործորյան շրջանի առաջին տարիները գիտական վաստակի առումով Հովհաննէսի համար բեղմնավոր չեն եղել: Մեր վարդապետի կյանքում, ինչպես կտեսնենք ստորև, դարձակենտային նշանակություն է ունեցել 1316 թվա-

25 Մատենադարան, ձեռ. № 2520, էջ 344ա, շափածո հիշատակարանը գտնվում է ձեռագրի 143բ էջում (հմմտ. «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 43—44):

26 Մատենադարան, ձեռ. № 59: ՏԵ՛ս «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 649:

27 Հովհաննէս Երզնկացու կյանքի ծործորյան շրջանի մասին լրացուցիչ տվյալներ ձեռք բերելու ակնկալությամբ ուշադիր քննեցինք Մաշտոցի անվան մատենադարանի №№ 626, 627 և 4234 ձեռագրերը և պարզեցինք, որ դրանք ստեղծվել են XIV դարի առաջին երկու տասնամյակների ընթացքում, նույն Խաչիկ գրչի ջանքերով: Այդ ձեռագրերից միայն № 627-ի մեջ է նշված «Ճանճին խուղ» այլուստ անհայտ տեղանունը, որ թվում է, թե ինչ-որ բնակավայրի անուն չէ, այլ հայտնի մի վանքի շրջափակում գտնվող մի նեղ խցի (խուղ՝ նշանակում է հյուղ, խուց, խցիկ) զավեշտական հորջորջում: № 626 ձեռագրի հիշատակագրությունների մեջ Խաչիկ գրիչը տալիս է իր (էջ 94ա) և ձեռագրի պատվիրատու Վարդանի անունը, կոչելով նրան «սրբազան և երջանիկ, սուրբ և ընտրեալ եպիսկոպոս տէր Վարդան» (էջ 28ա): Նույնացնելով այս Վարդանին 1315 թ. Ս. Թադևի վանքում հիշվող Վարդանի հետ, որ պատվիրատուն է Մատենադարանի № 3778 ձեռագրի (սրա խնդրանքով Հովհաննէս Մործորեցին 1316 թ. շարագրել իր

կանք. նրա շուրջ համախմբվել են, ինչպես ինքն է ասում, «բանասեր անձինք ի յուսումն կրթութեան աստուածաշունչ տառից խողութեան», և նա, իրագործելով ուսումնական իր ծրագիրը և գոհացում տալով ուսումնասեր աշակերտների հարցասիրությանը, շարագրել է իր աշխատությունները՝ գիտական մեկնություններ, քարոզներ և այլ գործեր:

Ստորև, որոշ հերթականությամբ, ներկայացնում ենք Հովհաննես Մործորեցու մեզ հայտնի բոլոր աշխատությունները, անհրաժեշտ տեղեկություններ հաղորդելով յուրաքանչյուրի բովանդակության, գրության հանգամանքների, գիտական ու ճանաչողական նշանակության և հարակից հարցերի մասին:

ա. Համառոտ տեսութիւն ֆերականի

Ամբողջական խորագիրն է «Նուաստ վարդապետի Յոհանիսի Եղբնկայեցոյ, որ և Մործորեցի, արարեալ համառոտ տեսութիւն քերականի»²⁸:

Գրության հանգամանքների մասին ակնարկներ կան աշխատության սկզբում ղեկավարած փոքրիկ հիշատակագրության մեջ²⁹ և ընծայական-վերջաբանում. այստեղ, հավանաբար դիմելով պատվիրատու Վարդանին, հեղինակը գրում է. «Յորմէ տեղեկացեալ քո ներհուն հմտութեամբ ի սակաւ աշխատութենէս բարձօղդ արուեստիս՝ մի անճաշակ և զմերս թողցես փափագ, այլ յիշմամբ բարոյն ի տէր և զմեզ մասնաւորեցես յագեցումն ի Քրիստոս Յիսուս ի տէր մեր, որ է օրհնեալ ընդ հօր և արարչակից հոգոյն իւրոյ, որպէս էրն ի սկզբանէ և այժմ և յանբաւ յաւիտեանս»³⁰:

Քերականության այդ դասագրքի հիմքում դրված է Հովհաննես Պլուզի համահավաք «Մեկնութիւն քերականի»-ն, որ աղբյուր է հանդիսացել նաև Եսայի Նչեցու, Առաքել Սյունեցու և այլ քերականագետների համար: Նյութի ընդգրկման առումով հետևելով իր մեծանուն հայրենակցին, Մործորեցի դարձած վարդապետը տարբերվում է հունարան հայերենով շարագրվող նախկին քերականագետներից իր պարզ լեզվով ու հստակ ձևակերպումներով. «Եթե նույնիսկ,— գրում է այդ կապակցությամբ Լ. Խաչերյանը,— առանձին նախադասությունների բառային կազմը նրա (իմա՝ Մործորեցու) մոտ հիմնականում նույնն է լինում Երզնկացու (իմա՝ Պլուզի) համեմատությամբ, ապա դրանց շարադասությունը ամբողջությամբ փոփոխության է ենթարկվում համապատասխանեցվելով ժամանակի լեզվամտածողությանը»³¹:

«Մեկնութիւն Դանիէլի» աշխատությունը), կարծում ենք, որ Խաչիկ գրիչն աշխատել է հենց Ս. Թադեի վանքում: Այսպիսով «Ծանձին խաղ», կոչվածը մի նոր գրչավայրի անուն չէ, այլ Արտագի նշանավոր այդ վանքի խցերից մեկի ծաղրական հորոքումը: Մործորի վանքում հաստատված Հովհաննես Երզնկացին, բնականաբար սերտ կապերի մեջ է եղել մի քանի կիլոմետր հեռավորության վրա գտնվող Ս. Թադեի վանքում աշխատող գրչի մշակների հետ, արդեն 1314 թ. ճանաչված լինելով նրանց կողմից որպես «տիեզերալոյս վարդապետ» և ստացած լինելով Մործորեցի մականունը:

28 Օգտագործել ենք Մատենադարանի № 7037 (էջ 12ա—75ա) ձեռագիրը: Քերականությունն սկսվում է այսպես. «Միշտ բաղձանք բանին բնաւորեալ է ի յոգիս բանականաց արարչական դրութեամբ, յորմէ դարթուցեալ յօժարիմք ի բնութիւն սորին, որոյ գուն և մուտ է քերականութեանս արհեստս...»:

29 Հիշատակագրությունն այս է. «...և զնուաստ աշխատողս Յոհ[աննէս] յաղաթս յիշեալ: Զստացող սորա զՎարդան և զԺողան իւր յիշեցէք ի Քրիստոս» (ձեռ. № 7037, էջ 11բ):

30 Ձեռ. № 7037, էջ 75ա:

31 Եսայի Նչեցի, Վերլուծութիւն քերականութեան, աշխատասիրությամբ Լ. Գ. Խաչերյանի, Երևան, 1966, էջ 28 և հետ:

Այս երկի գիտական արժանիքների գնահատությունը թողնելով լեզվաբաններին, նշենք այստեղ, որ Հովհաննես Ծործորեցին մեծ ճիգ է գործադրել Դիոնիսիոս Բրակացու և նրա հայ մեկնիչների ժամանակավրեպ դատողություններից ձերբազատվելու և ժամանակի գիտական պատկերացումներին համապատասխան և ուսումնական նպատակների համար դյուրմատչելի մի ձևնարկ ստեղծելու համար:

Աշխատությունն արժեքավոր է նաև հեղինակի փիլիսոփայական հայացքների ուսումնասիրության առումով: Մասնավորի (անհատի) և ընդհանուրի (տեսակի) հարաբերակցության հարցը քննության նյութ դարձնելով, մեր հեղինակը մերժում է Պլատոնի իդեալիստական տեսակետը, պաշտպան կանգնելով Արիստոտելին. «Յայսմ տեղոջ,—գրում է նա,—արուեստաւորս (իմա՝ Դիոնիսիոս Բրակացին) Արիստոտէլի կարծեացն հետեի, որ զանհատն պատուական և առաջին գոյացութիւն վարկանի, քան զտեսակն, թէպէտ Պլատոն զառասականն³² ասաց առաջին, իբր թէ՝ տեսակաց ոմանց տիրական զաղափարեալս ըստ ժամանակի: Բայց Արիստոտէլ զիսկն ասելով, թէ տեսանէն հաստատուն է քան զլուրն, որպէս զարեզակն ոչ ոք կարէ ժխտել, որ է անհատ, իսկ զաներեւելի ինչ՝ բազումք, վասն որոյ և սա նախադասեաց առասականին»³³:

«Համառօտ տեսութիւն քերականին» աշխատության մեջ ուշադրավ տրվալներ կան հաստատապես պնդելու, որ Հովհաննես Ծործորեցի վարդապետը քաջ լեզվագետ է եղել, տիրապետել է հունարեն, լատիներեն, թերեւ նաև պարսկերեն լեզուներին³⁴:

բ. Մեկնութիւն Մատթէի աւետարանին

Հեղինակային ընդարձակ խորագիրն՝ այսպես է. «Լրումն թերոյն համառօտ տեսութեամբ սրբոյ յաւետարանին որ ըստ Մատթէի, հաւարեալ նուստ վարդապետի Յոհաննու Եզնկայեցոյ, որ և ասի Ծործորեցի»:

Տեղին է նշել, որ Գ. Զահովյանի «Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում» (Երևան, 1954) աշխատության մեջ Ծործորեցու քերականության մասին խոսք չկա: Հեղինակը, հետևելով արդեն հաղթահարված ավանդույթին, մի անձնավորություն է համարել Հովհաննես Պլուզ և Հովհաննես Ծործորեցի գործիչներին, ըստ այդմ էլ բավարարվել է միայն Պլուզի քերականական հայացքների վերլուծությամբ:

³² Քիչ հետո տալիս է «առասական» տերմինի բացատրությունը. «Եւ առասական է որ զհասարակաց էութիւն ցուցանէ, որզոն՝ մարդ, ձի»:

³³ Զեռ. № 7037, էջ 45ա:

³⁴ Պարսկերենի իմացության մասին տվյալը Քրոշակի չէ. անդրադառնալով հարաբար բառերին, Ծործորեցին ասում է, որ այդպիսիք շատ կան «ի պարսից և ի մերս լեզու, որպէս նիւ-եօսրով, Զուան-եօսրով, Վարազ-Տրդատ, և մերս Լեոն, Քաշ-Լեոն, Քաշ-Վարդան և այլ սոյնայիսիք» (ձեռ. № 7037, էջ 42ա): Հունարեն և լատիներեն լեզուների իմացության մասին աներկրայելի փաստեր ենք գտնում աշխատության բառերի սեռերին նվիրված բաժնում. «Սէրք,—կարդում ենք այնտեղ,—ոչ ի գոյութենէ վերակոչին, զի ոչ զքնութիւնս յայտենն, այլ զձայնի նշանակս, որք ի լուսին և ի հոռմայեցին լիով է և յատուկ անուն արական և իգական և չէզոքին, զի որք յանուանց սկզբունս ունին զով, որպէս ասելն ով այիովս ապօստօրս (ὁ ἀπὸ τοῦ ὁσολος), որ լսի սուրբ առաքեալք՝ արական է, իսկ ասելն իա՝ իա օղօկօս (հավանաբար՝ ἡ δοχός—գերան)՝ իգական է, իսկ սօ քսօլա (հավանաբար τὸ ξυλο(ν)—փայտ) չէզոք է, զի անուն որ ի սկիզբն սօ ունի՝ չէզոք է. այսպէս և ի վախճանս անուանց յորում պատահին՝ զնոյն վախճանս ունին: Իսկ հոռմայեցոյն ևս յատուկ. քանզի անուն պատահական, որ ունիցի յանգի իւրում զօս՝ արական է, և որ ունի զայ՝ իգական է, իսկ զօմ՝ չէզոք է. այսպէս ալպուս, ալպայ, ալպումս (ձեռ. № 7037, էջ 38բ):

Ներսես Շնորհալին, մինչև կաթողիկոսանալը, սկսել էր մեկնել Մատթեոսի ավետարանը, հասնելով մինչև V գլխի 17-րդ համարը. կարևոր այդ աշխատանքն ինչ-ինչ պատճառներով անկատար էր մնացել. որոշ փորձեր կատարվել էին շարունակությունը լրացնելու, բայց անհաջող: Նկատի ունենալով այդ և ընդառաջելով Ծործորի վանքում իր շուրջ համախմբված աշակերտներին, Հովհաննես Երզնկացին 1316 թ. լրացնում է այդ թերին, իր կատարածի մասին գրելով ընդարձակ հիշատակարան, որի կարևոր մասը մեջ ենք բերում սուրբ. «...Ես՝ նուսատս ի Քրիստոս և յետինն յորդիս Սիրնի՝ ապիկար ոգիս Յոհաննէս Երզնկացի սպասաւոր բանի, բնակեալ ի վիճակ սուրբ առաքելոյն Թադէոսի, ի Վանս Ծործորու կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս, այլ և ժողովեալ առ մեզ բանասէր անձինք ի յուսումն կրթութեան աստուածաշունչ տառից լսողութեան, յորոց յորդորմանէ և ի փափաքելի խնդրոյ եղեալ ի մտի առնել հաւաքումն մեկնութեան սրբոյն ավետարանին Մատթէի, ընդ զթերի նորին ըստ կարողութեան իմում»³⁵:


Ղ. Ալիշանի հեղինակավոր կարծիքով՝ Շնորհալու թերին լրացնողը մեծատաղանդ բանաստեղծի «անուշ գրչէն հեռու չի մնար», այսինքն՝ կարողացել է ստեղծել համահավասար մակարդակի աշխատություն³⁶, իսկ Ներսես Տեր-Ներսեսյանի վկայությամբ՝ նա «հմուտ է աստվածաբանական և բարոյական հարցերու»³⁷. Ի լրումն կարող ենք ավելացնել, որ Մատթեոսի մեկնության Ծործորեցու բաժինը, կյանքի տարբեր բնագավառներից քաղված հետաքրքրական օրինակներ պարունակելով, օգտակար նյութ է ընձեռում պատմաբաններին՝ ուսումնասիրելու ժամանակի սոցիալ-տնտեսական այլազան երևույթները: Մի առիթով նա հայտնում է, որ «գոն յաշխարհի ըստ քաղաքի-քաղաքի սովորութիւն՝ տալ զարծաթն ի սեղանաւորս շահի», մի այլ առիթով արձանագրում, որ շատերը տրտնջում են և, նույնիսկ, մեղադրում արարչին՝ տեսնելով կյանքում սոցիալական անարդարություններ, տեղեկություն է հաղորդում վարձկան հնձիրներին տրվող աշխատավարձի և կերակուրի մասին, լլկիչ ու հալածիչ համարում օտարերկրյա բռնակալներին, որոնք «կեղեքեն զկեանս մեր զառնութեամբ և ապա ի հայրենեաց մերոց արտալածեալ վարեն» և այլն: Այստեղ կարելի է գտնել նաև անսպասելի բնագավառների մասին ուշադրավ տվյալներ, որոնցից է, օրինակ, մրգերի բարձրորակ տեսակներ ստանալու եղանակի նկարագրությունը, անշուշտ քաղված հայ այգեգործների կենցաղից. «Թողում ասել և զայն,—գրում է նա,—թէ և զանբան բնութիւն տնկոց կարեն մարդիկ ի հաւանութիւն ածել, որպէս զթթութիւն նռան քաղցրացուցանեն և կամ զզառնութիւն նշի անուշացուցանեն ի ձեռն արուեստին, զի զբեկնի եպերկես փայտ վարսեալ ուռամբ յարմատս ասացեալ տնկոցդ՝ փոփոխեն զբնութիւն»³⁸:

35 Ամբողջը տե՛ս Ղ. Ալիշան, Հայագատում, Բ, էջ 512—513, 2. Տաշյան, Մայր ցուցակ, էջ 338, «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 124—125 և այլն:

36 Ղ. Ալիշան, Հայագատում, Ա, էջ 120:

37 «Բաղմավէպ», 1960, էջ 115:

38 Մեկնութիւն սուրբ ավետարանին, որ ըստ Մատթէոսի, արարեալ ի սրբոյն Ներսիսէ Շնորհալոյ մինչև ի համարն 17 հինգերորդ գլխոյն, և անտի աւարտեալ յերանելոյն Յոհաննու Երզնկացոյ, որ և կոչի Ծործորեցի, Կ. Պոլիս, 1825, էջ 536, 422 390, 129 և 178 (էջերը մատնացույց են արված ըստ վերահիշյալ օրինակների հերթականության):



Նկ. 4 Իսրայելի առաքյալի վանքի կառուցողական արձանագրությունը

Մինչ «Մեկնութիւն Մատթէի աւետարանին» աշխատության մասին մեր ասելիքն ավարտելը անհրաժեշտ է անդրադառնալ Ներսէս Տեր-Ներսէսյանի «Պատարագ վասն ննջեցելոց» հոգվածին, որի 12-րդ բաժինն ամբողջապես նվիրված է Հովհաննէս Մործորեցու դավանաբանական հայացքների վերլուծությանը: Հարգելի բանասերը իրավամբ նշում է, որ խնդրո առարկա աշխատության Կ. Պոլսի տպագրության մեջ կատարվել են աղճատումներ՝ կոծկելու համար հեղինակի կաթոլիկ եկեղեցու դավանանքին հարած լինելը, բայց ինքն էլ շեղվում է ճշմարտությունից, երբ Մործորեցուն ներկայացնում է որպես հայոց եկեղեցու դավանաբանական սկզբունքների ջատագով³⁹: Նա հաշվի չի առնում, որ Արտազ տեղափոխվելուց և Զաքարիա եպիսկոպոսի կուսակիցը դառնալուց հետո՝ այսինքն դոմինիկյան քարոզիչների Հայաստան ներթափանցելուց շուրջ մեկ տասնամյակ առաջ, Հովհաննէս վարդապետն արդեն ծառայագրվել էր ունիթորական շարժմանը, ձայնափողը դառնալով կաթոլիկ եկեղեցու:

գ. Մեկնութիւն մարգարէութեանն Դանիէլի

Այս մեկնության մատենադարանյան բնագիրը (ձեռ. № 1187, էջ 305ա—379բ)՝ սկզբից և միջին մասերից թերի է⁴⁰, բայց վերջում ունի բնդարձակ հիշատակարան. գրության հանգամանքների մասին տվյալներ կան նաև աշխատության միջին մասերում. նեոի գալստյան և աշխարհի կործանման կանխագուշակումների կապակցությամբ արված դատողություններից հետո: Ըստ այդ տվյալների շարադրված է 1316 թվականին. Մործորի վանքում, վարդան վարդապետի խնդրանք⁴¹, նախորդ մեկնիչների՝ Հիպոդիտի, Եփրեմի և վարդան Արեւելցու աշխատությունների քննական օգտագործման ճանապարհով (ինչպես ինքն է ասում՝ «յղկեալ քստ շափու տարազու մտաց մերոց»):

Միջնադարյան բնթերցողի համար այս մեկնությունը զգալի հետաքրքրություն էր ներկայացնում, մանավանդ իր այն մասերով, որոնց մեջ տեղեկություններ կան գրանցված Հին Արեւելքի պատմության և առասպելաբանության մասին՝ ի լրումն Հին կտակարանի մեջ առկա պատմությունների:

Աքեմենյան Իրանի մասին, օրինակ, ի թիվս այլ տվյալների ասված է նաև հետևյալը. «Յետ Կիրոսի յարեալ Դարեհ, ապա Արտաշէս Ուշեղ, ապա Արտաշէս Քսերքսէս, և չորրորդն մեծասցի (՝) յետինն Դարեհ, որ յարեալ ի վերայ Թագաւորութեանցն Յունաց, զոր սպան Աղեքսանդր՝ որդի Փիլիպոսի, և երարձ զթագաւորութիւնն Պարսից, որ տեւաց ամս Մլ. (230)⁴²: Բայց զիտել պարտ է, զի նշանաւորսն ասաց Դ. Թագաւոր, ապա թէ ոչ՝ չորեքտասան թագաւոր նստան Կիրոսի և վերջին Դարեհի աթոռն Պարսից, որ զօրածողով եղև ի վերայ Աղեքսանդրի»⁴³:

39 «Բազմավէպ», 1960, էջ 114—124.

40 Այդպես թերի է նաև Նրուսաղեմյան օրինակը՝ ձեռ. № 207, էջ 363ա—446ա (տե՛ս Մայրցուցակ, Ա, էջ 584—585):

41 Նորայր եպ. Պողարյանը այս վարդան վարդապետին, որ, ինչպես ասացինք, պատվիրատուն է եղել նաև «Համառօտ տեսութիւն քերականի» աշխատության, հնարավոր է համարում նույնացնել վարդան Բարձրբերդցու հետ (տե՛ս «Հայ գրողներ», էջ 35): Հազիվ թէ ճիշտ լինի այս ենթադրությունը:

42 Մի այլ տեղ, այս նույն տվյալը հաղորդելուց հետո, ասում է, որ «այլք Մեհ (243) ամ կալեալ ասեն Պարսից թագաւորութիւնն»:

43 Ձեռ. № 1187, էջ 364—365ա:

Ծործորեցին մի երկու տեղ փորձ է կատարում Հին Արևելքի պատմության առանձին գրվագների մասին Աստվածաշնչի և թարգմանական պատմական երկերի մեջ առկա տվյալները շաղկապելու Հայոց Հին պատմության իրեն հայտնի տվյալների հետ: Բելի մասին խոսելիս, օրինակ, նա անհրաժեշտ է համարում հիշեցնել, որ Հայոց նախահայր Հայկն է նետահարել ու սպանել նրան և այլն:

Ասացինք, որ այս մեկնության գրության հանգամանքների մասին կարևոր տեղեկություններ կան հեղինակային հիշատակարանի և շարադրանքի մեջ: Նախ ծանոթանանք գլխավոր հիշատակարանին.

«Ընդ որում և մեզ լիցի մասն անարժանի անձինս սակաւ ինչ վաստակողի ի բանս սրբոյս՝ նուաստ Յոհանիսի Եղընկեցոյ, որ և Ծործորեցի կոչեցելոյ, վայելել ի փառս շնորհեաց նորա, հանդերձ կրկին ծնողօք, ի գթութեանն հօր ամենակալին և յաւեթախաղաց պարգև որդւոյն միածնի Յիսուսի Քրիստոսի տեառն մերոյ և յուխս սիրոյ մարգասէր հոգւոյն աստուծոյ, որում վայել է փառք անեղրական և պատիւ վայելչական և գոհութիւն անվախճան այժմ և միշտ:

Եղև աշխատութիւնս մեր ի նպաստաւորութենէ հոգւոյն սրբոյ և սրբոց հարցն մերոց վարդապետացն առաջնորդաց՝ Հիպոդիտեայ, Եփրեմի և Վարդան վարդապետի և այլոց, ի թիվս Հայոց ԶԿԵ⁴⁴ (1316) և ի մարդեղութենէ ամաց Յիսուսի Քրիստոսի ՌՅ. և ԺԶ ամին, գրեալ և յղկեալ ըստ շափու տարազու մտաց մերոց, և կշիռ առ բանին եղեալ զմեկնութիւնն ի դաւառս հոշակաւոր Արտազ կոչեցեալ, ի վիճակ սուրբ առաքելոյն Թադէոսի, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս Ծործորու կոչեցեալ, ձեռամբ նուաստ սպասաւորի Յոհանիսի Եղընկեցոյ, ի խնդրոյ եղբօր մերոյ բանի աշակերտելոյ Վարդան կոչեցեալ վարդապետի, և յիշատակ ինձ՝ անարժանիս հոգւոյ և մարմնոյ, այլ և ձեզ մասն եղիցի ընդ յիշման յիշեցելոյս անմոռաց յիշումն արարչին, որում փառք յաւիտեանս, ամէն»⁴⁵:

Հիշատակարանի բնույթ ունեն նաև նեոփ գալստյան ժամանակի կապակցությամբ արված դատողություններին հաջորդող ստորև մեջբերվող տողերը. «...Եւ դարձեալ, ոչ զնեոինն ժամանակ թուէ աստ, քանզի դայն ի վեր անդ ասաց, այլ թուէ յառաջին գալստենէն տեառն այսչափ ամ, յորում կարապետք նեոինն ըստ վարդապետութեանն և առաքելոցն հալածեն և շարշարեն, վշտացուցանելով զեկեղեցի, կեղեքելով զկեանս քրիստոնէից հոգեպէս և մարմնապէս, որպէս տեսանեմք այսօր: Իսկ ի լրմանց ամաց նախ քան զգալ նեոինն անդորրանայ եկեղեցի և խաղաղանայ առ ժամանակ մի, և բարձցի դայթակղութիւնք, և այլասեռիցն կրօնք և հերձուածողաց խափանեացի, և աւետարանն պայծառանայ ընդ ամենայն տիեզերս, և եկեղեցի բարձրանայ, և ապա յետոյ երևի նեոն, և լիցի լրումն աշխարհի:

Արդ՝ ի գրելս մեր զմեկնութիւն թուոյս էր թիւն տեառն ըստ մեզ մարդեղութեանն ՌՅ. և ԺԶ. ամ. և յորժամ այս հասանէ յերեսուն և հինկն, զի է պակաս ԺԹ. ամ, կատարին ասացեալ երանութիւնքս ի մարգարէէս ի վերայ համբերողաց: Եւ դու եթէ ժամանեացես ի թիւն յայն և տեսցես զբարութիւնն

⁴⁴ Ձեռագրում, ընդօրինակողի վրիպումով, գրված է ԶԿԷ (1318). ուղղում ենք փրկչական թվականի, մյուս հիշատակարանում առկա տվյալի, ինչպես նաև Գ. Զարպհանալյանի (Պատմութիւն հայ. դպր., էջ 765) հիման վրա:

⁴⁵ Ձեռ. № 1187, էջ 379բ:

եկեղեցւոյ՝ յիշեցես և զնուստս Յոհան Եզնկեցի, որ և Մործորեցի, զի ես աշտպէս զթիւս զայս մտածեցի, և եթէ ոչ լիցի այս, բնկալ զառաջին ասացեալն ի սրբոցն, որ վասն աւուրց նեոինն, և զմեզ ազատ ի պարստանաց արասցես»⁴⁶:

դ. Քարոզներ

Միջնադարյան քարձրագույն դպրոցների ծրագրերի մեջ հատուկ նշանակություն էր տրվում այն գիտելիքներին, որոնք անհրաժեշտ էին նկատվում կրոնա-քարոյախոսական ու խրատական բովանդակությամբ քարոզներ հյուսելու համար: Վարդապետացու ուսանողը, մինչև գավազան ստանալն ու ինքնուրույն գործունեության ասպարեզ մտնելը, հրապարակավ պետք է ցույց տար իր ձեռք բերած գիտելիքներն ու շնորհքը, հավուր պատշաճի քարոզ կարդալով՝ աստվածաշնչից քաղված որևէ բնաբանի շուրջ կամ եկեղեցական որևէ տոնի կապակցությամբ:

Ըստ ձևի և բովանդակության կուռ և գեղեցիկ քարոզներ շարադրելու հմտությունը անհրաժեշտ նախապայման էր համարվում Գլաձորյան համալսարանի շրջանավարտների համար: Դրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ պահպանվել են այդ ուսումնական հաստատության կամարների տակ ստեղծված՝ ավարտուն քարոզներ կամ քարոզների նախաբան ու վերջաբաններ պարունակող մի քանի ձեռագիր ժողովածուներ: Դրանց մանրակրկիտ ուսումնասիրությամբ հնարավոր է լինելու ավելի հանգամանորեն բացահայտել միջնադարյան Հայաստանի ուսումնական կենտրոնների կազմակերպչական սկզբունքների, ուսանողներին հրամցվող գիտելիքների, ուսուցման եղանակների հետ առնչվող խնդիրները⁴⁷:

Հովհաննես Երզնկացին, լինելով Գլաձորյան համալսարանի շրջանավարտ ու դասախոս, չէր կարող այս կամ այն չափով չառնչվել քարոզչական աշխատանքին: Եվ իրոք, աշխարհասփյուռ հայերեն ձեռագրերի էջերում պահպանվել են և՛ առանձին՝ հատուկեմա քարոզներ, և՛ մի շարք քարոզներից քաղկացած փնջեր՝ մեր հեղինակի անունով: Ձեռքի տակ շունենալով քարոզչական այդ նյութերի ամբողջական բնագրերը, հնարավորություն չունենալուց այսօր հանգամանալից խոսք ասելու նրանց բոլորի բովանդակության ու պատմա-գիտական նշանակության մասին: Բավարար տվյալներ չկան նույնիսկ որոշելու քարոզներից շատերի շարադրման ժամանակը, պարզելու, թե որոնք են դրանցից հնագույնները, երբ և ում կողմից են շարադրապել կողք-կողքի՝ փոքր ու մեծ խմբերի գոյացման հիմք հանդիսանալով և այլն: Ըստ այդմ Հովհաննես Մործորեցու գրավոր ժառանգության այս բնագավառի համակողմանի ուսումնասիրությունը վաղաժամ համարելով, փորձելու ենք սոսկ խմբավորել առկա նյութը:

Հովհաննես վարդապետի Մործորի վանքում հաստատվելու ժամանակի որոշելիս անդրադարձել ենք արդեն Մատենադարանի № 627 ձեռագրին, որի

⁴⁶ Նույն տեղում, էջ 373ա—373բ:

⁴⁷ Այս առումով որոշ բան արդեն արված է (տե՛ս մեր «Գլաձորյան համալսարանը և նրա սաների ավարտական առենախոսությունները» հոդվածը, տպագրված Երևանի Պետ. համալսարանի գիտական աշխատությունների XXIII հատորում, 1946, էջ 423—450), սակայն ձեռագրական նորահայտ նյութերը հնարավորություն են ընձեռում հաջողությամբ շարունակելու և խորացնելու ձեռք բերված արդյունքները:



Նկ. 5. Մործորի վանքի ավերակները

մեջ ընդօրինակված է Մործորեցու երեք քարոզներից բաղկացած մի փունջ. դրանցից առաջինը վերնագրված է այսպես. «Յոհաննիսի եզնկաեցո, որ և Մործորեցի տիեզերալոյս վարդապետի ասացեալ» (սկսվում է «Յարարչական բանէ անեղական յուսոյն հաստատեալ գոյացան բոլոր և մասնաւոր արարածք...» բառերով). քարոզն ամբողջական չէ. ձեռագրերի մեջ հաճախակի հանդիպող քարոզից նախերգանքների կամ Գլաձորյան համալսարանի սաների ավարտաճառերի բնծայական մասի տպավորություն է թողնում:

Երկրորդ քարոզը՝ «Յոհաննիսի Մործորեցո հոգացեալ զբանֆս» խորագրով (սկսում է «Վստահացեալ յուսո քաջութեամբ...» բառերով)՝ պահպանվել է անվթար: Հակառակ այն բանի, որ խորագրի մեջ հեղինակն արդեն Մործորեցի է կոչված, բովանդակությունից պարզվում է, որ շարադրված է ուսանողության տարիներին: Վերջաբանում կան տողեր՝ ուղղված այնպիսի ունկնդիրների, որոնք գիտությամբ կատարյալ են, մտքով՝ լուսավառ. նրանցից հեղինակը ներողամտություն է հայցում⁴⁸: Ըստ այդմ՝ այս քարոզը շարադրված

⁴⁸ «Իսկ մեր,—գրում է նա,— ըստ մերում տկար զօրութեան սուղ ինչ պատճառ տվաք բանիս, վստահանալով առաջի կատարելոցդ, և զկատարեալն տեսութիւն՝ հոգին շնորհաց՝ բաց է առաջի լուսավառ մտացո ձերոց: Եւ մեր ի լրման բանիս զօրհնեալն ամենայնի բանական սեռից անլուելի ձայնիւ բարեբանեացուք, և անծախելի շնորհաց նորին, հանդերձ երկրպագութեամբ, զոհութիւն մատուցուք, խնդրելով՝ խաղաղութիւն պարգևեա ամենայն աշխարհի» (ձեռ. № 627, էջ 37ա):

պետք է լինի Գլաձորյան համալսարանում, որպես ավարտաճառ: Զգալի հետաքրքրություն է ներկայացնում գիտական բովանդակություն ունեցող հատվածներով. օգտակար տվյալներ է պարունակում միջնադարյան բարձրագույն ուսումնական հաստատություններում դասավանդվող առարկաների բնույթն ու տարողությունը որոշելու համար: Մասնավորապես ուշագրավ է քարոզիայն հատվածը, որ նվիրված է մարդկային հոգու բնական ու ստացական կարողությունների բացահայտմանը. «Արդ,—ասված է այնտեղ,— բնական զօրութիւնք յերկուս բաժանին՝ ի գիտնականս և ի կենդանականս. և են այսոքիկ՝ տրամախոհութիւնք, միտք, կարծիք, երևակաութիւնս, զգաութիւն, կամք, ընտրողութիւն, յօժարութիւն, բարկութիւն, ցանկութիւն...: Իսկ ստացական զօրութիւնք հոգոյն այն իսկ է՝ յորժամ զխորհուրդս աճեցուցանելով ի բնին ելցէ ուսման և կամ առաքինութեան, և ստացի իմաստասիրութիւն, որ է գիտութիւն էականցս, և զտրամաբանական հանճարս: Եւ սորօք են մասունք ուսմանց՝ զքերականութիւն ասեմ, զճարտասանութիւն, զաստեղաբաշխութիւն, զերաժշտականութիւն, զերկրաչափութիւն, զթվականութիւն և զայլսն, որ տեսակք են տեսականին: Նմանապէս և զգործնականին մասունք՝ զօրէնսդրութիւն և զգատողութիւնն, և կամ ըստ այլոց՝ զտնտեսութիւն, զբարոյականութիւնն և զքաղաքականութիւնն, և կամ զէս բարձրագոյնն՝ զանախտութիւն վարուց, զարդարութիւն, զողջախոհութիւն, զպարզմտութիւն, զհեղութիւն, զչափաւորութիւն» և այլն⁴⁹:

Քարոզի մեջ կան նաև հեթանոսական հավատալիքների և տիեզերագիտական պատկերացումների (մասնավորապես՝ Արամազդի մանկունք կոչվող երկնային մարմինների) մասին հետաքրքրական տեղեկություններ:

Երրորդ քարոզը, որ N 627 ձևագրում կրում է «Նորին Յովհանէս վարդապետի ասացեալ ի փոխումն սուր կուսին և ի ծնունդն» խորագիրը, միջնադարյան ձևագրերում հանդիպում է նաև առանձին ընդօրինակություններով⁵⁰: Այն տեղ է զբաղել նաև Մործորեցու քարոզների ժողովածուի մեջ, որին անդրադառնալու ենք քիչ հետո:

Սրանցից բացի տեղեկություն ունենք մեր հեղինակի «միայնակ» ընդօրինակված երկու այլ քարոզների մասին ևս: Մեկի միայն խորագիրն է հայտնի. «Ս. Յօհաննոյ երգն [կացոյ], զոր մականուն Մօրծորեցի յորջորջի. մեկնութիւն անտառանի Մարկոսի ի Ե. կիրակէին աղուհացիցն, վասն մահու և կատարածի աշխարհի, ի բանն որ ասէ. Արքուն կացէք, զի ոչ գիտէք յորում ժամու գող գայցէ» (սկսվում է «Նախախնամութիւնն աստուծոյ և բարերարութիւնն յամենայն ժամ յայտնի...» բառերով)⁵¹: Մյուսի մասին տեղեկություն ենք քաղում Ղ. Ալիշանի «Հուշիկը հայրենեաց Հայոց» աշխատությունից. վերնագրված է այսպես. «Յովհաննէս վարդապետի Մօրծորեցոյն արարեալ ի բանէն Եսայեայ, որ ասէ. Հոգի տեսոն ի վերայ իմ». վերջաբանի մեջ, գոհա-

49 Ձեռ. N 627, էջ 35ա:

50 Դրանցից են, օրինակ, հետևյալ ձևագրերը. N 734 (էջ 67ա—89բ), N 2178 (էջ 361ա—370բ) և N 5933 (էջ 65ա—82բ): Սրանցում հեղինակի անունը չի հիշատակված: Վերջին (N 5933) ձևագրի մեջ քարոզը վերնագրված է այսպես. «Յաղագս արարչադործութեանն աստուծոյ և լուսաւորացոյ, որ ի շորերշաբթի արարան, և փոխման տիրամօրն, և վասն մերո հոյոյս բաժանման»:

51 Յուցակ հայերէն ձևագրաց Զմմառի վանքի մատենադարանին, հատ. Բ, «Անտոնյան հավաքածո», Վիեննա, 1971, էջ 116:

բանական խոսքեր ուղեղով ասածուն, հեղինակն անվանի մի գործչի և իր անձի մասին ուշադրավ ակնարկներ է անում. «Եւ ի մտաւորն ծնունդ և ի բանին ծնողութիւն և յերկունս մտաւոր աշխատութեանցն արժանացայ տկար և ցաւագին մարմնով. և ի մէջ ծփան ալեաց ծովածուի աշխարհիս և տրտմարեր կրից կենցաղոյս, առաջնորդեաց ինձ հոգին և էառ առ ոտս բարիոր նաւուղելի և իմաստուն կատարողապետի»⁵²: Ըստ Ալիշանի՝ այս խոսքերը վերաբերում են Գլաձորի բարունապետ Նսայի Նշեցուն, ուստի քարոզը շարադրված է Հովհաննեսի ուսանող եղած տարիներին: Կարծում ենք, սակայն, որ մեջ բերված տողերը վերաբերվում են Արտազի վեհաշուք եպիսկոպոսին. կատարողապետ բառը, որ քահանայապետ-եպիսկոպոս է նշանակում, սրատշաճ է գալիս Զարարիա Մործորեցուն, որն նախուղղի⁵³ դեր ստանձնելով՝ փորձում էր Հայոց եկեղեցին առաջնորդել հոգեմեկան եկեղեցու հետ համաձուլելու ազգադավ Հանապարհով: Իր մարմնի «տկար և ցաւագին» լինելու մասին հեղինակի ակնարկը նույնպես խոսում է հօգուտ այն ենթադրութեան, որ այս քարոզը հորինված է Հովհաննեսի կողմից Մործորի վանքում հաստատվելուց տարիներ հետո:

Տարբեր ժամանակներում, այլևայլ առիթներով Հովհաննես Մործորեցու շարադրած քարոզներից առնվազն 15-ը, համախմբվել են մի ժողովածուի մեջ նրա երախտավոր աշակերտներից մեկի կողմից, որը մեծարել է իր ուսուցչին «աղբիւր իմաստից», «այր կորովամիտ» հորջորջումներով և օժտել ժողովածուն «Երանաշնորհ և բազմիմաստ բարունապետի Յովհաննու Մործորեցու կորովաբիր մտացն տեսութիւն» խորագրով:

Քարոզների այդ ժողովածուից հայտնի է երկու ընդօրինակություն. մեկը Երուսաղեմի մատենադարանի № 1003 ձեռագիրը, մյուսը՝ Վիեննայի № 646-ը⁵⁴:

Ն. Պողարյանն ու Գ. Զարպհանալյանը Մործորեցուն են վերագրում իրենց ձեռքի տակ եղած ձեռագրերի մեջ առկա քարոզներից 20-ը, ըստ Հ. Ոսկյանի նկարագրության՝ մեր հեղինակին են պատկանում նրա անվան տակ շարահարված քարոզներից 15-ը: Այս խնդիրը կարոտ է հատուկ ուսումնասիրության: Ըստ երևույթին ճշգրիտ է դուրս գալու վերջին կարծիքը, քանի որ Զարպհանալյանն ինքը, թվարկելով իր ձեռքի տակ եղած ձեռագրի մեջ եղող 20 քարոզները, ԺԶ քարոզի կապակցությամբ նշում է, որ սրա սկզբնավորությունը նույնն է «ընդ չորեքտասաներորդ ճառին», իսկ ԺԷ քարոզի առթիվ

52 Ղ. Ալիշան, Հուշիկը հայրենեաց Հայոց, Ա. սպազորություն, Վենետիկ, 1869, էջ 479, Բ. տպագր. 1921, էջ 420—421:

53 Այսպես («Նաւուղիդ» ձեռվ) ենք սրբագրում քարոզից մեջ բերված հատվածի «Նաւուղիդ» աղճատված բառը, նրան տալով «ղեկն իր ձեռն առած նավապետ» իմաստը:

54 Այդ ձեռագրերը նկարագրված են Նորայր եպս. Պողարյանի (Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հատոր չորրորդ, Երուսաղեմ, 1969, էջ 4—6) և Հ. Համազասպ Ոսկյանի («Յուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա», հատ. Բ, Վիեննա, 1963, էջ 130) կողմից: Քարոզների այդ ժողովածուն ծանոթ է եղել նաև Գ. Զարպհանալյանին (տե՛ս «Պատմութիւն հայ դպրութեան», Վենետիկ, 1897, էջ 762—763). չգիտենք, սակայն, նա ձեռքի տակ ունեցել է վերոհիշյալ ձեռագրերից որեւէ մեկի նկարագրությունը, թե՛ այդպիսի մի ձեռագիր էլ պահվում է Վենետիկի Մխիթարյանների մատենադարանում:

1966 թվականին Երուսաղեմում ուսումնասիրել ենք № 1003 ձեռագիրը, որը բաղվածքներ կատարել առանձին քարոզներից, բայց նրանց հեղինակային պատկանելության հարցն այն ժամանակ մեր տեսադաշտից դուրս է եղել:

ուսում, որ «յոմանց ի գրչագրաց՝ Տիրատուր վարդապետի կը տրուի այս ճառ»:

Քարոզգրքի առաջին միավորի խորագիրն է. «Բանն որ առ Յովք. Զինչ երկիր իցէ յորում լոյսն ազանիցի»: Ասել ենք արդեն, որ այս քարոզը շրջանառության մեջ է եղել նաև որպես առանձին միավոր, ինչպես և Մործորեցուն պատկանող երկու այլ քարոզների հետ շղթայված շարքով: Հինգերորդ քարոզի վերջում պահպանվել է հեղինակի բնծայական-վերջաբանը, հասցեագրված «Երջանիկ լուսաւորիչ տանս Արեւելեան», «ջահ անշիջանելի» կոչված նշանավոր մի գործչի, որի ջանքերով նրա գերդաստանի պայազատները մեծ դիրքի են հասել և այլն: Մործորեցին մաղթում է, որ նա և նրա մերձավորները՝ «անսասան կենօք, հոգեկան և մարմնական ճոխութեամբ յղփացեալ՝ ժառանգեսցեն զսեփական հայրենիքս մինչ ի խորին ծերութիւն»: Այս խոսքն, անտարակույս, ուղղված է Զաքարիա եպիսկոպոսին ու Արտագի ավատատեր հայ գերդաստանի իշխանաշուք անդամներին⁵⁵:

Այս հիշատակարանի առկայությունն իսկ ընդհանուր շարքի մեջ մտած ու հինգերորդ տեղը գրաված քարոզի վերջում ամրապնդում է մեր եզրակացությունը՝ Մործորեցու քարոզների ժողովածուի առանձին միավորների տարբեր առիթով ու տարբեր ժամանակներում գրված լինելու և հետագայում, ուրիշ մեկի կողմից, մի կազմի տակ համախմբվելու մասին: Այս կարծիքն ավելի է ամրապնդվում ԺԲ համարը կրող քարոզի ուսումնասիրությամբ (Վիեննայի ձեռագրում սրան համապատասխանում է ԺԳ քարոզը): Սրա վերջում եղող հիշատակարանից պարզվում է, որ նրա հեղինակը Մործորեցու աշակերտներից մեկն է, ամենայն հավանականությամբ հենց այն աշակերտը,

⁵⁵ Մտորն մեջ ենք բերում այդ վերջաբան-հիշատակարանը առանց կրճատումների, հաշվի առնելով նրա մեջ գրանցված ավյալների ու ակնարկներն օգտակարությունը Արտագի հայ ավատատերերի, մասնավորապես Զաքարիա Մործորեցու գործունեության ուսումնասիրման համար. «...նոցին և մեզ մասնաւորեացէ թագաւորն փառաց եկեալ յաշխարհ՝ արքայութեանն իւրոյ հաղորդս լինել, և զընտիր վիճակ ազգիս Հայկայ գրահանայութիւն և զթագաւորութիւն պահեսցէ, և թէ ինչ ի շարեն, որուն ընդ բարիքս սերմանցն իցէ մշակեալ յանգաստանս եկեղեցոյ՝ արմատարի խլացել: Եւ լոյսն ճշմարիտ Քրիստոս, որ լուսաւորէ զամենայն մարդ, որ զալոց է յաշխարհ, լուսաւորեացէ զաշս սրտից մերոց և ընդ ծագման լուսոյ առաւօտուս ծագեացէ Քրիստոս զգով անճառելի խնամոց յարարածս իւր, և ընդ զգալի լուսոյս տարածման արեղակն արդարութեան Քրիստոս ծաւալեացէ զլոյս հոգեւոր գիտութեանն իւրոյ յամենայն ազգս քրիստոնէից, և լուսաւորեալս բանին ճշմարտութեան զերջանիկ լուսաւորիչ տանս արեւելեան, լոյսն մշտնջենաւոր պահեսցէ զսա ջահ անշիջանելի ի սուրբ եկեղեցի, և զլապտեր հոգւոյ սորա պայծառացուցէ օրրոտօրէ հայկ ի խորս անճառ գիտութեան նորա, և ամենայն ներհակք սորա՝ երեւելիք և աներեւելիք՝ տապալեացին ի ներքոյ ստից սորա, և զիցէ զսա իրրե զվէմ անդամանդեայ պարսպին հաւատոյ, զի ամենայն որ որ հարցի ընդ սա՝ փշրեացի, և յոյր վերայ անկցի՝ հոսեացէ զնա: Եւ որք սովաւ կարգեալ են իշխանութիւնք և ի զարմից սորին շառափղեալք բարեպաշտ պարսնայք՝ զօրութիւն բարձրելոյն հովանի լիցի նոցա յիւս և ի մուսս, և եղիցին կարօղ յամենայն գործս քաջութեան, և անսասան կենօք, հոգեկան և մարմնական ճոխութեամբ յղփացեալք ժառանգեսցեն զսեփական հայրենիքս մինչ ի խորին ծերութիւն, տեսանելով զորդիս և զորդիս որդւոց մինչ յերիս և շորս ազգս, որպէս զի մի պակասեսցէ ճիւղ օրհնութեան և զաւակ բարեպաշտութեան ի տանէն յայսմանէ՝ մինչ ի զալուստ երկնաւոր թագաւորին Քրիստոսի» (Նրուսաղիմ, ձեռ. N° 1003, էջ 68):

Քարոզի միջին մասերում ևս կան Զաքարիային հասցեագրված մեծարանքի խոսքեր. «Գրանցից է, օրինակ, հետեւյալը. «նոյնպէս և դու ըստ անարգամեծար շնաշխարհիկ րոյին ճոխութեանդ, ընդունելով զմերս ի գոհութիւն անկարօտին փառաց վերացուցես: Եւ արդ՝ օն առեալ զազօթս քո՝ մխնացուք ի բնութիւն» (նույն ձեռագիր, էջ 57):

որին հանձնարարված է եղել տարրեր ձեռագրերի մեջ ընդօրինակված քարոզչական նյութերի համախմբումով և խմբագրությամբ ստեղծել իր ուսուցչի քարոզների մի փունջ: Անունն անհայտ խմբագիր-աշակերտը սրանց մեջ ագուցել է նաև իր հեղինակած մի քարոզը, որի վերջում փառքի գովք է հյուսել իր ուսուցչի մասին, հայտնելով, որ նա՝ քաբունապետ Հովհաննեսը «յայսմ իրակերտութեան գործոյ եղև նպաստ և առիթ՝ յորդորական բանիւք քաջալերս տալով»⁵⁶:

Այս նախաբանից հետո մեջ ենք բերում այստեղ Հովհաննես Մործորեցու քարոզգրքի ամբողջական ցանկը, հիշեցնելով՝ նախ, որ նրա մեջ կան նաև ուրիշ հեղինակների պատկանող միավորներ (հատկապես վերջին մասերում), և որ Մործորեցու ոչ բոլոր քարոզներն են տեղ գտել այս ժողովածուի մեջ:

Երանաշնորհ և բազմիմաստ բարունապետի Յովհաննես Մործորեցույ կոռվարիք մտացն տեսութիւն.

- ա. Բանն որ առ Յովք. «Զինչ երկիր իցէ յորում լոյսն ազանիցի».— Եթէ որ իմաստուն խորհրդով ներակրթել զինքն կամիցի...
- բ. «Մի երկնչիր հօտ փոքրիկ, զի հաճեցաւ հայր ձեր տալ ձեզ զարքայութիւն».— Թէպէտ և ըմբոն ուրեմն էր մեզ աստանօր...
- գ. «Կապեսցէ զորթոյ զյաւանակ իւր».— Յաղագս խորհրդոյ լուսափայլ տօնիս...
- դ. «Տէր զլուր քո լուայ և երկեայ».— Զոր օրինակ մշակ որ հմուտ, որ երկրագործութեան արուեստին իցէ հրահանգեալ...
- ե. «Այր ոմն ազնուական գնաց յաշխարհ հեռի».— Աստուածն բան հրամայէ ուրեք յիւրում վարդապետութեանն...
- զ. «Այլ մեզէն եղեալ ականատես նորա մեծութեանն».— Թէպէտ հրաման ի տեսունէ ընկալաք ոչ հոգալ յորժամ յատեան կոչիցիմք...
- է. «Ահա ես առաքեմ զհրեշտակ իմ».— Յիրաւի ի սկիզբն նախադրութեան բանիս եպերեցայ ի գերահրաշ և ի հոգիահրաւէր ժողովոյդ...
- ը. «Լուր Իսրայէլ, տէր աստուած մեր տէր մի է».— Վստահացեալ յուսոյ քաջութեամբ...⁵⁷:
- թ. «Որպէս ջուր ցուրտ՝ ծարաւելոյ անձին ախորժելի է».— Ի հոգին սուրբ:— Բռնադատիմ ահա և յոյժ վարանիմ յերկաքանչիւր կողմանց...
- ժ. «Ժամանակ ծնանելոյ և ժամանակ մեռանելոյ».— Բանական բնութիւնք արարածոց յերկուս մասունս բաժանեալ են...
- ժա. «Առ քեզ, տէր, համբարձի զաշս իմ».— Եւ ո՞րպէս համբառնայ անձն առ աստուած...
- ժբ. «Ահաւանիկ ես առաքեմ զհրեշտակ իմ».— Յերիս բաժանի բանական բնութեանս սեռք...
- ժգ. «Ես իմաստութիւն բնակեցայ ի խորագիտութեան».— Յարարչական բանէ անեղական լուսոյն հաստատեալ գոյացան...

56 Նորայր Եպս. Պողաբեան, Մայր ցուցակ..., հատոր չորրորդ, էջ 5:

57 Վիեննայի ձեռագրում այս քարոզից հետո՝ 9-րդ համարի տակ՝ ընդօրինակված է Երուսաղեմի ձեռագրից բացակայող հետևյալ քարոզը. «Խորհուրդն, որ ծածկեալն էր յաւիտեանց. Խորհ[եալ] զբարիս առ[նել և] մարդկան».— Բարի առնելն յերեք տեղ է՝ ի խորհուրդն, ի բերանն, ի գործն... (2. Ոսկյան, Ցուցակ..., էջ 130):

- ժգ. «Զի՞ բարի և զինչ վայելուչ դի բնակեն»,—Հրամայէ տէր ի սրբում
աւետարանին, թէ որ խնդրէ ի քէն՝ տուր...
- ժե. «Ահաւասիկ ես ածից զծառայ իմ զծագումն».—Յարեւելաց աստի
ոչինչ ըզձալի գոլ քան զսիրելեացն կատարել բազմանս...
- ժզ. «Փոքր էի ես յեղբարս իմ».—Յերիս բաժանի բանական բնութեանս
սեռք...
- ժէ. «Զխորհուրդ արքայի ծածկել բարոք է».—Եթէ որ ի մարդկային բնու-
թենէ մարեցաւ...
- ժը. «Եւ ահա չորս կտոր ելանէին».—Բազում ինչ առնեմք զոր ոչ կարեմք...
- ժթ. «Երդուաւ տէր Դաւթի ճշմարտութեամբ».—Որպէս յաստեղս արեգակն և
ի կենդանիս դիմակն...
- ի. «Ի քէն է, տէր, աղբիւր կենաց».—Ի կաշոյ բանիս հայկելով երիս խորհուրդս
ծանուցանի մեզ...⁵⁸;

Այս քարոզներից հինգերորդի մեջ Մործորեցին, պատասխանելով «զի՞նչ է առակ» հարցին, հայանում է, որ սուրբ գրքի մեջ առակ բառն օրինակ բառի իմաստով է գործածված. «Իբր թէ օրինակաւ յայտնի կացուցանել զբանին իմաստ յորժամ լսողքն անկատարք իցեն, որպէս առնեն կատարեալ վարժապետք ծանրալուր ծանօթից»⁵⁹: Ղեկավարվելով այս սկզբունքով, Մործորեցի վարդապետը, ինչպես իր քարոզներում, այնպես էլ մյուս աշխատությունների մեջ, հաճախ է կիրառում կյանքի տարրեր բնագավառներից քաղված հանրամատչելի օրինակներով «ծանրալուր» մտքեր բացահայտելու եղանակը: Այլև այլ առիթներով նա անդրադառնում է վարձկաններին, շեշտելով այն հանգամանքը, որ նրանք աշխատում են վարձ ստանալու համար միայն. «Քանզի մարդկան սովորութիւն է,—գրում է նա,—որքան ոչ են ընկալեալ զվարձս վաստակոցն՝ արագ են ի փոյթն, իսկ յորժամ ընդունին՝ ծուլանալով կասին ի գործոյն»⁶⁰: Մեկ ուրիշ քարոզի մեջ ասում է, որ «Վարձկանն զբովանդակ զգործս տեսն կատարելով և ոչ զմիով իւր անցանէ ի գործեացն, ապա վարձուցն արժանացի»⁶¹: Քանիցս նա անդրադառնում է ծառա և ազատ մարդկանց դոյավիճակի տարբերությանը. «Զոր օրինակ,— գրում է մի առիթով,— ի տան իշխանի առ որդիս սիրելի և առ ծառայս է տեսանել զանազանութիւն»։ Երկուսն էլ հլու հպատակ են իրենց հոր կամ տիրոջ հրամանին, բայց նրանց հնազանդության հիմքում ընկած են միանգամայն տարբեր գործոններ. ծառա «ըստ առաջի ախորժակաց», այսինքն իր ազատ վիճակի քաղցր հուշերը փայփայելով, միշտ տենչում է ազատագրվել ստրկական կապանքներից. նա ենթարկվում է տիրոջ կամքին՝ տանջանքի երկյուղից. «Ոչ ի սիրոյ սպասաւորեալ յորդորի, բայց... պակուցեալ յերկիւղէ տանջանացն՝ ամենայն հրամանին պատկառ կայ հնազանդութեամբ»⁶²: Մի այլ առիթով գրում է. «Զոր օրինակ ծառայ ապստամբ հեռացեալ ի տեսնէ իւրմէ, կցորդ լեալ զողոց և աւա-

⁵⁸ Այս ցանկն արտագրել ենք Գ. Զարպհանայանի վերահիշյալ աշխատությունից, սրբագրելով ու ճշտելով մյուս աղբյուրներով (տե՛ս 54-րդ ծանոթագրությունը):

⁵⁹ Երուսաղեմ, ձեռ. № 1003, էջ 60:

⁶⁰ Նույն տեղում, էջ 31:

⁶¹ Մատենադարան, ձեռ. № 627, էջ 36ա:

⁶² Երուսաղեմ, ձեռ. № 1003, էջ 23:

դակաց և զժառանգութիւնս տեառն իւրոյ գերեալ՝ ի ծառայութիւն վտարէ յաշխարհ հեռի» և այլն⁶³։ Ավելի ուշագրաւ է ծառաների և ազատ մարդկանց իրավական վիճակի մասին Մործորեցու մի դատողութիւնը. «Թէ իշխանի ուրուք ծառայ հարուստ իցէ և այլ ոք ազատ և աղքատ, ոչ կարէ նախագահ լինել ծառայն ազատին։ Նոյնպէս և նախագորութիւնն իրր ազատ իմն նախագահեցաւ մակբայիս, իսկ սա վասն փարթամութեանն՝ զկնի»⁶⁴։

Ժամանակի սոցիալ-տնտեսական կյանքի տարբեր բնագավառների, դասակարգերի, նրանց փոխհարաբերութիւնների ու պայքարի և հարակից հարցերի մասին Հովհաննէս Մործորեցու բարոյների մեջ առկա մեծաքանակ ու կարեւոր տվյալները բարձրացնում են նրանց ճանաչողական արժեքը, նպաստելով միջնադարյան պատմութեան մթին ծալքերի լուսարանման գործին։

Ե. Զափածո ստեղծագործություններ

Գլաձորյան համալսարանի սաների ընդօրինակած ձեռագրերից շատերի մեջ կան շափածո հիշատակարաններ⁶⁵։ սրանից կարելի է հետեցնել, որ միջնադարյան Հայաստանի ուսումնական բարձրագույն հաստատութիւնների ուսանողները ծանոթացել են նաև շափածո գրվածքներ շարահարելու տարրական հնարանքներին։ Զափ ու հանգի մասին ընդհանուր գիտելիքներ ձեռք բերած, տնակապ տառերով որևէ անուն կամ բառ հոգելու եղանակներին ծանոթացած երիտասարդները գրանով, իհարկե, բանաստեղծ չէին դառնում, բայց ավարտելով Համալսարանը և գործունեութեան ասպարեզ մտնելով, քստ անհրաժեշտութեան՝ առավել կամ նվազ հաջողութեամբ՝ շարագրում էին շափածո հիշատակարաններ, ողբեր ու զանձեր։

Ուտանավոր գրվածքներ էր հորինում նաև Հովհաննէս Երզնկացին։ Դեռևս Գլաձորում գտնված տարիներին նա շափածո մի հիշատակարան էր հյուսել 1306 թ. ընդօրինակած իր ձեռագրի մեջ, գովերգելով ուսումնական այդ հաստատութիւնը, բացահայտելով իր աշխատանքի հետ կապված զովարութիւնները։

Տալիս ենք ստորև 26 տողից բաղկացած այդ հիշատակարանը.

Կարգիս և զանձն իմ եղկելի
 Եւ մեղսաներկ արհեստ գրչի,
 Զոր և մատամբ ծրագրեցի
 Ես՝ Յոհ[աննէս] աղքատ ողի,
 Տառապանօք թանձրագունի,
 Կարօտութեամբ անպատմելի.
 Սակայն փափաք յոյժ տենչալի
 Եւ ախորժանք անքննելի,
 Զիս յորդորեաց ցայս գործ իրի՝
 Զսա շարել ի քարտիսի:
 Զի յայս տեղիքս յորում էի

⁶³ Նույն տեղում, էջ 65։

⁶⁴ Այս նախագատութիւնը քաղված է Հովհ. Մործորեցու «Համառօտ տեսութիւն քերականիս աշխատութիւնից (տե՛ս Մատենադարան, ձեռ. № 7037, էջ 63ա)։

⁶⁵ Տե՛ս օրինակ, Մխիթար, Սաեփանոս, Վարդան և Եղեկիւն գրիչների հիշատակարանները («ԺԳ դարի հիշատակարաններ», էջ 103—104, 745, 165, 300, 302 և այլն)։

էր դպրութիւն հրաշալի,
 Եւ ես կարօտ այսմ տառի,
 Զի յիւր տեղին սա հասանի՝
 Շտապեցա յաւէտ կարի,
 Բայց իւր տեղոջն ոչ հասուցի,
 Զի եկն եհառ սա ի կարգի
 Ընթեռնելոյ ի հանդիսի.
 Տակաւ կիսով շափ է թերի,
 Հանգէտ գոլով սա աւարտի:
 Զոր աղաշեմք, որք հանդիպի
 Աստուածախօս այս մատենի,
 Յիշման գոլով զմեզ արժանի
 Զենման գառինըն առաջի,
 Եւ մաղթանք աղերսալի
 Խոշորութեանս ներելի⁶⁶:

Հիշատակարանը, ինչպես տեսնում ենք, շարադրված է կանոնավոր շափածոյով և զուրկ չէ բանաստեղծական ներշնչումից: Ուստի բնական է ենթադրել, որ սրան նախորդել ու հաջորդել են շափածո այլ ստեղծագործություններ: Եվ եթե ավելի վաղ շրջանի նմուշներ չեն պահպանվել, հետագա տարիների ստեղծագործություններից հայտնի են մի քանիսը: Գրանցից մեկը հասել է մեզ՝ մոտք գործելով XV դարի սկզբներին ստեղծված «Գանձարան» կոչվող ժողովածուի տարբեր խմբագրությունների մեջ, կոչվելով մերթ գանձ, մերթ երգ կամ քարոզ, առնչվելով ծննդյան երկրորդ կամ երրորդ օրերին և ջրօրհնեքին. բաղկացած է 12 տներից, որոնց սկզբնատառերով հոգվում են «Յոհաննիսի երգ» բառերը⁶⁷: Իր կառուցվածքով նմանվում է ավելի շարականատիպ ստեղծագործությունների, ձայնագրված է հայկական հին խաղերով, ուստի հորինվել է որպես երգ, վկայություն տալով նաև հեղինակի երաժշտական գիտելիքների մասին: Տարբեր խորագրերից նախնական կարելի է համարել «Երգ ջրօրհնեաց»-ը, որ պահպանվել է № 5951 ձեռագրում (էջ 42ա—44ա):

Սկսվում է այսպես.

Յամենայն ժամ աւրհնեմք զաւրհնեալ փրկիչդ էմանուէլ՝
 ծնեալդ ի կուսէն,
 Եւ վերքստին ծընընդեամբ մկրտեցար այսաւր ի Յորդանան
 ի Մըկըրըէն,
 Նորին բարեխաւսութեամբ բնգալ զաղաշանս քոց պաշտանէից,
 աղաշեմք:

⁶⁶ «ԺԳ դարի հիշատակարաններ», էջ 43—44:

⁶⁷ Պահպանվել է բազմաթիվ ձեռագրերում, որոնցից մի մասի խորագրերից բացակայում է հեղինակ Հովհաննես Մործորեցու անունը: Հեղինակի մասն վկայություն պահպանել են Մաշտոցի անվան Մատենադարանի №№ 474, 5899, 5951, 6489 և այլ ձեռագրերը, ինչպես նաև Զմմառի վանքի № 510 ձեռագիրը (տե՛ս «Ցուցակ». հատ. Բ, էջ 108):

Որ սրբեցեր ըզջուրսըն Յորդանանու՝ սրբբիշղ աշխարհի,
 Տալով ըզկրնիք նորոգման որդոց Սիովնի,
 Տուր մաքրութիւն սուրբ եկեղեցոյ և ազատութիւն քում
 Ժողովրդեանս, աղաչեմք...⁶⁸:

Հայ եկեղեցու երկու հակառակորդ խմբակցությունների միջև ծավալված դաշափարական գոտեմարտերի արձագանքները և մեր հեղինակի դիրքավորումն այդ պայքարում արտացոլված ենք գտնում երգի 9-րդ տան մեջ, ուր նա, ջատագովը լինելով լատինական եկեղեցու հետ միաբանելու քաղաքականության, աղաչում է աստծուն զորավիգ լինել քրիստոնեական եկեղեցիներին համախմբան ու միավորման շարժմանը: Նա գրում է.

Ի խաղբից թրշնամոյն պարըսպեալ ամբացոյ սուրբ եկեղեցի,
 Եւ յանուն քո ժողովելոցս շնորհեա զքաւութիւն յանցանաց
 և թողութիւն մեղաց՝ միածին որդի աստուծոյ.
 Ահա յիշեա և ևս առաւել քամեա ըզցրուեալսն ի մի
 միաբանութիւն հաւատոյ, յուսոյ և սիրոյ, աղաչեմք⁶⁹:

Հովհաննես Ծործորեցին հատուկ ակնածանք է ունեցել ներսես Շնորհալու գրական ժառանգության նկատմամբ: 1316 թ. լրացնելով Մատթեոսի ավետարանի Շնորհալու մեկնությունը և հյուսելով այդ մասին հիշատակարան, նա մեծարում է իր սիրելի հեղինակին, կոչելով նրան «գերապատիւ և գերահռչակ հայր», «երկրորդ լուսաւորիչ սուրբ եկեղեցոյ, և «կորովամիտ և համեղաբան կաթողիկոս»⁷⁰:

«Կորովամիտ և համեղաբան» Շնորհալու ստեղծագործություններից մի քանիսը, և՛ իրենց բովանդակությամբ և՛ ձևով, խորապես ներգործել են Ծործորեցու վրա, և նա նրանց նմանողությամբ ստեղծել է նոր գործեր: Շնորհալին, օրինակ, Սողոմոն իմաստունի, նրան վերագրված Առակաց գրքի Ժ («Որդի իմաստուն...») և ԻԵ («Փառք աստուծոյ...») գլուխների, ինչպես նաև ժողովողի ու Երգ-երգոցի մասին գրել է բանաստեղծություններ⁷¹: Դրանց նմանողությամբ Առակաց գրքի Թ («Իմաստութիւն...») գլխի մասին մի բանաստեղծություն էլ գրել է մեր հեղինակը, որ տրվում է ստորև.

Նուստ Յոհանիսի Ծործորեցոյ
 Իմաստութիւն գլխոյն

Յիմաստութիւն կենաց վերին
 Շարժեա և զիմ սիրտ բստորին.
 Որում ըզձամ տարփմամբ կրկին
 Դըպիր լինել Սողոմոնին.

68. Մատենադարան, ձեռ. № 5899, էջ 56բ:

69. Ձեռ. № 5899, էջ 58բ, № 474, էջ 33ա—33բ:

70. «ԺՊ դարի հիշատակարաններ», էջ 124:

71. Տե՛ս Տեառն ներսէսի Շնորհալու Հայոց կաթողիկոսի բանք չափաւ, Բ տպագրություն, Վենետիկ, 1928, էջ 380—395:

Հեղցես և յիս առատ զհոգին,
 Արփիաւոր զիմաստ բանին,
 Առնուլ զտիպ, որ աստ քերին
 Առակաւոր խորոց խրթին,
 Նմանել տոհմի Իսրայէլին,
 Որ այս պարզե վայելեցին.
 Եկեղեցոյ սուրբ ժողովին,
 Առնել և զիս հաղորդ նոցին,
 Սրբել սիրով յաղտից զմարմին,
 Այլ և զհոգիս իմ անմարմին՝
 Ի փառս քո սուրբ տաճարին,
 Երգել զերիս սուրբ սրովքէին.
 Էիդ լուսոյ հօրդ երկնային,
 Այլ և որդոյ քում միածնին
 Բրդխման հոգոյդ ի մի բնութիւն
 Եւ կատարեալ երբեակ անձին,
 Այժմ և յանցեալն, ապագային
 Տալ արհնութիւն զյաւիտենին,
 Նման իննեակ դասուց յերկին
 Որք են սկսեալ և ոչ դադարին⁷²:

Ներսէս Շնորհալին ունի երեք ստեղծագործություն՝ նվիրված հայոց այբուբենի տառերին, որով փորձում է նորավարժ մանկանց սրտերում բորբոքել սեր հանդեպ եկեղեցին, ուսումն ու գիտությունը.

- Այբն անբսկիզբն ասէ զաստուած,
 Անեղ բնութիւն՝ ոչ արարած...
- Այբն աստուծոյ զքեզ մերձակայ
 Խրատ լինել, թէ հաւատա...
- Այբն առաջին ըզքեզ, տրդայ,
 Հանէ յիմաստըն գերակայ...

Ահա սրանք են միջնադարյան Հայաստանում շատ տարածված այդ գեղեցիկ ստեղծագործությունների սկզբնատողերը⁷³:

Հովհաննէս Մործորեցին սրանց նմանողությամբ հորինել է իր «այբբենականը», որի մեջ նույնպես կենտրոնական տեղ է գրավում խրատը, հնազանդության քարոզը, ուսման գովքը: Այս բանաստեղծության վերջում, դարձյալ Շնորհալու հետևողությամբ, դրված է շափածո հորդորակ-հիշատակարան՝ «Յոհանիսի բան» տնակապ բառերով, որից հետո ընդօրինակված է Թ. Սաղմոսի մասին գրված մեզ արդեն ծանոթ բանաստեղծությունը, և ապա՝ այս եզրափակիչ նախադասությունը. — «Տունք ԻԳ (23), այբուբենիւ, ՄԹ (59) ընդ ամենայն, ՉՀԳ»⁷⁴: Եվ իրոք, շափածո հորդորակը՝ Սաղմոսի գովքի հետ միասին, պարունակում է 23 երկտող տուն, բուն «այբբենականը»՝ 36 քառատող տուն, ընդամենն՝ իսկապես 59 տուն: Վերջում դրված ՉՀԳ-ը, անտարա-

⁷² Մատենադարան, ձեռ. № 2407, էջ 201ա—201բ, № 2079, էջ 143բ: Երկյակ տողերի սկզբնատառերով հոգվում են «Յոհանեսի է բան» բառերը:

⁷³ Ն. Շնորհալի, Բանք շափաւ, էջ 335—245, 351—367, 369—379:

⁷⁴ Ձեռ. № 2079, էջ 143բ:

կույս, միմյանց կից դրված չափածո գրությունների հորինման թվականն է՝ 1324 թ., որը Մործորեցու ձեռքով գրված ու մեզ հայտնի ամենավերջին տարեթիվն է:

Ստորև, բնդհանուրի մասին գաղափար տալու համար, մեջ ենք բերում ուշագրավ այդ բանաստեղծության բուն մասից մի քանի քառյակ, իսկ հորդորակ-հիշատակարանն՝ ամբողջությամբ:

Յոհաննէս վարդապետի Մործորեցոյ
ոգեալ ի չափ մերոյին տառից՝
ոտանաւոր ձեռով

Այբն՝

Արարած զքեզ ասէ
Մահկանացու ի բնութենէ,
Մերկ ես եկեալ ի յարգանդէ,
Մերկ դառնալոց ես յաշխարհէ:

Բենն՝

Բանալ տա քեզ զաշխ հոգւոյ
Բնաւ չըսիրել զկամբս մարմնոյ,
Զի մի բողոք բառնաս յետոյ
Զունայնութեան զհետ երթալոյ....

Կենն՝

Կատարած քեզ և յագումն,
Կաթն իմաստից առ ի յարբումն,
Այլ և կենաց կըցորդ զուսումն,
Զի մի յետոյ գաս ի զղջումն....

Շայն՝

Շուրջ պատեսցես ուսման գրոց,
Որ զմիտս առնէ զինչ բով հալոց,
Մաքրագործէ ի յարբունուց,
Եւ արասցէ հաղորդ վերնոց....

Զեն՝

Զանիւ ստիցէ քզքեզ ի խրատ,
Զի դիտութիւն առցես առատ,
Եւ մի մնասցես յուսմանց աղքատ,
Զի տալցես վրէժ և դատ...

(Յորդորակ)

Յորդորական ձայնիւ գոչեմ,
Նախ եկելոցրդ բողոքեմ,
Որ գրեցի զբանբս պատմեմ՝
Ես Յոհաննէս ձեզ ծառայ եմ.

Հեռի եղէք, ահա ասեմ,
Յախաից մարմնոյ, զձեզ աղաչեմ:
Ահա հՀաս արբն գրեմ
Եւ ծամ մահու, որ ծամանեմ,

Նեղիմ տապով, զոր այժմ երկնեմ,
 Զունիմ ջուապ, պատասխանեմ,
 Ի դատաստան ես մտանեմ
 Եւ յիմ մեղացն յոյժ ամաշեմ,
 Սրբոցն փառս, զոր տեսանեմ,
 Վիշտ տանջանօք զանձս կոծեմ.
 Ի մեղական մարդ, զայս գիտեմ,
 Բնութեան նոցին հաւասար եմ,
 Բայց ի գործոցն յոյժ հեռի եմ,
 Զներհակ նոցին, և մըտածեմ,
 Այս ինձ կրկին / / / գործեմ
 Զի զլաւն այլոց ուսուցանեմ,
 Նման յեսանի՝ զայլրս սրեմ,
 Ի սրոյ բանին զիս յոյժ բթեմ⁷⁵:

Հովհաննես Մործորեցու շափածո ստեղծագործությունների մեջ հատուկ տեղ են զբաղում հանելուկները, որոնց անդրադառնում ենք առանձին պարբերությամբ:

դ. Հանելուկներ

Ներսես Շնորհալու՝ ժողովրդական բառ ու բանով համեմված, դյուրալուր և հետաքրքրաշարժ հանելուկները սիրված ստեղծագործություններ են եղել և լայն տարածում գտել ամենուրեք: Նրանց նմանողությամբ միջնադարում ստեղծվել են հանելուկների նոր շարքեր, որոնք, ընդօրինակվելով հետագայում Շնորհալու հանելուկներին առընթեր՝ ձուլվել են նրանց հետ, զրկվելով իրենց հեղինակացույց խորագրերից⁷⁶: Շնորհալուց հետո հանելուկներ են ստեղծել Հովհաննես Պլուզը, Գևորգ Երզնկացին, Գրիգոր Մերենց Խլաթեցին⁷⁷, Հովհաննես Մործորեցին և ուրիշներ: Մործորեցու հանելուկների մեղ հայտնի միակ ընդօրինակությունը պահպանվել է մեր մատենադարանի № 7035 ձեռագրի մեջ, բաղկացած լինելով 20 միավորից: Նկատի ունենալով դրանց բանասիրական արժեքն ու ճանաչողական նշանակությունը՝ ստորև հրապարակում ենք ամբողջությամբ:

⁷⁵ Զեռ. № 2079, էջ 142ա—143բ:

⁷⁶ Հաստատապես Ն. Շնորհալուն են պատկանում շուրջ 120—140 հանելուկներ (տե՛ս «Բանք շափառ», էջ 609—639, ձեռ. № 7035, էջ 117ա—130ա և այլ ձեռագրեր): Կան, սակայն, բազմաթիվ ձեռագրեր (օրինակ № 2079, էջ 278բ—283բ), որոնցում հանելուկները բազմացել են ի հաշիվ այլ հեղինակների նմանատիպ ստեղծագործությունների: Ն. Շնորհալու հանելուկներն արժանի են մանրակրկիտ ձեռագրագիտական ուսումնասիրության, որով պարզվելու են այդ ուշագրավ ժանրի ստեղծման ու զարգացման ընթացքի հետ կապված լուսարանության կարոտ շատ խնդիրներ:

⁷⁷ Այս երեք նշանավոր մատենագիրների հորինած հանելուկների մասին տեղեկություն ենք բաղում Տրդատ վարդապետ Պալյանի «Յուցակ հայերէն ձեռագրաց Ս. Սիոն և Ս. Լուսաւորիչ եկեղեցեաց ի Մաղնիսա (Զմիւռնիոյ վիճակ), Զմիւռնիա, 1897» աշխատությունից (ձեռքի տակ ունեցել ենք նույնի հատվածաբար տպագրությունը «Արեւելեան մամուլ» պարբերականի մեջ՝ 1897 թ., էջ 140—142): Այստեղ նկարագրված է 1526 թ. Աղթամարում ընդօրինակված մի ժողովածու, որի մեջ եղել են 6 հանելուկ Հովհաննես Պլուզից, 5 հանելուկ՝ Գևորգ Երզնկացուց և 16 հանելուկ՝ Գրիգոր Մերենցից: Տ. Պալյանը յուրաքանչյուրից մեկական օրինակ նմուշ է բերել:

Յոհան վարդապետէ Մործորեցւոյ
արարեալ հանելուկս

1. Տեսի արուեստ մի զարմազան,
Զի նշտրակով զերկիր բանան,
Հանեն արիւն անդի զինչ թան
Եւ զիր զրեն կայսերական: (Քարն)
2. Եկ և տես այլ սոսկալի,
Զի յատոցով երկիր բըրի,
Ելնէ կենդան և ոչ կենդանի,
Առնէ կարմիր զգոյն սպիտակի: (Որդն)
3. Ի սուլտանին մեծ քարխանայն
Կայր մին ուսթայ խիստ աննման,
Առանց հորի և մաքոքայն
Գործէր բարակ գործ անխաբան: (Սանդ)
4. Զերդ աղեղան լար է բարակ,
Հանց հնաւոր զերդ աղուսեակ,
Ի յամէն շորս եղանակ
Նա նորանա զերդ արծուակ: (Աւծ)
5. Ըստ արարչին մեծ սահմանի,
Նա բուրգն և հիմն է աշխարհի,
Աստուածայշէն տանն է տեղի,
Մարդկան ոտից անկոխելի: (Մասիս)
6. Ազի ունի զինչ առիւծու,
Կնճիթն է սուր զերդ աղուեսու,
Խաւարասէր է որպէս բու
Եւ ձայն ածէ որպէս հաւու: (Մուկն)
7. Քան ըզշուն ինքն է վազան,
Սիւներն երկայն՝ զինչ զպարան,
Է թևատ աքլալ նրման,
Կամ հաւասար ըզտու կոզուան: (Մաքի)
8. Ի կարուակէ հանճարեղին
Կարեալ կապա զանմաշելին,
Զնիւթն ի քարէ կակղացուցին,
Ասեղն՝ սալն է դարբընին: (Զրեհ)
9. Ի յերկու կողմանց է ծուռ,
Կուշտն կապած խիստ և կուռ,
Թէ կորովի է որ և փուռ,
Յրուէ զոսկերս մարդկան զերդ բուռ: (Աղեղն)
10. Զինչ խեչեփառ ոտուի ունի,
Ընդ որ երթայ՝ հետն երեւի,

- Նա ի մագէ կամուրջն անցնի,
Թէ և թընդայ՝ հող շթափի: (Մկրատ)
11. Ոչ է մարդ և ոչ կընիկ,
Բայց բոքասուն զերդ առեւծիկ,
Թէ պիտենայ՝ քեզ է թախտիկ,
Եւ թէ կամիս՝ լինի սայլիկ: (Զորի)
12. Է գովելի կտրիճ աղեկ,
Անուն կոչին իւր դարապէկ,
Զինչ ըզսե անէ զրնմէկ մէկ (°),
Լծուի և գայ յուս և ի թէկ: (Մըջիմն)
13. Ղարապէկիս կայր շէկ եղբայր
Զինչ թուխարիկ ձի որնվար (°),
Որ գոլորշաւք ցաւին յերկար,
Նա հաքմութիւն գիտէ ճարտար: (Մեղու)
14. Ի յերկու սալի միջի,
Ինքն բնակէ զինչ ի փորի,
Եւ թէ մահու տա[ւ] ըմպելի,
Նա խոտ ո[ւ]տէ ու շմեռանի: (Կրա)
15. Անուն անեղն ասել ի Գրոց,
Բայց ինքն վառի որպէս զրոց,
Անճառ փայլիւն առնէ գունոց
Եւ հաշտութեան նըշան ամպոց: (Միածան)
16. Ի հրոյ ունի նա զգոյութիւն
Վառէ և զհուր ներգործութիւն
Խռիւ ցաւղնոյ յինքն միութիւն,
Բայց ոչ այրէ նա քան զընութիւն: (Մ[իրանի°] ծով)
17. Մանուկ մի կայր խիստ հրաշատես,
Անիւ սայլի և հուր ի ներս,
Զորս կենդանի լծեալ ետես
Եւ մարդ յաթոռն՝ նըման քեզ: (Եղեկիէլ)
18. Զինչ պօղոսիկ զերան ի ցից,
Կառաց լծեալ զիմաց շորից,
Նա վերանայր յերկինս երկնից
Բազմեալն աստուած էր ամենից: (Կառքն)
19. Էին հրեշտակք աթոռ եղեալ,
Մին ըզշորից երես առեալ,
Նըման կառանց յաւորդ թռեալ՝
Յերուսաղէմ ի յօթ իջեալ: (Այլ)⁷⁸
20. Էր ինքն բոլոր զերդ արեղակ,
Ունէր սոնակ խաշատեսակ,

⁷⁸ «Այլ» ասելով նկատի ունի նախորդ (18-րդ) հանելուկի պատասխանը՝ «Կառք: Եղեկիէլի կառքի մասին է նաեւ վերջին հանելուկը»:

Անիւ սալի համաքատակ
եւ կենդանիս քառադիդակ⁷⁹:

Այս հանելուկներից մի քանիսը հետազայում վերագրվել են ներսես Շնորհալուն և, նույնիսկ, հրատարակվել նրա անունով⁸⁰, բայց հաստատապես պատկանում են Հովհաննես Մործորեցու գրչին: Այս ապացուցվում է նաև այն իրողությամբ, որ № 7035 ձեռագրի մեջ Մործորեցու հանելուկներին նախորդում է Շնորհալու շարքը, բաղկացած շուրջ 140 միավորից. ձեռագիրն ընդօրինակող գրչին քաջ հայտնի է եղել և՛ Շնորհալու և՛ Մործորեցու վաստակը նույնատիպ այս ստեղծագործությունների հորինման մեջ:

Մործորեցի բանաստեղծի շափածոն, վկայելով հեղինակի շնորհքի ու հմտության մասին, մտածել է տալիս, որ նա ստեղծագործած պետք է լինի նաև այլ գործեր: Եվ կարելի է հուսալ, որ գիտական շրջանառության մեջ չգրված հայերեն ձեռագրերից որևէ մեկի ծալքերից առաջիկայում⁸¹ լույս աշխարհ են քերվելու մեր հեղինակի բանաստեղծություններից ուրիշ նմուշներ ևս:

է. Գիրք խորհրդոց եկեղեցոյ

Կաթուղիկ եկեղեցու նշանավոր գաղափարախոս Պետրոս Լոմբարդացու (մհ. 1164 թ.) «Վկայութիւնք» (Sententiarum) կոչվող քառահատոր աշխատությունը մինչև ռեֆորմացիայի դարաշրջանը տարածված էր ողջ Եվրոպայում և ճանաչված որպես կաթուղիկ դավանանքի համապարփակ ուղեցույց: Այդ աշխատության մասին գրվել են տասնյակ մեկնություններ, որոնց մեջ ուրույն տեղ է գրավում Թովմա Արվինացու համառոտ վերլուծությունը՝ «Գիրք խորհրդոց» (Liber Sacramentorum) խորագրով⁸¹:

Արևելյան երկրներում, մասնավորապես հայկական միջավայրում կաթուղիկ եկեղեցու ազդեցությունը տարածել ցանկացող գործիչները, բնականաբար, ձեռքի տակ պետք է ունենային դյուրալուր ոճով շարադրված համապարփակ մի ձեռնարկ՝ կաթուղիցիդմի հիմնական սկզբունքների մասին խոսել և բարոյել կարենալու համար: Եվ ահա՝ համանման աշխատություններից լավագույնն է ճանաչվում Թովմա Արվինացու վերոհիշյալ «Liber Sacramentorum» հատորը: Հովհաննես Մործորեցին, լատիներեն իմանալով և կաթուղիկ դավանանքին հարած լինելով, հարմարագույն անձն է նկատվել այդ գրվածքի թարգմանությունն իրագործելու: Եվ այդ պատասխանատու աշխատանքը հաջողությամբ նա ի կատար է ածել Հովհաննես ԻԲ պապի կարգադրությամբ («հրամանաւ պապին Հոռմա»), Զաքարիա Եպիսկոպոսի հոգածությամբ և Մարաղայում բուն դրած Բարթուղիմեոս ֆռանկ Եպիսկոպոսի օժանդակությամբ՝ 1321 թվականին, անկյունաքարը դնելով հայ ունիթորական գրականության:

Հաջորդ տասնամյակների ընթացքում, ինչպես Մործորի վանքում, այնպես էլ՝ ավելի մեծ ծավալով՝ Քոնստանդնուպոլսում և հայ ունիթորների մյուս կենտրոն-

79 Ձեռ. № 7035, էջ 130ա—132ա:

80 Այս հարցի հանգամանալից բնությունը դուրս համարելով մեր նպատակից, մատնանշում ենք № 2079 ձեռագիրը (էջ 282բ) և Հակոբ Մեղապարտի «Տաղարանը» (Վենետիկ, 1513, էջ 52—53), որոնցում զետեղված են Շնորհալու հանելուկների շարքի մեջ տեղ են գտել նաև Հ. Մործորեցու հանելուկներից առանձին միավորներ:

81 Միջնադարյան հայկական ձեռագրերում կոչված է «Գիրք խորհրդոց եկեղեցոյ» կամ «Ցաղազս եւթն խորհրդոց եկեղեցոյ»:

ներում, Հովհան և Հակոբ Քոնեցիներին, Բարթուղիմեոս Մարաղացու, Պետրոս Արագոնացու և բազմաթիվ այլ հայ ու օտարազգի քարոզիչների ջանքերով ստեղծվում է հայ-կաթոլիկական ինքնատիպ մի գրականություն. ծիսական մատյաններից բացի հայերեն լեզվով շարադրվում կամ լատիներենից թարգմանվում են փիլիսոփայական մեկնություններ, քերականագիտական երկեր, դատաստանագիրք, քարոզգիրք և բազմաթիվ այլ աշխատություններ, որոնց գիտական ուսումնասիրությունը գեռես չի կատարված⁸²:

«Գիրք խորհրդոց եկեղեցւոյ» երկի թարգմանության վերջում Հովհաննես Մործորեցին թողել է ընդարձակ հիշատակարան գրքի արժանիքների և իր կատարած աշխատանքի մասին, որ բազմիցս հրապարակվել է հայագիտական աշխատություններում⁸³: Զմմառի վանքի մատենադարանի «Անտոնյան հավաքածու» շարքի մեջ պահվում է աշխատության մի ընդօրինակություն (ձեռ. № 105), որ կարող է Մործորեցու ինքնագիրը լինել⁸⁴:

Ը. Այլ գրվածքներ

Վերոհիշյալ աշխատություններից բացի, Հովհաննես Մործորեցին, անշուշտ, գրել է նաև այլ գործեր, որոնց մասին միջնադարյան աղբյուրներում կան ակնարկներ և ստուգման կարոտ վկայություններ:

Այսպես՝ Ամրդուլու վանքի «Վարդապետական գրեանց» ցուցակի մեջ, որ կազմել է Վարդան Բաղիշեցին XVII դարի վերջերին, ՃԻԶ (126-րդ) համարը կրող ձեռագիրը նկարագրված է այսպես. «Ա. Գիրք Յովհաննու Երզնկացւոյ Պլզոյ ասացեալ ժամանակագրութիւնք և բազում նախերգանք և ասացուածք վարդապետաց. մանաւանդ բազում ասացուածք երկարք միւս Յովհաննու Երզնկացւոյն արարեալ, ոչ Պլզոյն, այլ Յովհաննու Մործորեցւոյն»⁸⁵:

«Բազում ասացուածք երկարք» արտահայտության տակ ի՞նչ սխալ է հասկանալ, Մործորեցու քարոզները, մեկնողական գրվածքները, թե՛ մեղ չհասած որևէ այլ աշխատություն. դժվար է պատասխան տալ այս հարցերին:

Երուսաղեմի մատենադարանի № 1171 ձեռագրում (էջ 335—339) ընդօրինակված է «Յոհանէս Մործորեցւոյ ընդդէմ սուրբ պատարագին» խորագրով մի բնագիր, որ սկսվում է «Տէր ամենակալ, աստուած հզօր, արարիչ ամենայնի...» բառերով⁸⁶: Սրա բովանդակության մասին ավելի բան չգիտենք:

82 Ունիթորական գրականության ցանկը, կարևոր պարզաբանումներով տվել է Markus Antonius v. d. Oudenrijn-ը՝ իր „Linguae Haicanae Scriptores“ (Bern 1960)) մեծաթեք աշխատության մեջ. այդ գրականության գիտական ուսումնասիրությունը, սակայն, գեռ չի կատարված:

83 Տե՛ս օրինակ, Գ. Զարպհանլյան, Մատենադարան թարգմ. Նախնեաց, էջ 274—275, 2. Տաշյան, Մայր ցուցակ, էջ 777, «Բազմավէպ», 1906, էջ 257, «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 173—174, M. A. v. d. Oudenrijn, էջ 182—183 և այլն:

84 Նոր Զուղայի հայերեն № 614 ձեռագրի մեջ (85ա—91բ) ընդօրինակված է «Նուստ վարդապետի Յոհանու Երզնկացւոյ, որ և Մործորեցի թարգմանեալ զխորհուրդ պսակին ի լատին լեզուէ ի հայ բարբառ» խորագրով մի փոքրիկ բնագիր (Տե՛ս Լ. Մինասյան, Ցուցակ ձեռագրաց Նոր Զուղայի Ս. Ամենափրկչեան վանաց թանգարանի, հտ. ք, Վիեննա, 1972, էջ 91): «Գիրք խորհրդոց եկեղեցւոյ» աշխատության և ձեռագրական այս հատվածի բաղդատումից հետո միայն հնարավոր կլինի որոշել ուրույն մի աշխատություն է սա, թե՛ Քովմա Արվինացու վերոհիշյալ գործի մի բաժնի առանձնակի ընդօրինակություն:

85 «Այս են վարդապետական գրեանք ի վանքն Ամրդուլու՝ համարով անշինջ յիշատակ գրեալ իմօքս ձեռամբ Վարդանայ վարդապետի» («Արարատ», 1903, էջ 187):

86 Ն. Պողարյան, Մայր ցուցակ, Դ, էջ 270:

Մեր մատենադարանի № 3522 ձեռագրում (էջ 171բ—186ա) գտնում ենք Զաքարիա եպիսկոպոսի Սյունյաց մետրոպոլիտ Հովհան Օրբելին ուղղած պատասխան-նամակի մի ընդօրինակությունը՝ այսպիսի ուշագրավ խորագրով. «Թուղթ և պատասխանի առարկութեանցն ընդդէմ հակառակորդաց, արարեալ մեծի և իմաստնոյն Յոհանու Մործորեցոյն»: Հովհաննեսի անունն այստեղ կարող է բացատրվել գրչագրական վրիպակով, իսկ եթե այն գալիս է նախագաղափար օրինակից, ապա պետք է ենթադրել, որ Հովհաննես Մործորեցին գործոն մասնակցություն է ունեցել Առաքելոց թեմի առաջնորդ Զաքարիա եպիսկոպոսի ստորագրած գրությունների շարադրման ու հարգարման աշխատանքներին:

Մործորեցու անունը թյուրիմացաբար առնչվել է նաև Մխիթար Գոշի առակներին: Մեր մատենադարանի № 2189 ձեռագրի մեջ ընդօրինակված են Գոշի ՃԿԱ—ՃՂ առակները, ինքնուրույն համարակալությամբ (Ա—ԻԸ)՝ «Առակք ստեղծականք պիտանիք առնուլ ի զրուցատրութիւնս և յասացուածս, արարեալ Յոհանու Մործորեցո» խորագրով, վերջում ունենալով այսպիսի հիշատակագրություն. «...և զվերջացեալս ի բարեաց գործոց՝ զտարտամ գրիչս զՅոհ[աննէս] ծանոթ բանի և տեղեալ Եղնկացի, իսկ այժմ Մործորեցի, աղաչեմ շնորհաւոր ի բարիս զիս և զիման ամենայն, ի թվականիս փրկչին ՌՅԺԶ (1316)»⁸⁷:

Ակադեմիկոս Ն. Մառք, մանրակրկիտ ուսումնասիրելով այս ձեռագիրն ու հիշատակագրությունը, հանգել է այն ճիշտ եզրակացության, որ սխալմունքով պետք է բացատրել վերոհիշյալ խորագրի մեջ Մործորեցու անվան ներմուծումը: Նա, 1316 թվականին սոսկ ընդօրինակել է Մխիթար Գոշի առակների վերջին բաժինը՝ շնչելով հեղինակի անունը: Տարիներ հետո (1394-ից առաջ) Գրիգոր անունով մեկը, տարատեսակ նյութերի հետաքրքրական մի ժողովածու կազմելով, Հովհաննես Մործորեցու ձեռագրից արտագրել է նաև այդ առակները, բայց սխալ մեկնաբանելով Մործորեցու հիշատակագրությունը, իրեն այլուստ անծանոթ առակների հեղինակ է համարել գաղափար հանդիսացող ձեռագրի գրիչ Մործորեցուն⁸⁸:

Այսպիսով ժխտվում է Հովհաննես Մործորեցու մասնակցությունը միջնադարյան հայկական առակների ստեղծման աշխատանքներին, բայց բացահայտվում է, որ նա 1316 թ. երբ Մործորի վանքում ծավալել էր գիտա-մանկավարժական եռանդուն գործունեություն, ժամանակ է գտել շարունակելու ձեռագրերի բազմացման իր համար սովորական աշխատանքը՝ այս անգամ ընդօրինակման նյութ դարձնելով Մխիթար Գոշի առակների «Առակք ստեղծականք» բաժինը⁸⁹:

⁸⁷ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 2189, էջ 424ա—434ա: Նույնը, ուղղագրական աննշան տարբերություններով, գտնում ենք նաև Նրուսաղեմյան № 1376 ձեռագրում (էջ 497—524):

⁸⁸ Н. Я. Марр. Сборники притч Вардана, часть 1, СПб, 1899, էջ 73—74: Ն. Մառի եզրակացությունն բոտ ամենայնի ճիշտ է. պետք է ավելացնել միայն, որ մեր մատենադարանի № 2189 (նախկին 2238) ձեռագրի նյութերի համախմբողն ու գրիչը ինքը՝ Գրիգոր Տաթևացին է: Ըստ այդմ՝ բովանդակալից այդ ժողովածուն թանկագին մի մասունք է, արժանի հատուկ ուշագրության:

⁸⁹ Հմմտ. Մխիթար Գոշ, Առակներ, տեքստը ձեռագրերի համեմատությամբ և ներածություներ էմ. Պիվադյանի, Երևան, 1951, էջ 119—133:

Պետք չէ տարակուսել, որ դեռևս շուտամնասիրված հայերեն ձեռագրի միջից հայտնաբերվելու են Հովհաննես Մործորեցու ստեղծագործություններին առնչվող նոր նյութեր, ամբողջացնելով մեր գիտելիքները նրա կյանքի ու վաստակի մասին:

* * *

Հովհաննես Երզնկացին մշտական բնակություն հաստատեց Մործորում՝ նորակառույց այդ վանքին կից բարձրագույն դպրոց ստեղծվելու կապակցությամբ: Նրա աշխատությունների մեծագույն մասը՝ Քերականի մեկնությունը, Մատթեոսի և Դանիելի մեկնությունները և այլն, շարադրված են հենց ուսուցողական նպատակներով, իր շուրջ համախմբված բանասեր անձանց և դրոց աշակերտների հորդորներով: 1318 թ. Մործորի վանքում շարադրած իր մի հիշատակարանում Մխիթար գրիչը, ժամանակի նշանավոր անձանց՝ Հայոց թագավորի, կաթողիկոսի, Արտազի եպիսկոպոսի անուններից անմիջապես հետո, արձանագրում է Հովհաննես Մործորեցու անունը, մեծարելով նրան «վարժապետ և ուսուցիչ» տիտղոսով⁹⁰: Մործորեցու աշակերտներից մեկ ուրիշը, որի անունը չի պահպանվել, բայց արժանի է հիշատակության, որպես խմբագիր իր ուսուցչի քարոզներից կազմված ժողովածուի, վերը հիշատակված ԺԲ քարոզի բնծայական-հիշատակարանի մեջ իր բարունապետին համահավասար է համարում Հովհան Ոսկերեբանին և Գրիգոր Աստվածաբանին, հատկապես շեշտելով նրա հայրական խնամքն իր աշակերտների նկատմամբ⁹¹:

Մործորի բարձրագույն դպրոցն ավարտած և վարդապետական գավազան ստացած անձնավորություններից հայտնի է Իսրայել բարունին⁹², որ հի-

⁹⁰ «Յորժամ գծագրեցաւ մատենսս զայս,—գրված է այդ հիշատակարանում,—թուական Հուլիս 264 (1318) էր, և թագաւոր Օշին, և կաթողիկոս տէր Կոստընդին, և բնակութիւնս Մործորու վանք, և տեղոյս առաջնորդ տէր Զաքարիայ, և վարժապետ և ուսուցիչ Յոհաննէս՝ ստացող գրոցս, և անուն գծողիս Մխիթար» (ձեռ. № 2104, էջ 164բ):

⁹¹ Այս գեղեցիկ ներբողյանը, որ պարունակում է Հովհաննես Մործորեցու մասին կենսագրական և բնութագրական տեղիներ, մեջ ենք բերում ստորև գրեթե ամբողջությամբ.

«Բեր այժմ ի մէջ առցուք զաղբերն իմաստից՝ զայրն կորովամիտ՝ զշքեղացեալն զանազան իմաստիք բանականութեանն արդասօք, զերկրորդն Ոսկերբան, և կամ համարձակեցայց ասել Աստուածաբան, զհայրն մեր հոգեւոր, զբարունապետն Յոհան: Որ զի թէպէտ եղեալ ոմանք և փայլեալք ի վերայ երկրի, և են, և լինին, որք համբաւեալ հռչակին ի խումբս աստուածեղէն տաւից, սակայն ոմն այսու և ոմն այնու շնորհացն պայծառութեամբ յարգին ըստ առաքելոյ, և ըստ այնմ և զգովութեանն տարան մրցանակ, և կամ տանին: Իսկ նա զբովանդակն ընկալաւ իմաստ, և բոլորին եղև ընդունակ հանճարոյ: Քանզի թէպէտ մասն էր ինքն բոլորին, սակայն զհանուրցն և զմասանցն ստացաւ գիտութիւն, և ի ձեռն վարժից կրթութեան, և բնական շնորհացն աշողութեան, նաեւ առաքինի և հեղ վարուցն պարկեշտութեան: Եթէ ըստ մտացն տեսողութեան և ծննդական գոյոյն ի գիտս հնարից դարձուածոց բանից՝ արագ էր բան զամենեւեան, և թէ ըստ առատ և յորդաբուղիս բանին բղխողութեան, և համեղ և ախորժ ի շահ օգտութեան ի լուր լսողաց՝ ամենեցուն էր նա ըղձալի: Զորս զամենեւեան ի բաց թողեալ իրրև զյայտնիս, զմին միայն եւեթ յիշեցից, զգով հայրական խնամոցն, որ առ մեզ, զի սնուց և վարժեաց զմեզ յոգնաբեղուն խրատութեամբ, իբրեւ զորդի սիրելի, և կամ զճշմարտագոյնն ասել՝ ի վեր քան զբնական սիրոյն ցուցակութիւն, վասն զի կրկնակի տաժմանն եցոյց առ իս օրինակ, մանաւանդ յայսմ իրակերտութեան զործոյ եղև նպաստ և առիթ՝ յորդորական բանիք քաջալերս տալով» («Երուսաղեմ, ձեռ. № 1003, էջ 119, հմմտ. Ն. Պողարյան, Մայր ցուցակ, Դ, էջ 5):

⁹² Մեսրոպ վրդ. Քեչիկյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Զմամոի վանքի մատենադարանին, Վիեննա, 1964, էջ 579:

շատակված է նաև Հովհան Քոնեցու հետ միասին «Ֆռանգաց դաւանութիւն» ընդունած 12 վարդապետների շարքում, իր հայրենակից Առաքել վարդապետի ընկերակցությամբ («Առաքել և Իսրայէլ վարդապետք՝ ի գաւառէն Արտազու»)՝⁹³։ Սրանք ևս Մործորեցու աշակերտներից են։ Ուրիշ տեղեկություններ մեր բարունապետի մանկավարժական աշխատանքի և սնուցած աշակերտների մասին չենք գտել։

Հովհաննես Մործորեցու գործունեությանը վերաբերող բոլոր վկայություններն ամփոփելու համար նշենք այստեղ, որ նա, Ջաքարիա եպիսկոպոսի հետ միասին, մասնակցել է 1317 թ. Ադանա քաղաքում գումարված եկեղեցական ժողովի աշխատանքներին. այդ մասին սկզբնաղբյուրներում կան ուղղակի վկայություններ⁹⁴։ Բանասեր Հ. Քյուրդյանը չի հավատում դրանց արժանահավատությանը՝ նշելով, որ 1317 թվականին Մործորեցին գտնվում էր Արտազում, զբաղված լինելով գրական աշխատանքներով⁹⁵։ Այս պնդումը, սակայն, հիմնադուրկ է. Հովհաննես վարդապետի 1316 և 1318 ու հետագա թվականներին Մործորի վանքում լինելը վկայված է սկզբնաղբյուրներով, մինչդեռ 1317-ի մասին ոչ մի տեղեկություն չունենք։ Ուստի հարկ չկա տարակուսելու, որ նա, Ջաքարիա եպիսկոպոսի հետ միասին, մեկնել է Կիլիկիա ու մասնակցել Ադանայի ժողովի աշխատանքներին։ Հակված ենք կարծելու, որ այս ճամփորդությունը չի սահմանափակվել Կիլիկիայով։ Մործորեցին, հավանաբար, ուղևորվել է նաև Ավինյոն ու տեսակցել Հովհան ԻԲ պապի հետ։ Քիչ առաջ ասացինք, որ Թովմա Աբվինացու «Գիրք խորհրդոց եկեղեցւոյ» երկի թարգմանությանը նա ձեռնարկել է, ինչպես ինքն է գրում, «հրամանաւ պապին Հռոմա», իսկ այդպիսի հրաման Մործորեցի վարդապետը կարող էր ստանալ՝ անձամբ տեսակցած լինելով կաթոլիկ եկեղեցու վեհապետի հետ, հռոմեական և հայկական եկեղեցիների միավորման հետ առնչվող տեսական ու գործնական հարցերի շուրջ բանակցելու համար։ Պետք չէ մոռանալ, որ 1317 թ. կաթոլիկ եկեղեցու առաջնորդները նախապատրաստվում էին ավելի աշխույժ քարոզչական աշխատանք ծավալելու արևելյան երկրներում, այնտեղ առաքելով դոմինիկյան մի խումբ կղերականների ու ստեղծելով եպիսկոպոսական նոր թեմ։

Այս փաստերի լույսի տակ Հովհաննես Մործորեցին ներկայանում է պատմության դատական ատյանին, որպես մի գործիչ, որ հայրենի երկրի ազատագրման ու բարգավաճման հեռանկարները շաղկապած լինելով եվրո-

⁹³ Մատենադարան, ձեռ. № 1361, էջ 341ա։

⁹⁴ Ջաքարիա և Հովհաննես Մործորեցիների անունները բացակայում են ժողովականների ցուցակից, բայց նրանց մասին տեղեկություն է հաղորդում Հովհան Քոնեցին. «Եւ ի մէջ եպիսկոպոսաց, որք եկեալ էին այն ժողովն ևս եղև արհեսպիսկոպոսն Ջաքարիա, որ էր իշխող եկեղեցւոյն սրբոյն Թադէոսի առաքելոյն... ևս ի մէջ նոցին էր և մեծ վարդապետն Յոհան Մործորեցին» (Կղեմէս Գալանոս, Միաբանութիւն Հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հռոմայ աշխարհի, Հռոմ, 1690, էջ 517—518)։ Համանման տեղեկություն գտնում ենք «Պատմիչ ժողովոցն Կիլիկիոյ» աղբյուրի մեջ. «Հինգերորդ ընդհանրական ժողով,—գրված է այնտեղ,— եղև ի մայրաքաղաքին Ատանայ Կիլիկիոյ... յամի տեսոն Ռէթէ-ին և ի թվ. Հայոց 242-ին, այսու պատճառաւ, զի տղէտք և կամապաշտք ոմանք միակեացք խոռվէին զպարզամիտս իբր թէ ժողովն Սոոյ իցեր հակառակ աւանդութեանց սրբոյն Լուսաւորչին... համազումարեցին ի քաղաքն Ատանայ, ընդ որս էր և մեծ արքեպիսկոպոսն Մեծին Հայաստանի Ջաքարիայ... և վարդապետն հռչակաւոր Յոհան Մործորեցի» (Հ. Տաշյան, Մայր ցուցակ, էջ 115)։

⁹⁵ Հ. Քյուրդյան, Երիզա և Եկեղեաց գավառ, հտ. Ա, Վենետիկ, 1953, էջ 195—196, 241։

սլական երկրներից ակնկալվող ռազմական օգնության հետ, ընդառաջ էր հնում կաթոլիկ եկեղեցու գաղափարական և կազմակերպչական պահանջներին, հրաժարվել էր Հայոց եկեղեցու որոշ ծեսերից ու ավանդույթներին, ընդունել պապի գերիշխանությունը և այլն: Անհեռատես ու վնասակար այս քաղաքականության գործունյա պաշտպաններից մեկը դառնալով, Մործորեցի վարդապետը, սակայն, բնավ չէր մտածում լուծարքի ենթարկել Հայոց եկեղեցու հինավուրց կազմակերպությունը, դարձնելով այն սոսկ հոռմեական եկեղեցու կամազուրկ կցորդը: Նա ջատագով էր ավելի ճկուն ու զգուշավոր քաղաքականության: Այդ մասին որոշակի տվյալներ է ունեցել Մ. Չամչյանը: Անդրադառնալով Սյունյաց մետրոպոլիտ Հովհան Թրբելի և Զաքարիա Մործորեցու սլաքարի դրվագներին, նա հայտնում է, որ Արտազի եպիսկոպոսը, հետևելով Հովհաննես Մործորեցու հորդորներին, ի վերջո համոզվել է, որ հնարավոր չէ ընդառաջել կաթոլիկ եկեղեցու բոլոր պահանջներին, ուստի որդեգրել է ավելի զգուշավոր մի գործելակերպ. «Զայս թուղթ Որպէլի առեալ Զաքարիայ,—կարդում ենք Չամչյանի մոտ,—թէպէտ և ինչ ոչ անսաց նմա, բայց ըստ խորհրդոյ Յովհաննու վարդապետի Մործորեցոյ՝ որ էր առ նմա՝ սկսաւ այնուհետեւ զգաստութեամբ վարիլ առ արտաքս, զգուշացեալ յՈրպէլէ և յայլոց. քանզի ետես և ինքն, թէ անհնարին իմն էր միահաղոյն յայտնի կատարել զամենայն զոր կամէր կաթողիկոսն»⁹⁶:

1316—1325 թթ. գիտա-մանկավարժական աշխույժ գործունեությունից հետո Հովհաննես Մործորեցին կարծես շրվում է ասպարեզից: Ոմանք ենթադրել են, թե նա կնքել է իր մահկանացուն 1326 թվականին, հավանաբար ելնելով այն փաստից, որ նրա կողմից շարադրված հիշատակարանների մեջ նշված վերջին տարեթիվը 1325-ն է⁹⁷: Հայտնվել են նաև այլ կարծիքներ⁹⁸: Մործորեցու մահվան ճշգրիտ թվականն այսօր էլ անհայտ է մնում, բայց վերջերս գիտական շրջանառության մեջ դրված մի հիշատակարան հնարավորություն է ընձեռում նոր լույս սփռել նրա կյանքի վերջին շրջանի վրա: Մործորեցու մեզ արդեն ծանոթ աշակերտներից Իսրայել բաբունին 1337 թ. Արտազի զավառում, հավանաբար հենց Մործորի վանքում, ընդօրինակել է տվել արժեքավոր նյութերի մի ժողովածու, որի մեջ կենտրոնական տեղ է զբաղում Պետրոս Արագոնացու աշխատասիրությամբ հայացված «Գիրք դատաստանաց»-ը⁹⁹: Զեռագրիս հիշատակարանում այս Իսրայելի մասին ասված է, որ «Աս անեալ և վարժեալ եղև առ ոտս ամենապարկեշտ ծերունւոյն և մաքրամիտ բաբունայեալին՝ որ մականուն Մործորեցի, և որ դաստիարակեալ զսա յիրկեղն աստուծոյ և ի պաշտօն եկեղեցւոյ բազում աշխատութեամբ և խնամօք փոյթ ա-

96 Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, հատ. Գ, Վենետիկ, 1786, էջ 308:

97 Այս թվականին է մաքրագրվել ու շրջանառության մեջ դրվել Թ. Աբովինացու «Գիրք խորհրդոց եկեղեցւոյ» աշխատության Հ. Մործորեցու թարգմանությունը:

98 Պատշաճ է այստեղ ծանոթանալ այս հարցի մասին Ա. Սրապյանի ուսումնասիրության մեջ առկա տողերին. «Ղ. Ալիշանը և Գ. Զարպանալյանը (Հովհ. Նրզնկացուն) համարել են մահացած 1326 թվականին, Մ. Պետրոսյանն ու Ա. Զամինյանը՝ 1332-ին: Ա. Զոպանյանը՝ 1330-ին կամ 1340-ին և այլն: Հ. Քյուրտյանը հավանական է համարում 1325—1326 թվականները» (նշվ. աշխ., էջ 31):

99 «Գիրք դատաստանաց և կանոնաց թարգմանեալ ի լաթին լեզուէ ի հայ բարբառ նպատաւորութեամբ Յրա Պետրոսի ի կարգէ Դամինիկոսի, միջնորդութեամբ Առաքել վարդապետի ի մերս զարմէ՝ նոցին զպրութեան հետեղի» (Զմմատի վանքի մատենադարան, ձեռ. № 251, էջ 290բ):

րարեալ վասն սորա, մինչև յարբունս կատարելութեան հասուցեալ, զոր ըստ վաստակոցն և աշխատութեան նորա տէր հատուցէ յերանաւէտ կեանսն»¹⁰⁰:

Կասկած չի կարող լինել, որ «ամենապարկեշտ ծերունի» կոչված Մործորեցի րարունապետը այս հիշատակարանի գրութեան ժամանակ, այսինքն 1337-ին դեռ կենդանի էր, բայց համրում էր իր կյանքի վերջին օրերը. ըստ այդմ նա կյանքից հեռացած պետք է լինի հավանաբար 1338 թվականին:

4. Մործորի դպրոցը Հովհաննեսից հետո. — Հովհաննես Մործորեցուց հետո խամրում է նրա ծավալած գիտա-մանկավարժական աշխատանքի շնորհիվ համբավ ձեռք բերած ուսումնական հաստատությունը: Բայց շարունակում է իր գոյությունը ևս մի քանի տասնամյակ: Հավանաբար դեռևս Հովհաննես րարունապետի կենդանության օրոք Մործորի վանք էր տեղափոխվել Ֆրանցիսկյան միաբանության անդամ Ֆրա Պոնցիուս կոչված վարդապետը¹⁰¹, որ ճանաչված էր որպես իմաստուն մի մարդ՝ «յոյժ հմուտ հայոց գրոյն»: «Քաջ րարունապետի» համբավ ձեռք բերած եվրոպացի այս քարոզիչը Մործորի վանքում զբաղվել է գիտա-մանկավարժական աշխատանքով, թարգմանել է մի շարք երկեր, օգնական ունենալով Իսրայել վարդապետին:

Նրա թարգմանած գործերից մեզ հայտնի են հետևյալները.

Մեկնութիւն սրբոյ աւետարանին, որ ըստ Յովհաննու... արաբեալ մեծ վարդապետին Նիկոլայոսի Լիւրացոյ:

Նշանավոր աստվածաբան ու քարոզիչ, Ֆրանցիսկյան միաբանության անդամ Նիկողայոս Լյուրացին կամ Լիրան (մհ. 1340 թ.) գրավել է Մործորում գործող գրագետների սեեռուն ուշադրությունը: Մագումով հրեա այս աստվածաբանը գրել էր հին և նոր կտակարանի բոլոր գրքերի մեկնություններ՝ լայնորեն օգտագործելով հրեական գրականության տվյալները: Նրա զբովածքները մի քանի դար շարունակ կաթոլիկ աշխարհում ճանաչված էին որպես անգերազանցելի ձեռնարկներ: Եվ ահա 1341 թվականից մի քանի տարի առաջ, այսինքն հեղինակի կենդանության օրոք¹⁰² Զաքարիա Խաթիսկոպոսի հանձնարարությամբ և Իսրայել վարդապետի աջակցությամբ Ֆրա Պոնցիուսը հայերեն է թարգմանում Լիրայի «Մեկնութիւն սրբոյ աւետարանին, որ ըստ Յովհաննու» ծավալուն աշխատությունը:

Այս թարգմանության ձեռագրերից մեզ հայտնի են երեքը. մեկը մեր մատենադարանի № 6903 ձեռագիրն է, արտագրված Նորավանքում, Ղուկաս գրչի

¹⁰⁰ ԽԵԱՐԱՅ վրդ. Քեչիշյան, Յուցակ, էջ 579:

¹⁰¹ Ֆրանցիսկյան այս վարդապետի անունը հայերեն ձեռագրերում տառադարձված ենք գտնում Պօնցիոս, Պօնցիուս, Պօնցի, Ապօնց այլազան ձևերով: Հավանաբար Bonifacius անվան համառոտությունն է, կամ էլ Boëtius-ի աղճատ ձևը: Պոնցիուսն ըստ երևույթին, Արապոնացի է եղել. այդպես ենք կարծում հաշվի առնելով այն փաստը, որ «Յովհաննու աւետարանի մեկնութեան» սրա կատարած թարգմանության ձեռագրերից մեկում, որ դարիս սկզբներին խիստ բարձրված վիճակում պահվելիս է եղել Տաթևի վանքում, տվյալ է եղել թարգմանչի Արապոնացի լինելու մասին (Ս. Եզանյան, Տաթևի գրատան ձեռագրերը, «Բանբեր Մատենադարանի», № 9, էջ 423):

¹⁰² Մատենադարանի № 6903 ձեռագիրը ասացինք, որ ընդօրինակված է 1341 թ., Ղուկաս գրչի կողմից, Նորավանքում: Այդ փաստից դժվար չէ հետևել, որ թարգմանությունը կատարվել է 1341-ից առնվազն 2—3 տարի առաջ: Այդքան, դուցե և ավելի ժամանակ էր հարկավոր թարգմանության օրինակներից մեկը Արտազի ունիթորական միջավայրից դուրս բերելու, Սյունիք փոխադրելու և ընդօրինակելու համար:

կողմից 1341 թ.¹⁰³, մյուս ձեռագիրը Մատենադարան է մուտք գործել վերջերս ու գրանցվել 10539 համարի տակ, իսկ վերջինը՝ Երուսաղեմի № 789 ձեռագիրն է, որ շնայած ուշ ժամանակի ընդօրինակություն է (1740 թ.), բայց արժեքավոր է ամբողջական ու լրիվ լինելով: Այս երեք ձեռագրերի մեջ առկա տվյալների համադրությամբ ստորև տալիս ենք քննարկվող բնագրի խորագիրը, հիշատակարանը և միջին մասերում եղած ընծայական պարբերությունը, որի մեջ կարևոր տվյալներ կան Զաքարիա եպիսկոպոսի և նրա ազգակիցների մասին:

Ամբողջական խորագիրն է.

«Մեկնութիւն սրբոյ աւետարանին որ ըստ Յովհաննու, ի խնդրոյ և ի հարկեցուցիչ հրամանէ արհիական գլխոյն և մեծ դիտապետին տէր Զաքարիայի՝ սպասաւորի սուրբ առաքելոյն Թադեոսի, Թարգմանեալ ի լատին գրոց ի մերս բարբառ, արարեալ մեծ վարդապետին Նիկողայոսի Լիրացոյ, որ ի կարգէ սրբոյն Ֆրանչիսկոսի»¹⁰⁴:

Թարգմանության մասին պահպանվել են այսպիսի հիշատակագրություններ.

ա. «Կատարեցաւ մեկնութիւն, որ ըստ աւետարանին Յոհանու ի վերայ բնաբանիս ի ձեռն վսեմախոհ վարդապետի Ֆրա Պօնցի և քերթելով քաջ հռետորի Իսրայէլի. որք ընթեռնութեամբ և կամ օրինակէք յիշեցէք յաղօթս»:

բ. «Արդ, Թարգմանեցաւ գիրքս այս ի լատին լեզուէ ի հայս հրամանաւ մեծ դիտապետին և արհիական գլխոյն, աթոռակալի սուրբ առաքելոյն Թադեոսի արժանաւոր եպիսկոպոսի տէր Զաքարիայի, զոր բազում ըղձիք և սիրայեղձ փափազանօք Թարգմանեալ ետ զսա ի նեղ և ի դառն ժամանակի, ի լուսաւորութիւն Հայաստանեայցս եկեղեցոյ և խրախութիւն և ի վայելումն մանկանց Սիոնի, զոր Թարգմանեաց քաջ բարունապետն Ֆրա Պօնցիուս կոչեցեալ, միջնորդելով վարդապետին Իսրայէլի»¹⁰⁵:

Բուն մեկնությունը օժտված է նախադրությամբ, որի վերջում Թարգմանիչ Ֆրա Պոնցիուսը կամ նրա հայ գործակից Իսրայել բարունին՝ Զաքարիա Մործորեցու գովքն է հյուսում, նրա անունն ստուգաբանելով «յիշող տեառն» կամ «օգնութիւն տեառն» բառերով: «Օգնութիւն տեառն,—գրում է նա,—վասն առատամիտ և մշտաձիր տրոցն, որ առ աղքատս և կարօտեալս, որք են անդամք Քրիստոսի և վասն պահպանութեան և խնամակալութեան իւրոցն հնազանդելոց». այստեղ մեծարվում է պարոնտեր Զաքարիան, շեշտվում նրա ոչ միայն հոգևոր, այլև աշխարհիկ ավատատեր լինելու հանգամանքը: Այնուհետև ներբողյան հիշեցնող այս հատվածի հեղինակը փորձում է որոշել իր մեկենասի բացառիկ տեղը հայ եկեղեցու պատմության մեջ, նրա գործունեու-

103 Ձեռագիրը մինչև առաջին աշխարհամարտի դժնդակ տարիները պահվելիս է եղել Դարաշամբի Ս. Ստեփանոս Նախավկայի վանքում՝ անաղարտ վիճակում, վերջում ունենալով հիշատակարան Թարգմանության և ընդօրինակության հանգամանքների մասին: Մաքատ Տեր-Ավետիսյանը 1904 թ. նկարագրել է ձեռագիրը և արտագրել 424ա—424բ էջի վրա եղած հիշատակարանը: Ձեռագիրը հետագայում տարվել է Քավրիդ, զրկվել սկզբի ու վերջի թերթերից և այդպես թղկտված վիճակով բերվել Մատենադարան:

104 Խորագիրը տրվում է ըստ մատենադարանի № 10539 ձեռագրի:

105 Ս. Տեր-Ավետիսյան, Ձեռագիրը նախավկայի վանաց Դարաշամբի Ս. Ստեփանոս, որ ի Գողթն (Յուցական այժմ պահվում է Մաշտոցի անվան մատենադարանի անտիպ ձեռագրացուցակների հավաքածուում):

թյունն անմիջապես շաղկապելով Թաղեոս առաքյալի և Գրիգոր Լուսավորչի հետ: Լուսավորիչը՝ Թաղեոս առաքյալի «որդիացեալը»՝ «ընդարձակեալ տարածեաց» ճշմարիտ հավատը Հայաստանում, — գրում է նա, — իսկ Զաքարիան այդ «ճշմարիտ հավատի» (այսինքն կաթողիկ դավանանքի) պայծառացնողն է նոր ժամանակներում, ուստի որդին է հենց Գրիգոր Լուսավորչի¹⁰⁶:

Այս փառաբանությունները ծլարձակում են պարարտ այն հողի վրա, որ ներբողյանի հեղինակը հակիրճ բնորոշել է այսպիսի տողերով. «Տէրս Զաքարիա զինքն նուստ և հնազանդ ունի և հրամանակատար յաջորդին Պետրոսի»¹⁰⁷:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում № 10539 ձեռագրի մի մանրանկարը, որի արժեքն ավելի նշանակալից կլիներ, եթե տվյալներ լինեին պարզելու, որ այն արտագրված է թարգմանական սույն բնագրի նախօրինակից: Այստեղ, էջմիածնի մայր տաճարի ֆոնի վրա, նկարված է Թաղեոս առաքյալը՝ նստած դիրքով. մեկ ձեռքին զավազան, մյուսին՝ ավետարան. Ս. սեղանի մի կողմում Գր. Լուսավորիչն է, նույնպես նստած և զավազան ու ավետարան բռնած: Մի վեղարավոր նրա բոսիկ ոտքն է համբուրում, իսկ գահի հտնամասում կանգնած են երեք այլ հոգևորականներ. սեղանի առջև ծնրադիր աղոթում է կաթողիկոսական ղզեստավորում և կարմիր վեղար ունեցող մի կղերական, որ հավանաբար Զաքարիա արքեպիսկոպոսն է, նրա մոտ կանգնած են երկու վեղարավորներ: Նկարված է նաև լատինացի մի վարդապետ, որ երկրպագում է արքեպիսկոպոսին (սրա պատկերի վերին մասում գրված է «Պատկերս լատինացւոց վարդապետին է, որ արարեալ է գիրքս»): Ըստ այդմ կարող է Ֆրա Պոնցիուսի նկարը լինել): Բացի այդ, զանգակատնից ներքև մի խուց է նկարված, որի մեջ՝ մի վարդապետ, կից ունենալով այսպիսի մականգրություն. «վարդապետ մի տեսի ի մէջ պատուհանին, նստում է և կարդում է»¹⁰⁸:

Ֆրա Պոնցիուսի ջանքերով թարգմանված է նաև Լյուրացու մեկնություններից մեկ ուրիշը՝ «Մեկնութիւն քղբոյն Պօղոսի, որ առ Երաչեցիսն... Նիկոլայոսի Լիւրացոյն»: Այս աշխատության ընդարձակ խորագրի վերջում բառացի ասված է, որ թարգմանությունը կատարվել է «ի ձեռն վսեմախոհ վարդապետի Ֆրա Պօնցի, լադին լեզուէ ի հայս»¹⁰⁹:

Պոնցիուսի աշխատասիրությամբ թարգմանված մյուս երկը Ֆրանցիսկյանների մեծ գաղափարախոս Բոնավենտուրայի (1221—1274) գրած սուրբ Ֆրանցիսկոսի վարքն է, «Մեծի կառղիմաբին և անյախք վառդապետին սուրբ Եկեղեցոյն Հոռմա Բոնավենդուրէ վասն վառուց սրբոյն Ֆրանցիսկոսի»:

106 Բառացի ասված է այսպես. «Զոր և զճշմարտութիւն այսմ հաւատոյս որդիացեալն նմա (Թաղէոսի առաքելոյն) Լուսաւորիչն սուրբ Գրիգորիոս ընդարձակեալ տարածեաց, ընդ որս և զայն հաւատոյ ճշմարտութիւն և զամենայն բարեկարգութեան ուղղութիւն ի վերջին դարս և լետին ժամանակս տէրս մեր Զաքարիաս երկաջան վաստակօք նորոգեալ պայծառացոյց: Եւ զի սուրբն Գրիգոր կոչի որդի սուրբ առաքելոյն Թաղէոսի՝ վասն հետեման նորին, նմանապէս և տէրս մեր Զաքարիաս առձայնի որդի սրբոյն Գրիգորի» (Նրուաղեմ, ձեռ. № 789, էջ 148):

107 Նույն տեղում, էջ 149:

108 Տե՛ս Մատենադարան, ձեռ. № 10539, էջ 2 ր:

109 Մատենադարան, ձեռ. № 1412, էջ 2ա—75բ (նույնն է նաև սրանից ընդօրինակված № 1411 ձեռագիրը):

խորագրով: Դրա հիշատակարանում կարդում ենք. «Թվ. 22Ը (1339) թարգմանեցաւ] ձեռամբ Ապօնցի Ֆրա մնուրի»¹¹⁰:

Բացի մեկնողական երկերից, Ֆրա Պոնցիուսը թարգմանել է նաև ծիսական մատյաններ, որոնցից հայտնի է «Գիրք պատարագի» կոչվածը: 1381 թ. Բոլոնիայում իրականացվել է այս թարգմանության մի ընդօրինակություն, որի հիշատակարանում կարևոր տվյալներ կան գրանցված թարգմանչի մասին. «Որ էր թարգմանած ի լաթին գրոյն ի հայկաշղան բառս մեր, զոր բացատրեալ էր և մեկնեալ Ֆրա Պօնցիոսն՝ ի կարգէն սրբոյն Ֆրանցիսկոսի՝ իմաստուն վարդապետ և յոյժ հմուտ հայոց գրոյն»¹¹¹:

Այսպիսով, Հովհաննես Մործորեցու, Ֆրա Պոնցիուսի և նրանց գործընկերների ջանքերով Մործորի բարձրագույն դպրոցը XIV դարի առաջին հիսնամյակում գիտա-մանկավարժական աշխատանքների կարևոր միջավայր դարձավ: Հատկապես նշանակալից եղավ ուսումնա-գիտական այդ հաստատության դերը եվրոպական սքոլաստիկայի կարկառուն ներկայացուցիչների՝ Նիկողայոս Լյուրացու, Թովմա Աքվինացու, Բոնավենտուրայի և այլ հեղինակների կարևոր երկերի հայերեն թարգմանություններն իրականացնելու մարդում:

Դպրոցի մայրամուտն սկսվեց 1340-ական թվականներից. դոմինիկյան բարոզիչները, որ հաստատվել էին Քոնայում և ստեղծել իրենց բարձրագույն դպրոցը, շուտով կարողանում են իրենց շուրջ համախմբել կաթոլիկության հակված բոլոր հայ գործիչներին, որոնց թվում նաև ֆրանցիսկյանների ազդեցության տակ գտնվող ծործորեցիներին: Ֆրա Պոնցիուսից հետո այդ դպրոցը գրեթե դադարում է գիտա-մանկավարժական մտքի կենտրոն լինելուց: Մեծ հավանականությամբ Քոնա են տեղափոխվում Մործորի դպրոցի վարդապետները՝ Իսրայել րաբունին և ուրիշներ, ինչպես և դպրոցի շուրջ համախմբված աշակերտների մեծ մասը: Որոշ ժամանակ Արտագի շրջանի հայ կաթոլիկների մշակութային գործունեության կենտրոն է դառնում Մակու գյուղաքաղաքը՝ հայ իշխանների նստոցը՝ Սուրբ Աստվածածնի անվան իր մենաստանով: Այստեղ՝ «ի մենաստանիս ի Մակու, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի» XIV դարի 80-ական թվականներին գործում է «իմաստուն հոռոր» կոչված Կարապետ րաբունապետը, օգնական ունենալով Մատթեոս անունով մի վարդապետի¹¹²: Մեկ տասնամյակ հետո՝ 1392 թ., նույն Մակու գյուղաքաղաքում որպես րաբունապետ հիշատակվում է արդեն վերահիշյալ Մատթեոսը, իսկ 1406 թվականին՝ Մխիթարիչ րաբունապետը¹¹³: Սրանց մանկավարժական և մատենագրական աշխատանքների մասին տեղեկությունները պակասում են: Հայտնի է, որ նույն այս տարիներին Մակվի անառիկ բերդում ապահով պահելու համար Սսից բերում են 50 լիտր ձեռագիր մատյաններ, բայտ երևույթին դրանց մեջ կային նաև միաբարակա շարժման հետ առնչվող գրքեր ու գիվանական փաստաթղթեր¹¹⁴:

¹¹⁰ Մատենադարան, ձեռ. № 1736, էջ 141ա:

¹¹¹ M. A. Oudenrijn, Նշվ. աշխ., էջ 256—257:

¹¹² Սրանց հանձնարարությամբ 1383 թ. այստեղ իրեն «սպասաւոր բանի» կոչող Սարգիսը ընդօրինակում է Բարթոլոմեոս Մարաղացու Քարոզգիրքը (տե՛ս Մատենադարան, ձեռ. № 2259, էջ 297բ, «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 545):

¹¹³ «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա, Երևան, 1955, էջ 61:

¹¹⁴ «Հայագատում», Ա, էջ 123:

Մակվի հայ կաթողիկոսների գիտա-մանկավարժական գործունեության մասին առկա տվյալներն ամբողջացնելու համար անհրաժեշտ է նշել, որ Մործորի վանքը որպես վանական հաստատություն գոյություն է ունեցել ընդհուպ մինչև XVII դարի վերջերը: Այլ առիթով նշել ենք արդեն, որ իրեն Մործորեցի էր կոչում Գրիգոր անունով կաթողիկոսն՝ վարդապետը, որ 1670-ական թվականներին թարգմանություններ է կատարել, տաղեր ու կրոնական երգեր հորինել: Մործորի անվան վերջին այս հիշատակությամբ էլ ավարտվում են մեր գիտելիքները միջնադարյան Հայաստանի մշակութային այս հաստատության մասին: Վանքի ավերակները այսօր էլ կանգուն են Մակվի շրջանի Բարոն գյուղից հարավ:

* * *

Արտազի հայկական իշխանության ու նրա մշակութային կենտրոնի պատմությունը նվիրված այս ակնարկին վերջակետ դնելուց առաջ եզրափակիչ խոսքի կարիք է զգացվում:

Հայոց պատմության Արշակունյաց և մարզպանական ժամանակաշրջաններում կենտրոնական դիրք զբաղող Արտազի գավառում, երկարատև ընդմիջումից հետո, XIII դարի կեսերին վերականգնվում է հայկական կիսանկախ իշխանությունը: Արտազի հոգևոր և աշխարհիկ ավատատերերը, գլխավորությամբ Թադևոս առաքյալի նորաստեղծ եկեղեցական թեմի պարոնտեր-կախկոպոսների, կարողանում են ի շահ իրենց գերդաստանի օգտագործել մոնղոլների և Կիլիկյան հայկական թագավորության միջև կնքված դաշնագրով քրիստոնյա եկեղեցիների նկատմամբ մոնղոլների կողմից խոստացված բարյացակամ կեցվածքը: Ընդառաջելով կիլիկյան հայ արքունիքի և կաթողիկոսարանի եվրոպական կողմնորոշմանն ու լատինամետ քաղաքականությանը, Արտազի հայ իշխողները դառնում են հայ ժողովրդի ազատագրական իղձերի իրականացման առումով վնասակար ու անհեռատես այդ քաղաքականության կամակատարները Մեծ Հայքում, և քայլ առ քայլ զիջումներ կատարելով, ի վերջո դավաճանում են ազգային ավանդություններին և ընդունում կաթողիկ եկեղեցու դավանանքը:

Նրանց մշակութային կենտրոնը դարձած Մործորի վանքում, Հովհաննես Մործորեցի բարունապետի ու նրա հետևորդների ջանքերով, զրվում են հայ ունիթորական գրականության հիմնաքարերը, լատիներենից հայերեն են թարգմանվում Նիկողայոս Լյուրացու, Թովմա Աբվինացու, Բոնավենտուրայի և այլ հեղինակների մի շարք երկեր, ստեղծվում են ինքնուրույն աշխատություններ՝ ի պաշտպանություն կաթողիկ եկեղեցու դավանաբանական սկզբունքների:

Մեծ Հայքի աշխարհիկ ու հոգևոր տերերը, միասնական ճակատ ստեղծելով, անհաշտ պայքար են ծավալում ինչպես հայ ունիթորների, այնպես էլ եվրոպայից Արևելք առաքվող կաթողիկ քարոզիչների դեմ՝ ի դեմս ազգային հնամենի ավանդություններին կառչած հայոց եկեղեցու տեսնելով ազատագրական պայքարի դժվարին ճանապարհն ընտրած ժողովրդի համախմբմանը սատարող մի կազմակերպություն:

Արտազի հայ տերերի անհեռատես քաղաքականության դեմ ծավալված պայքարը, որ զլխավորում էին Սյունյաց հոգևոր ու աշխարհիկ առաջնորդները, տասնամյակներ է տևում: Թադևոս առաքյալի մեծ թեմի առաջնորդական

պաշտոնը բռնադրավում է Արտազի կաթողիկ տերերի գերդաստանից. նրանց հոգևոր իշխանությունը սահմանափակվում է միայն Մակվի շրջակայքով, տարածվելով միայն կաթողիկ դավանանք ընդունած հայերի վրա: Օտար բռնակալների դեմ մղված անհավասար մարտերում չլատվում է նաև Արտազի հայ իշխանների ռազմական ուժը: Ապավինելով Մակվի ամրություններին, նրանք հաջողությամբ վանում են շատ զորեղ թշնամիների ձեռնարկած գրոհներ (ի թիվս որոց նաև Լանկ-Թամուրի հրոսակներին), բայց ի վերջո, կորցնելով իրենց տիրույթի ծայրագավառները, նրանք ամփոփվում են Բերդադաշտի տարածության մեջ, և կորցնում իրենց քաղաքական իշխանության վերջին պատվար Մակվի բերդը՝ 1326 թվականին:

Արտազի շրջանի կաթողիկ դարձած հայ բնակչությունը, կտրված ազգային ավանդություններից և հայրենի մշակույթի հետ ունեցած կապերից, արմատախիլ ծառի նման՝ թռչնում է ու չորանում: Այդ համայնքի խղճուկ մնացորդները XVII դարի վերջերին մահմեդականություն են ընդունում, մի ավելորդ անգամ հաստատելով այն ճշմարտությունը, որ «ծառ արմատով է ծառ, տուն հիմամբ է տուն»:

Л. С. ХАЧИКЯН

АРТАЗСКОЕ АРМЯНСКОЕ КНЯЖЕСТВО И ЦОРЦОРСКАЯ ШКОЛА

(Р е з ю м е)

В середине XIII в. в Артазской области Васпуракана восстанавливается монастырь апостола Фаддея (Тадеоса), создается новая армянская епархия, границы которой охватывают ряд районов Васпуракана и Персармении, а также столицу ильханства Тавриз. Армянскому феодальному роду, дававшему епископов для этой епархии, удается до 20-х годов XIV в. овладеть всем Артазом и, сосредоточив в своих руках как духовную, так и светскую власть над этой областью, играть видную роль в политической и культурной жизни Армении.

Автор статьи вводит в научный обиход новые материалы и на их основе показывает, что армянские епископы Артаза, в особенности архиепископ Закария (1298—1347 гг.), становятся в центральной Армении приверженцами политики сближения с латинской церковью, проводимой армянскими католикосами в Киликии и, шаг за шагом делая уступки католической церкви, в конечном итоге отступают от национальных традиций и становятся исполнителями воли латинских миссионеров, распространявших католичество в восточных странах.

В статье показано, что Артазское княжество просуществовало вплоть до 1426 года, когда Искандар Кара-коюнлу захватывает у армянских князей, уже принявших католичество, их крепость Маку.

Вторая часть статьи посвящена истории Цорцорского монастыря, ставшего культурным центром армянского Артазского княжества. Приведены данные, касающиеся научной деятельности Закария и Ованнеса

Цорцореци, и показана роль Цорцорской школы в переводе на армянский язык целого ряда произведений выдающихся представителей европейской схоластики — Фомы Аквинского, Николая Лиры, Бонавентуры и др.

L. S. KHATCHIKIAN

LA PRINCIPAUTÉ ARMÉNIENNE D'ARTAZ ET L'ÉCOLE DE TSORTSOR

(Résumé)

Au milieu du XIII siècle le monastère de l'Apôtre Thaddée (Thad-eos) de la région d'Artaz du Vaspourakan fut restauré et un nouveau diocèse fut créé, dont les frontières comprenaient un certain nombre de provinces du Vaspourakan et de l'Arménie Persane, ainsi que Tauris, la capitale de l'ilkhanie. Dans les années 20 du XIV siècle la maison féodale arménienne d'où sortaient les évêques de ce diocèse, réussit à s'emparer de tout l'Artaz, à concentrer dans ses mains le pouvoir spirituel et laïc et à jouer un rôle important dans la vie politique et culturelle de l'Arménie.

L'auteur de l'article fait connaître au monde scientifique des documents nouveaux et s'y appuie pour montrer que les évêques arméniens d'Artaz et surtout l'archevêque Zakharie (1298—1347) deviennent en Arménie centrale les partisans de la politique de rapprochement avec l'Eglise latine que menaient les catholicos arméniens de Cilicie et en faisant graduellement des concessions à l'Eglise latine en arrivent enfin à renoncer aux traditions nationales et deviennent les exécuteurs de la volonté des missionnaires latins qui propageaient le catholicisme dans les pays orientaux.

L'article montre que la principauté d'Artaz exista jusqu'en 1426, quand Iskandar Kara-Kouyolou conquiert la forteresse de Makou des princes arméniens devenus déjà catholiques.

La seconde partie de l'article est consacrée à l'histoire du monastère de Tsortsor qui devint le centre culturel de la principauté arménienne d'Artaz. Des données concernant l'activité scientifique de Zakharie et de Hovhannes Tsortsoretsi sont citées qui montrent le rôle de l'école de Tsortsor dans la traduction en arménien des ouvrages de représentants éminents de la scholastique européenne. Thomas d'Aquin, Nicolas de Lyra, Bonaventure, etc.